

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

26.427

334.63

7-24

1925

Պատկերաբաներ բույսերի և կենդանիների միացե՛լ.

«ՀԱՅԳՅՈՒՂԿՈՈՊ» Ի ԳՐԱԴԱՐԱՆ № 1

334.63  
3-24

**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի**  
**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ**  
**ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ**



2007

26427

05 .06. 2013




20452-59

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏՐԵՍԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրանից. 215բ.

Պատ. 504

Տիր. 750



«ԵՂԵՅԱՆ ԿՈՍՏՅՈՒՆԿՆԵՐՆԵՐ»

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻՈՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՆԻՍՏ.

1924 թ. սեպտեմբերի 20-ի, (շաբաթ, յերեկոյան ժ. 4-ին)

Համագումարը բացում է Գյուղատնտեսական Կոոպերացիայի Վարչութեան նախագահ ընկ. ՅԵՐԵՄ ՄԵԼԻՔԸ՝

ՄԵԼԻՔ.—Ընկերներ, Հայաստանի Գյուղատնտեսական Կոոպերացիայի անդրանիկ համագումարը հայտարարում եմ բացված վոլջույնի համար խոսք արվում է Հայաստանի Կոմունիստական կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեի քարտուղար ընկ. Աշոտ Հովհաննիսյանին (բունն ծափեր, նվագում է Ինտերնացիոնալ) :

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.—Ընկերներ, դուք բոլորդ գիտեք մեր կուսակցութեան վերաբերմունքը դեպի կոոպերացիան: Ինք բոլորդ գիտեք, վոր կոոպերացիան այն խոշորագույն գործն է, վորի հաջողութեան հետ, մեր կուսակցութեանը խոշոր շափով կապում է մեր յերկրի ընդհանուր շինարարութեան հաջողութեանը: Իննի վերջին պատգամը կոոպերատիվի շինարարութեան մասին՝ այդ պատգամն է, վոր դեկավարում է այսօր մեր շինարարութեանը կոոպերացիայի բնագավառում: Մեր կուսակցութեանը պայմանավորում էր իր աշխատանքը գյուղի և քաղաքի այն շաղկապով, վորը կապում է հեղափոխութեան հենարանը և միաժամանակ յերաշխիք է նրա հաջողութեան: Այդ շաղկապը կարող է լինել քաղաքական և սոցիալական բյուր գործուն, յեթև ունեւա տնտեսական ամուր վոլջույն: Կոոպերացիան, վոր նպատակ ունի ողակել գյուղի և քաղաքի աշխատավոր մասսաները և ճատնավորապես Գյուղատնտեսական Կոոպերացիան՝ առաջնակարգ դեր ունի կատարելու գյուղացիութեան և բանավորութեան տնտեսական շաղկապը ամբողջութեամբ տեսակետից: Գյուղատնտեսական Կոոպերացիան ամենախոշոր մի գործուն է մեր յերկրի արտադրական ուժերը զարգացնելու համար: Այն պիտի դառնա մի գորեղ նախադրյալ հեղափոխական մեր պայքարի համար: Ինչ ձևով կարող ենք պայքար մղել գյուղում կուլակների դեմ, յեթև



վոչ տնտեսական մեր ուժերի հավաքման ճանապարհով: Գյուղա-  
կան մանր տնտեսութիւնների կոոպերացումը մի խոշոր գեներ է,  
վորի միջոցով մենք ամբացնում ենք չքավոր և միջակ գյուղա-  
ցիւնների դասակարգային դերքը ընդգեմ կուլակների և գյուղի ու  
քաղաքի շահագործող մյուս տարրերին: Խորհրդային իշխանու-  
թիւնը այս հանգամանքը շատ լավ է հասկանում և դրա համար է,  
վոր նա իրավական և տնտեսական աջակցութիւն է ցույց տալիս  
գյուղացիական մասսաների կոոպերացման: Դրա համար է, վոր  
մեծ աջակցութիւն է ցույց տալիս Գյուղատնտեսական կոոպե-  
րացիան և մեր կուսակցական օրգանները: Այդ աշխատանքը տա-  
նելու համար կուսակցութիւնը տրամադրում է իր կազմակերպ-  
չական ուժերը, ագիտացիայի միջոցով պարզաբանում է և ծավա-  
լում կոոպերացիայի գործը և վերջապես ղեկավարում է իդեա-  
պես՝ կոոպերատիվ շինարարութիւնը:

Իավական չէ, սակայն ընկերներ, վոր կոմունիստական կու-  
սակցութեան մտահոգութեան առարկա դառնա գյուղի կոոպերա-  
ցումը, այլ անհրաժեշտ է, վոր կոոպերացման յենթարկվածներն  
իրենց հերթին գիտակցեն իրենց քաղաքական դերը, իրենց աշ-  
խատանքների սոցիալական արժեքը՝ ընթացիկ մեր պայքարի ժա-  
մանակ: Կոոպերացիան պիտի աչքի առաջ ունենա հեղափոխա-  
կան իր հեռանկարները: Ի հարկե յուրաքանչյուր մեկը, վոր ան-  
դամագրվում է կոոպերատիվ կազմակերպութեան, պետք է ունե-  
նա անհատական շահագործութիւն և ոգուտ: Առանց այդ ոգու-  
տի և շահագործութեան կոոպերացիան չի կարող լինել կենսու-  
նակ կազմակերպութիւն: Սակայն մեր աշխատավոր տարրերի  
անհատական ոգուտը-չահը կապահովվի միայն այն ժամանակ,  
յերբ ապահովված է հավաքական աշխատանքը, հավաքական  
չահը: Երբ կոոպերացիայի հետև կանգնած է Խորհրդային իշխա-  
նութիւնը, յերբ իրավ կոոպերացիան իրեն հեռանկարն ունենա  
այն սոցիալիզմը, վորի համար մենք պայքարում ենք: Ընկեր-  
ներ, այդ հեռանկարի համար միայն մեր կուսակցութիւնն է,  
վոր վարում է ախտիվ պայքար: Խորհրդային իշխանութիւնը  
մեր կուսակցութեան ղեկավարութեամբ արձանագրել կարող է  
մեր պայքարի ներքին և արտաքին Ֆրոնտներում մի շարք հաջո-  
ղութիւններ: Խորհրդային Միութիւնը դառնում է համաշխար-  
հային քաղաքականութեան ամենախոշոր գործոն: Սակայն վոչ  
մի բոլոր չի կարելի աչքաթող անել նաև մեր գործի դժվարու-  
թիւնը, այն վտանգը, վոր կա և սպառնում է մեզ ամեն օր: Հե-

ղափոխութիւնն ունի անհաշտ հակառակորդներ, վորոնք չեն  
դադարում նորանոր դավեր նյութել նրա դեմ: Պետք է գիտակ-  
ցենք այդ և հանգիստ չառնենք նվաճած հաջողութիւնների վրա:  
Անգլիայում բուրժուական մամուլը արշավանք է սկսել այն դաշ-  
նագրի դեմ, վորը մենք կնքել ենք անգլիական բանվորական կա-  
ռավարութեան հետ: Անգլիական բուրժուական մտադրութիւն  
ունի նորանոր դժվարութիւններ հարուցել մեր առաջ, կամ թե  
նապալել բանվորական կառավարութիւնը: Չինաստանում յեվ-  
րոպական իմպերիալիստները դավեր լարեցին, և զարկ տվին  
մի խոշոր պատերազմի, վորի մասին իմպերիալիստական դեղին  
մամուլը լուծ է, թագցնում է այդ պատերազմը աշխատավոր  
մասսաներից, քանի վոր նա իր մեքենայութիւնների հետևանքն  
է արծարծվում և իր աջակցութեամբ՝ ուղղված Չինաստանի  
հեղափոխական կառավարութեան դեմ, այն՝ վորը գլխավորում է  
Չինաստանի ազգային հեղափոխական շարժման պարագլուխ  
ՍունՅատՄենը: Չինաստանի պատերազմը կարող է համաշխարհա-  
յին նոր պատերազմի սկիզբ դառնալ, դա մի վտանգ է, վոր ցցվում  
է համաշխարհային հեղափոխութեան դեմ: Այդ պետք է գիտենա  
պրոլետարիատը և սպառազինվի դրա դեմ: Իմպերիալիստական  
ինտրիգաների դեմ պետք է վոտի յենի Խորհրդային Միութեան,  
Յեվրոպայի և ամբողջ աշխարհի պրոլետարիատը: Իմպերիալիս-  
տական այդ դավադրութիւնն արձագանք տվեց մի քանի շաբաթ  
առաջ նաև մեր քթի տակ—Վրաստանում: Ընկերներ, վոչ վոքի  
համար դադանիք չէ, վոր վրաց-մենչեիկների ավանտյուրան յեվ-  
րոպական բուրժուազիայի ու Յերկրորդ Ինտերնացիոնալից անկախ  
մի գործ չէ: Այդ ավանտյուրայի իսկական հեղինակները յեվրո-  
պական իմպերիալիստներն են, վոր կամենում են միջամտել մեր  
ներքին գործերին: Ազգերի Լիգայում արդեն իսկ վորոշում է ըն-  
դունված՝ ուսումնասիրելու հատուկ հանձնաժողովի միջոցով  
վրացական ապստամբութեան պատճառները: Այս փաստը լավա-  
գույն ապացույցն է բուրժուազիայի մեղսակցութեան և միաժա-  
մամակ մատնում է իր դիտավորութիւնները: Սակայն, ընկեր-  
ներ, Խորհրդային Միութիւնը, բանվորա-գյուղացիական մեր  
մասսաները բավականաչափ ուժեղ են վոչ միայն հակահեղափոխա-  
կան ներքին ուժերը ջախջախելու, այլ և արտաքին Ֆրոնտներում  
նրանց դիմադրելու համար: Յեվ յեթե իմպերիալիստական պե-  
տութիւնների կողմից փորձ լինի քննելու մեր յերկրում տեղի ու-

նեցող իրազարձությունները, ինքնհրգային Միությունը ցույց  
կտա յեվրոպական մազնատաներին իրենց արժանի տեղը:

Ընկերներ, Վրաստանի բանդիտական շարժումը անշուշտ պի-  
տի զբաղեցնի նաև արտասահմանի դաշնակցության մտմուլը:  
Յերևի դաշնակցական թերթերն իրենց բան ու դործ պիտի շինեն  
աղմուկ հանելու Վրաստանի շուրջը: Չե վո՞ր քաղաքական այն  
աշխատանքը, վոր տանում են իմպերիալիստները մենչևիկներին  
միջոցով, տանում են նաև դաշնակցականների միջոցով: Այն կա-  
պերը, վոր ունեցել են վրաց մենչևիկներն իմպերիալիստական  
պետությունների հետ, ունեցել են նաև հայ դաշնակցականները: Ի  
հարկե սրանք քաղաքական դեռ վոչ մի հաջողություն չունին: Ար-  
տասահմանյան հայ գաղութներն այժմ յերես են դարձնում դաշ-  
նակցությունից. ամենուրեք ուժեղանում են հակադաշնակցական  
քաղաքականություն վարող կազմակերպություններն ու հոսանք-  
ները: Բոլոր փաստերից այն է յերևում, վոր դաշնակցականները  
սպառելու յեն իրենց բարոյական կապիտալը: Յեվ վոչ միայն բա-  
րոյականը՝ նրանք ապրում են ներկայում նյութական ծանր տագ-  
նապ: Մեզ ճանաչումը Յեվրոպայում անեյանելի դրություն է  
ստեղծում նրանց համար: Ինչ պիտի անի այսպես կոչված «Հ. Հ.  
պատվիրակությունը», յեթե վաղը ճանաչելու լինի մեզ Փրան-  
սիան: Նա յերևի ստիպված պետք է լինի լուծված հայտարարել  
իրեն և կամ թե հեռանան դեպի Յեվրոպայի աննշան մի անկյուն:  
Դաշնակցականները, վորոնք այսօր աևանում են ինքնհրգային Միու-  
թյան աճող ուժը, չափազանց անհանգստացել են: Չե՞ վոր դաշ-  
նակցական մամուլը ու բեմը դաշնակցական լիզերներին դոյու-  
թյունն արտասահմանում և նրանց ազդեցությունը քաղկենի  
կամ գաղութական վորոչ շրջաններում՝ պահպանվում է գլխավո-  
րապես վաճառքի հանվող անցազրերի միջոցով: Ո՞ւմ պիտի պետք  
գան այդ անցազրերը յեթե ճանաչեն մեզ բոլոր մեծ պետություն-  
ները: Այս նկատառումով և սովերացող «Հ. Հ. պատվիրակու-  
թյուն» նոր խրավիրակով փոխարինելու համար, վոր Վեննայի  
դաշնակցական կոնֆերանսը վորոչև է համագաղութային համա-  
գումար հրավիրել և փոխտական մինիստրների համար ստեղծել  
եքսաներիտորիալ մի Հայաստան, նոր մի կենտրոն, վորի շուրջը  
նրանք կարող կը լինեն բոլորվել և Չերմացնել իրենց գրպանները:  
Այդ «համագումարին» է, վոր Ազգերի Լիգային կից գործող «հա-  
յասեր» իմպերիալիստների նախաձեռնությամբ հրավիրվել է  
սեպտեմբերի 1-ին ժեներվում: Սա սարքովի մի ժողով է, վոր շու-

նի գաղութահայ մասսաների լիազորությունը: Ժողովին մաս-  
նակցում են միայն դաշնակցականները: Ժեներվի համագումարը  
կարող է զբաղեցնել մեզ այն չափով միայն, վոր չափով զբաղեց-  
նում է ինքը դաշնակցությունը: Համագումարից յելած կենտրո-  
նական վարչությունը դաշնակցականների գործադիր մի մար-  
մին է, վորի հետ վոչ մի գործ և վոչ մի հարաբերություն ինք-  
հրգային իշխանությունը չի կարող ունենալ: Մենք չենք կարող  
թույլ տալ, վոր այդ վարչության միջոցով դաշնակցական գոր-  
ծազուրկ վարիչները նորից անցնեն գաղութահայ աշխատավոր  
մասսայի գլուխը և ստանձնեն ազգային քաղաքական դեկավա-  
րող ֆունկցիաներ: Արտասահմանյան այն հայ մասսաները, վորոնք  
կամենում են վորևե կապ պահպանել կամ ստեղծել ինքնհրգային  
Հայաստանի հետ պետք է յերես դարձնեն Դաշնակցության  
ստեղծած այդ խրոզվելակից: «Համագումարի» ընտրած կենտ-  
րոնական վարչությունը հակահեղափոխական և հակաաշխատա-  
վորական «յեզալ» մի որդան է, վորի միջոցով Դաշնակցությունը  
նը, իր յեվրոպական հովանավորները պիտի առաջ տանեն մեր  
դեմ ուղղած իրենց քաղաքականությունը: Ընկերներ, Դաշնակ-  
ցության գաղութներում տարած «կազմակերպչական» աշխա-  
տանքը բնորոշելու համար, ուշադրության արժանի յե դաշնակ-  
ցական մի նամակ, վոր տպագրված է Կայիրում լույս տեսնող  
«Արեվի» 176 համարում: Դա դաշնակցական մի թղթակցի գրու-  
թյունն է, վորը հիացմունքով պատմում է Ն. Աղբալյանի մի ճա-  
ռի մասին:

«Հայ Հեղափոխական դաշնակցությունն էր, ճառել է ճշմար-  
տասեր պատմարան» Աղբալյանը, վոր սկսեց դարգացնել բամբա-  
կի, ծխախոտի և բրնձի մշակությունը, սկսեց չորացնել ճահիճնե-  
րը, մաքրել առուները և քաղաքները. մենք ենք, վոր շինեցինք  
Շիրակի և Լենինի ջրանցքը, բացինք համալսարանը, տպագրե-  
ցինք տասնյակ հազարավոր դասագրքեր և զրքեր, բացինք դուպ-  
րոցներ, կազմակերպեցինք Կարմիր բանակ. իսկաղություն հաս-  
տատեցինք Հայաստանում և այլն և այլն և յեթե-ավելցուց ընկեր-  
րը—դուք հիմա տեսնում եք մեր գործիչներին արտասահմանում  
մի զարմացեք յեկել ենք ձեզ ել կազմակերպելու»:

Ստախոսությունների այս գավեշտական ցանկը շատ լավ է  
բնորոշում, թե ինչպես են «կազմակերպում» դաշնակցական «գոր-  
ծիչները» գաղութահայ մասսաները: «Կազմակերպչական» այդ  
աշխատանքի իդեյական պատկերը կը գտնեք դուք ժեներվից մեր

ձեռքն ընկած մի այլ գրութիւն, վորի հեղինակը և ստացողը դաշնակցական նախկին մինիստրներ են: Այդ գրութեան մեջ, վորի բնագիրը վորոշ նկատառումով առ այժմ չենք հրատարակում, առաջարկում է հաշտվել մի կերպ ուսման վարկանները հետ և ստեղծել գաղութներում Սիոնիստականի որինակով նշույնովորված և նույն ծրագրով ազգային-անկուսակցական մի մեծ կազմակերպութիւն: Անհրաժեշտ է, ասված է այդ նամակում, վոր այդ կազմակերպութիւնը վորոշ խորհրդավորութուն ունենա փրանկ-մասնական կազմակերպութիւնների պէս կամ ունենա կուկուսկիանի նմանութիւնը: Կուկուսկիանն, ընկերներ, Փաշիստական մի կազմակերպութիւն է Ամերիկայում, վորի մի ներկայացուցչի խորովիւրակը շատերը ձեզանից մի քանի որ շարունակ կախված տեսան Յերեանի փողոցում (ընդհանուր ծիծաղ): Անհրաժեշտ է գրում է դաշնակցական մինիստրը, վոր այդ կազմակերպութիւնը գլխավորեն հարուստ ու եքսցենտրիկ հայեր, վորպէսզի մեծ ազմուկ հանեն և հետաքրքրութիւն առաջացնեն բոլոր գաղութներում: Պեռք է ուժ տալ յեկեղեցուն, հոգ տանել վոր գաղութներն ունենան արժանավոր հոգևորականութիւն: Մի խոսքով պահպանել ամեն կերպ գաղութներում ցրված հայութիւն, մինչև տեսնենք, թե ինչ է լինում: Այդ բոլորն ի հարկէ, չի խանգարում, վոր մենք մնանք սոցիալիստներ և Ինտերնացիոնալի անդամ», նկատում է նամակագիրը (ծիծաղ):

Ընկերներ, դուք տեսնում եք, վոր դաշնակցականները նույնպէս կազմակերպչական աշխատանքներով զբաղված են, ինչպէս մենք, սակայն խոշոր տարբերութիւն կա այն աշխատանքների և մեր աշխատանքների միջև: Դաշնակցականները զբաղված են ֆիկտիվ պետութիւն ստեղծելու հոգսով, վորպէսզի տարածեն իմպերիալիստական շոշափուկները առաջավոր Ասիայում: Նրանք ստեղծում են ստի և պրովոկացիայի կայաններ, նրանք ընդունակ են արտասահմանում ստեղծելու մասսոնական, սիոնիստական և կուկուսկիանական կազմակերպութիւններ: Թող անեն ինչ կամենում են: Դաշնակցական ձեռնարկութիւններին կարող ենք հանգիստ հանդիսատես լինել: Մենք կարող ենք նրանց լոժաներին հակադրել մեր տնտեսական շինարարական աշխատանքը: Բայց թող վոր համոզված լինեն, վոր յետե հանդգնեն մի որ կրկնել մենջևիկ բանդիտների ֆարսը, մենք պատրաստ կլինենք տալու նրանց արժանի պատասխան-(բուռն ծափեր, նվագում է Ինտերնացիոնալը, դահլիճը վոտքի յե կանգնում): Դաշնակցական ֆա-

շիստական գործիչներին, դաշնակ. լոժաներին ցույց կտանք, վոր խորհրդային Հայաստանի աշխատավորական մասսաները ստեղծում են կազմակերպութիւնները, վոչ միայն տնտեսական շինարարական գործերը ղեկավարելու, այլ և հարկ յեղած դեպքում մահացու հարված հասցնելու այդ ֆաշիստական կազմակերպութիւններին, վորոնք կը հանդգնեն ձեռք բարձրացնել Հայաստանի շինարարական աշխատանքները ղեկավարող խորհրդային իշխանութեան դեմ (բուռն և յերկարատե ծափեր, նվագախումբը նվագում է Ինտերնացիոնալ):

ՆԱԽԱԳԱՀ.— Հետևյալ խոսքը տրվում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահի տեղակալ ընկ. Հայկ Ազատյանին՝ վողջունելու Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիտեյների Խորհրդի կողմից:

Հ. ԱԶԱՏՅԱՆ.— Ընկերներ, Խորհրդային Հայաստանում, ինչպէս և ամբողջ Խորհրդային Միութեան սահմաններում, այսօր խաղաղ ստեղծագործական աշխատանքի պայմաններ են հաստատվել և մեր տնտեսական ու կուլտուրական շինարարութեան ասպարիզներում ամեն որ նոր ու նոր նվաճումների յենք հանդիպում: Ներքին հակահեղափոխութիւնը ջախջախված է, իսկ միջազգային բուրժուազիան Խորհրդային Իշխանութեան հետ բանակցութիւնների և համաձայնութեան ճանապարհն է բռնել: Սխալված կը լինենք, յեթե մեր ներքին ու արտաքին այս բոլոր հաջողութիւնները միայն զենքի ուժին վերագրենք: Չափազանց կար: որ է գիտակցել և ըստ արժանիքի գնահատել այն մեծ դերը, վոր մեր միջազգային նվաճումների գործում յերկրի տնտեսութեան վերականգնումն է կատարում: Հաստատ կարելի յե ասել, վոր Խորհրդային Իշխանութեան տնտեսական նվաճումները միջազգային բուրժուազիային վոչ պակաս հարված հասցրին, քան պատերազմի դաշտում նրան հասցրած հարվածներն էլին:

Հայաստանի գյուղատնտեսական կոոպերացիան կազմակերպվում է մի շրջանում, յերբ նրա աճման ու բարդավաճման համար միանգամայն նպաստավոր պայմաններ գոյութիւն ունեն: Վոչ պակաս կարևոր է այն հանգամանքը, վոր ձեր նոր կազմակերպութեանը հիմք է դրել Խորհրդային Իշխանութիւնը, վոր վերջինս նրա առաջխաղացման գործին ամեն կերպ աջակցելու և նպաստելու յե: Գյուղատնտեսական կոոպերացիան տասնյակ թեւերով կազմվում է Խորհրդային Իշխանութեան հետ, նրա տնտեսական շինարարութեան ծրագրի ամենակարևոր կետերից մեկն է կազմում:

Նոր տնտեսական քաղաքականութեան չըջանից սոցիալիստական տնտեսութեան անցնելու գործում գյուղատնտեսական կոոպերացիան անսահման մեծ դեր ունի կատարելու : Նրա դերը մանավանդ մեծ է Հայաստանի նման գերազանցորեն գյուղատնտեսական մի յերկրում, վորտեղ մանր արտադրութեանն է իշխում, վորտեղ խոշոր կալվածքներ ու մասնավոր խոշոր տնտեսութեաններ լինել չեն կարող և վորտեղ խորհրդային փոքրաթիվ տնտեսութեանները յերկրի պիտանի հողերի մի բոլորովին աննշան մասն են բռնում :

Սոցիալիզմ մեզ մոտ դեռ գոյութեան չունի, բայց սոցիալիզմի շենքի հիմքն արդեն դրված է : Մեր հանրապետութեանները վոչ միայն խորհրդային, այլ և սոցիալիստական են կոչվում : «Սոցիալիստական» բառը մեր դերքն ու գրոշակը զարգարելու մի միջոց չէ : Դեմագոգիական նպատակների համար չէ, վոր Խորհրդային իշխանութեանն իրեն նաև սոցիալիստական է հայտարարում : Սոցիալիզմը և կոմունիզմը Խորհրդային իշխանութեան ամբողջ ծրագիրն են, նրա ներքին ու արտաքին քաղաքականութեան առանցքը, նրա ձգտումների կետ-նպատակը : Յեզ ամենից առաջ այդ պատճառով է, վոր միջազգային բուրժուազիան մեզ տանել չի կարող, վոր Խորհրդային իշխանութեան ուժեղացումը նրան հանգիստ չի տալիս, նրան զրկել է հավասարակշռութեանից : Խորհրդային Միութեան նոր տնտեսական քաղաքականութեանը միջազգային բուրժուազիայի համար մի սարսափելի հարված էր, քանի վոր այդ քաղաքականութեանն ընդգրկելով, Խորհրդային իշխանութեանը հնարավորութեան է ստանում վոչ միայն արդեն նվաճած գիւրքերն ամբապնդել, այլ և սոցիալիզմին անհրաժեշտ նյութական ու բարոյական նախապայմանները պատրաստել, այդ նախապայմանները հասունացնել :

Ընկերներ, ձգտել սոցիալիզմի, նշանակում է ամենից առաջ սոցիալիստական արտադրութեան հիմքը դնել : Խորհրդային Միութեան բանվորն ու գյուղացին, նախկին իշխող գաղափարներին սեփականազուրկ անելով և յերկրի իշխանութեանն իրենց ձեռքում կենտրոնացնելով, գրանով սոցիալիստական հասարակարգ դեռ չստեղծեցին, սակայն հենց այդ յերկու խոշոր նվաճումով նրանք ձեռք բերին այն յերկու կարևորագույն զենքերը, վորոնք սոցիալիզմի շենքի կառուցման համար անհրաժեշտ են և վորոնք Խորհրդային իշխանութեանը հնարավորութեան են տալիս՝ անարգել կերպով սոցիալիզմի շենքի հիմքը դրել և նրա պատերը բար-

ձրացնել : Բայց այստեղ հարց է ծագում, թե սոցիալիզմը կապիտալիզմից ինչով է տարբերվում :

Առաջին հայացքից, այդ յերկու հասարակարգերի գլխավոր տարբերութեանն այն է, վոր արտադրութեան միջոցների և հողի մասնավոր սեփականութեանը նրանց հասարակական սեփականութեանով է փոխարինվում, վերանում են գաղափարները, վերանում է պետութեանը և բոլորովին նոր ձևի հասարակութեան է ստեղծվում : Այդ բոլորը հեշտ է, սակայն այդքանով բավարարվել նշանակում է մարդկութեան առաջ կանգնած այն խոշորագույն սոցիալական խնդրի հիմքն ու արմատները չտեսնել, վերջիններս աչքաթող անել : Ասածս ձեզ հասկանալի դարձնելու համար, որինակ եմ վերցնում մեր իրականութեանից : Հայաստանում հողն ազգայնացրած է, իշխանութեանը բավորի և աշխատավոր գյուղացու ձեռքումն է կենտրոնացած : Բոլոր բանվորները և աշխատավոր գյուղացիութեան գիտակից մասն անպայման սոցիալիզմի կողմնակիցներ են և շատ կը ցանկանային մեր յերկրում անմիջապես սոցիալիստական կարգեր հաստատել : Ո՞վ է նրանց խանդարում : Խանդարող չկա : Ընդհակառակը, Խորհրդային իշխանութեանը և մեր բոլոր կազմադրումների լիակատար իրականացումն այսօր հնարավոր լիններ : Ինչպես տեսնում եք, վոչ մի արգելք, ամեն կողմից աջակցութեան, բայց և այնպես սայլը տեղից չի շարժվում, բայց և այնպես մեր գյուղում սոցիալիստական տնտեսութեան չըկա : Ինչո՞ւմն է գաղտնիքը : Գաղտնիքը նրանումն է, վոր սոցիալիզմի և կապիտալիզմի հիմնական տարբերութեանն արտագրողական ուժերի զարգացման տարբեր մակարդակն է, վոր սոցիալիստական տնտեսութեան կազմակերպելու համար արտագրողական շատ ավելի բարձր ուժեր են պահանջվում, քան կապիտալիզմին հատուկ ուժերն են, ստավել ևս շատ ավելի բարձր ուժեր, քան մեր գյուղացու տրամադրութեան տակ գտնվող ուժերն են :

Սոցիալիզմը բարի ցանկութեանների արդյունք կամ ուսուպիա չէ : Բանվոր գաղափարը սոցիալիզմի յե ձգտում, կապիտալի լծից ազատագրվելու և հավելյալ արժեքի շարիքը վերացնելու համար : Սակայն, սոցիալիզմի պատմական անհրաժեշտութեանը բանվորութեան ձգտումներով չէ, վոր պայմանավորվում է, այլ նրանով, վոր կապիտալիզմին հատուկ հասարակական-քաղաքական պայմաններում կամ գիտականորեն ստած՝ մեր դարի արտագրական հարաբերութեանների պայմաններում, արտագրողական

ուժերի զարգացումն անհնարին է դարձել, իսկ գոյութիւնն ունեցող արտադրողական ուժերից մարդկութեան ճնշող մեծամասնութիւնն ոգտովել չի կարող: Բանվորի պատմական բաղձն է, վոր նրա ձգտումները, նրա շահերը և պատմական զարգացման ուղիները զուգադիպում են: Սոցիալիզմը բարձր արտադրողական ուժերի վրա հենվող արտադրութեան մի նոր յեղանակ, մի նոր հասարակակարգ է: Իսկ արտադրութեան այդ բարձր ուժերի գործադրումը մանր տնտեսութիւններում, արտադրութեան նեղ շրջանակներում անհնարին է կամ նվազագույն չափերով և հնարավոր:

Մեր բանվորն ու գյուղացին իրենց ամբողջ եյութեամբ կարող են սոցիալիստներ ու կոմունիստներ լինել, բայց միշտ ել անընդունակ կը լինեն սոցիալիստական տնտեսութիւնն ու սոցիալիստական կարգեր հաստատել մի յերկրում, վորի բնակչութեան 90 տոկոսը մանր արտադրութեան պայմաններում է աշխատում: Ժամանակակից տեխնիկան, քիմիան և ժամանակակից ամբողջ գիտութիւնը գյուղատնտեսութեան բոլոր ճյուղերում արտադրողականութիւնը բարձրացնելու անսահման լայն հնարավորութիւններ են տալիս, սակայն այդ հնարավորութիւններից միայն խոշոր տնտեսութիւնները կարող են լիովին ոգտովել: Իսկ իր յերկու-յերեք դեսյատին հողի վրա կամ իր 1-2 կովով—մի բուսե թույլ տվեք յենթադրել, վոր մեր գյուղացին 1-2 կով ունի—խոշոր հողագործական կամ խոշոր կաթնատնտեսական արտադրութիւն կազմակերպելնա չի կարող: Կառչել իր մանր արտադրութեանը, մեր գյուղացու համար նշանակում է պապական դութանի կուլտուրայից, նրա ստեղծած չքավորութեան և մտավոր խավարի լծից յերբեք չազատագրվել: Ինչքան վոր, մանդկանց ցանկութիւնից ու կամքից անկախ, հողի քանակը յերկրագնդի վրա սահմանափակ է և նրա վրա խոշոր տնտեսութիւն կազմակերպելը շատ քչերին է հաջողվում, ինչքան վոր բոլոր գյուղացիներին աշխարհիս և վոչ մի յերկրում մի քանի տասնյակ դեսյատին հող հասնել չի կարող, խոշոր արտադրութիւն ստեղծելու և ժամանակակից բարձր արտադրողական ուժերից ոգտվելու համար նրանց միայն մի ճանապարհ է մնում— ուժերի միացման կամ կոոպերացման միջոցով խոշոր արտադրութիւն կազմակերպել, իրենց տնտեսութիւնը ոացիոնալ հիմունքների վրա դնել, ժամանակակից տեխնիկայից ու գիտական ագրոնոմիայից ոգտվելու հնարավորութիւնն ստեղծել և այդպիսով իրենց գոյութեան նյութական ու բարոյական մակարդակը բարձրացնել:

Ընկերներ, ամեն մի գիտակից գյուղացի ձգտում է բարձր վորակի յուղ ու պանիր արտադրել, ձգտում է իր կովից ավելի կաթ ստանալ, քան այժից է ստանում, ձգտում է իր հողի բերրիութիւնը կրկնապատկել ու յեռապատկել, բայց նրանցից շատ քչերն են իմանում, թե այդ նպատակին ինչպես կարելի յե հասնել: Բանավոր թե գրավոր ագիտացիան լավ բան է, սակայն միայն այդ ձևի ագիտացիայով գործին շատ քիչ կարելի յե ոգնել: Գյուղացուն դարերով խարել ու շահագործել են: Այդ պատճառով ել նա ուրիշների սասածին շատ քիչ հավատ է ընծայում: Նույն իսկ այս դեպքերում, յերբ նա ձեզ հետ համաձայնում է, 100-ից 99 դեսպում նրա դեմքին կարող եք կարգալ. «լավ ես ասում, լավ ել տղա յես. բայց դեհ չլա կը մտածենք»: Գյուղացիութեան շարքերում ագիտացիան միայն գործի ագիտացիա կարող է լինել: Ինչպես դեռ 80 տարի առաջ, 1845 թվին, մեր մեծ ուսուցիչ Կարլ Մարքսն եր ասում, իր մտքերի արդարացիութիւնն ու ճշտութիւնը մարդս պրակտիկայով, գործով պետք է ապացուցի: Ահա ինչու արդեն կազմակերպված և գործող վոքրաթիվ գյուղատնտեսական կոոպերատիվները պետք է վոչ միայն իրենց անդամների բարեկեցութեան բարձրացման նպատակներին ծառայեն, այլև կոոպերատիվ արտադրութեան ագիտացիայի կենտրոններ հանդիսանան: Գյուղացիական մասսային միայն գործով կարելի յե ապացուցել ու համոզել, վոր արտադրութեան այդ նոր յեղանակը վոչինչ չի կործանում, վոր նրան նույնիսկ չի խանգարում պաս պահել, պատարագը հաճախել, յերեխայի մկրտութիւնը կամ աղջկա հարսանիքը յեկեղեցական ծեսերով կատարել, բայց վոր նրան հնարավորութիւն է տալիս մի բազյա կաթի փոխարեն կովից 2—3 բազյա կաթ ստանալ, մի դեսյատին հողից բերքը 80—100 փթի հասցնել, խաղողի կամ մոզու հիվանդութեան դեմ կուվել և իր տարեկան յեկամուտն այնքան բարձրացնել, վոր կարողանա վոչ միայն իր Ֆիզիքական գոյութիւնը պահպանել, այլ մեկ-մեկ իրեն նաև շաշութիւնն թույլ տա, մինչև վոր աստիճանաբար իր համար բարեկեցիկ վիճակ կը ստեղծի:

Բնութեան հանդեպ կատարելապես անոգնական լինելով, մեր գյուղացին դեռ կռապաշտ է: Նա չի գիտակցում, վոր իր թշվառութեան, մտավոր խավարի և իր դարավոր ստրկութեան պատճառն իր արտադրութեան յեղանակը, իր փոքրիկ տնտեսութիւնը, իր ձեռքով արտադրած գործիքները, իր կրթած կովն ու յեզն են: Նա դեռ դժբաղդութիւնն ունի համոզված լինելու, վոր իր գլխին

առատորեն թափվող դժբաղդու թյունների դեմ կռվելն իր ուժերի վերե, վոր այդ դժբաղդու թյունները վատ հողից կամ թարս քամուց են ծագում, վոր հողի անբերրիությունը կամ իր կնոջ ամուլությունը սատանայի գործեր են և միայն աղոթքի ու մատաղի ճանապարհով կարող են վերացվել: Իր սեփական ձեռքի գործը, իր անշնորհությունը նա սրբերին կամ բնությանն է վերագրում: Փյուղատնտեսական կոոպերացիան գյուղացիական մասսային սրինակով և գործով պետք է համոզի նրանում, վոր բնության և շահագործող դասակարգերի դեմ կռվելը կատարելապես հնարավոր է, վոր աղքատը վոչ թե մեր յերկիրն է, այլ մենք ինքներս ենք, վոր մեզ չըջապատող բնական հարստությունների մի աննշան մասից ենք միայն սկսվում և վոր կոոպերացիան բնության ու կույրի դեմ կռվելու ամենագորեղ զենքն է նրա ձեռքում: Կոոպերատիվ խոշոր արտադրության ամեն մի սրինակի վրա գյուղացին կը համոզվի, վոր 1—2 կով ունեցողը կամ 2 դեռստատին հող մշակողը բերելու միջոցներ չունի, այլ միջոցներ ունեցողի համար ել թանկարժեք մեքենաներ ու գործիքներ ձեռք բերելն անշահավետ ու աննպատակահարմար մի գործ է, վորովհետև մանր տնտեսության մեջ նրանց արտադրողական ուժի միայն մի աննշան տոկոսը կարելի չե սպասարկել:

Ընկերներ, ինքն իրեն թշնամի լինել գյուղացին չի կարող: Ամեն մի գյուղացի ձգտում է իր համար գոյության բարեկեցիկ պայմաններ ստեղծել: Ինչքան վոր այդ պայմանները մանր գյուղացիությանը միայն կոոպերատիվ արտադրությունը կարող է տալ, կասկածից դուրս է, վոր տարեց-տարի կոոպերացիայի շուրջը գյուղացիներին նոր ու նոր հազարներ են հավաքվելու: Իր շահերի պարզ գիտակցությունը և կոոպերացիայի սրինակն ամեն մի աշխատավոր գյուղացու վաղ թե ուշ թելադրելու յեն ձեռք բերելը մտնել: Փյուղատնտեսության մեջ ապագան անպայման կոոպերատիվ խոշոր արտադրությանն է պատկանում: Իսկ Սորհրդային իշխանության պայմաններում կոոպերատիվ խոշոր արտադրությունն այն դուռն է, վորը բացելով դուք արդեն սոցիալիզմի թագավորությունն եք մտնում: Անկախ իր ցանկություններից ու իր ձգտումներից, իր անտեսությունը բարձրացնելու նպատակով կոոպերատիվ արտադրության անցած գյուղացին մի գեղեցիկ սր կիմանա, վոր ինքը վաղուց արդեն սոցիալիզմի շենքի կառուցման գործով է զբաղված յեղել և վոր սոցիալիզմից հրաժարվելու հա-

մար նա պետք է իր բարձր տնտեսությունից ու կուլտուրայից, իր գոյության բարեկեցիկ պայմաններից հրաժարվի և նորից պապական չթի ու գութանի հետեից ընկնի: Ընտրությունը պարզ է: Քաղաքականապես անգիտակից գյուղացին դարձանքով կիմանա, վոր ինքը վաղուց արդեն սոցիալիստ է:

Ինչպես տեսնում եք, գյուղատնտեսական կոոպերացիան վոչ միայն բարձր գյուղատնտեսական արտադրություն կազմակերպելու միակ ճանապարհն է, այլև բնական անհրաժեշտությամբ գյուղում սոցիալիստական հասարակարգի նխապայմաններ է ստեղծում: Սորհրդային յերկիրներում գյուղատնտեսական կոոպերացիայի քաղաքականությունը սոցիալիստական պետք է լինի: Այդ պատճառով ել մեր կոոպերատիվ սրենսդրությունը կոոպերացիային անդամակցելու իրավունք միայն այն գյուղացիներին է տալիս, վորոնք ընտրական իրավունքով են սկսվում և վորոնք հետևապես, ըստ իրենց սոցիալական դրության, սոցիալիզմի թշնամիներ լինել չեն կարող, վորոնք վաղ թե ուշ սոցիալիստական շարժման կողմն են անցնելու:

Կապիտալիստական յերկիրներում ել գյուղատնտեսական կոոպերատիվներ կան: Բայց նրանք, յեթե ունենոր գյուղացիների կոոպերատիվներ չեն, անպայման ունենորների ազդեցության տակ են, վերջիններիս ղեկավարությամբ ու թելադրանքով են գործում: Նրանց շարքերում յերբեմն սոցիալիստական ձգտումներ են ծնունդ առնում, բայց այդ ձգտումներն անմիջապես խեղդվում են ունենոր գյուղացիների և բուրժուական կառավարությունների կողմից: Կոոպերացիան աշխատավոր գյուղացիության շահերի սրաչապան կարող է լինել միայն խորհրդային յերկիրներում, վորտեղ հողը, գործարանային արդյունաբերությունը, Ֆինանսները, խոշոր առևտուրը և իշխանությունը բանվորի ու գյուղացու սեփականություն են կազմում: Իսկ վորտեղ հողի մասնավոր սեփականություն կա և գյուղացին իշխող դասակարգ չէ, գյուղատնտեսական կոոպերացիան վոչ միայն չի կարող սոցիալիստական լինել, այլև, վորպես սրենք, նրա անտեսապես թուլանդամներն ուժեղների կողմից մշտական շահագործման են յենթակա:

Սորհրդային իշխանությունը միակն է ամբողջ աշխարհում, վոր գյուղատնտեսական կոոպերացիայի աճմանն ու բարգավաճմանն ամեն կերպ աջակցում է, վոր գյուղատնտեսական կոոպերացիան աշխատավոր գյուղացիության տնտեսական ու կուլտուրա-

կան վերածննդի մի թժակ և դարձնում և նրա առաջ սոցիալիստական դարդացման ամենալայն հնարավորութիւններ և բացում:

ՆԱԽԱԳԱՀ.—Խոսքը պատկանում է Վրաստանի գյուղատնտեսական կոոպերացիայի և Անդրկովկասյան Գյուղատնտեսական բանկի ներկայացուցիչ ընկ. ՅԻՎՅԻՎԱԳՁԵՅԻՆ:

ՅԻՎՅԻՎԱԳՁԵ.—Ընկերներ, բազմաթիվ տարիների ընթացքում, բանվորների ու գյուղացիների մղած աննկուն պայքարը ճշողների և կեղեքողների դեմ, պատկվեց Հոկտեմբերյան հաղթութեամբ: Բայց դա բավական չէր բանվորներին ու գյուղացիներին վերջնականապես բախտավորելու համար: Պետք էր նաև, բացի քաղաքական հաղթանակից՝ նաև ապահովվել տնտեսական ճակատում: Այդ բանը գիտակցում էյին Խորհրդային իշխանութիւնի հակառակորդները և սպասում էյին, վոր մենք այդ ճակատում անհաջողութեան հանդիպելով՝ խորտակվենք: Նրանք կարծում էյին և հավատացած էյին, վոր մենք յերկրի տնտեսական վերականգնման գործը գլուխ բերելու անկարող կը լինենք: Ընկերներ, մեզ համար քաղաքական իշխանութիւնը նվաճելուց հետո, անպայման առաջնակարգ խնդիր էր վերականգնել քայքայված արդյունաբերութիւնը: Առաջին հերթին ահա դրա վրա ինչ արավ բանվորական դասակարգի տնտեսապես կազմակարգվելու համար: Կազմակերպվեց բանվորական կոոպերացիան և դա յեղավ այն հաղան, վորի վրա հիմնվում է բանվորական դասակարգի տնտեսական պայքարը: Մենք տեսնում ենք, վոր տարված կազմակերպչական աշխատանքի հետևանքով մասնավոր առևտրի վզին ձգած ողակը հեռացնուտ սեղմվում է, և հեռու չէ այն ժամը, յերբ բանվորական կոոպերացիան վերջնականապես կը հաղթահարի մասնավոր առևտրին:

Խորհրդային պետութեան ուղադրութեան ծանրութիւնը դարձավ նաև գյուղական տնտեսութեան կողմը. պետք էր գյուլթեան հետ: Իսկ դրա համար ամենից առաջ պետք էր վերականգնել նույնպես քայքայված գյուղատնտեսութիւնը, տարով գյուղացիութեանը անհրաժեշտ ոժանդակութիւն:

Սկզբում աշխատանքը տարվում էր ինտեգրուլ ձևով, բայց դա յերկար չտևեց, վորովհետև սպառողական կոոպերացիան ունեբողջ կազմաթիվ հակառակորդներ, չեն կարող միանգամից ամաշխատանքի ծանրութիւնն իր վրա վերցնել: Խորհրդային

65-25407-52

պետութեան թույլտվութեամբ գուգահեռ կերպով կազմակերպվեց գյուղատնտեսական կոոպերացիան, վորն արդեն փայլուն արդյունքներ և տվել: Դեռ ևս մի քանի ամիս սրանից առաջ, նրա գոյութեան հարցը վիճելի չէր համարվում և այս մասին միտանակու կայուն գիծ չկար մինչև անգամ կոոպերատիվ աշխատանքների շրջանում: Բայց, ընկերներ, կյանքը ցույց տվեց, վոր գյուղատնտեսական կոոպերացիայի գոյութեանը կենսական անհրաժեշտութիւն է: Յեւ այժմ յես հնարավորութեան ունեմ շնորհախորել Հայաստանի գյուղատնտեսական կոոպերացիայի անդամիկ համագումարը Վրաստանի յեղբայրակից կազմակերպութեան— «Յարմուկաշվիլի» կողմից (ծափեր): Ընկերներ, դեռ ևս 1919 թ. այս կազմակերպութեանը զոյութիւն և ունեցել Վրաստանում, իր կազմի մեջ ունենալով հազիվ 3—5 հաիւնական կոոպերատիվներ: Բայց այս վերջին տարիների ընթացքում նա հեռացնուտ զարգանալով, այժմ կազմում է մի պատկասելի միութեան, վորին անգամակցում են 95 գյուղատնտեսական կոոպերատիվներ (ծափեր): Թույլ տվեք հույս հայանելու, վոր գյուղատնտեսական կոոպերացիան իրոք ուժեղ արմատներ կը գցի և իր զարգացումով կը նպաստի յերկրի տնտեսական կազմակերպման գործին:

Ընկերներ, բախական չե գյուղացուն տալ հող, տգատութիւն և իշխանութիւն, մեր գյուղացիութեանն այդ քանով անկարող և բավականանալ իր տնտեսութեանը վերականգնելու գործում: Պետք է նրան տալ ուրիշ բան էլ. պետք է նրան տալ նաև վարկ. այն էլ եժանագին վարկ: Ահա այս նկատառումներով կազմակերպվեց գյուղատնտեսական վարկի սխտեմը. սա յայն տարածված է ամբողջ Խորհրդային Միութեան մեջ: Անդրկովկասում այս տարրիկում գործում են Անդրկովկասյան Գյուղատնտեսական բանկը, վորի անունից նույնպես թույլ տվեք շնորհախորել ձեր համագումարը և ցանկանալ նրա աշխատանքներին լիակատար հաջողութիւն (ծափեր):

ՆԱԽԱԳԱՀ.—Վողջույնի խոսք ասելու համար, խոսքը պատկանում է «ՀԱՅԿՈՈՊԻ» ներկայացուցչին՝ ընկ. Ստամբուլցյանի:

ՍՏԱՄԲՈՒՅՅԱՆ.—Ընկերներ, Գյուղատնտեսական կոոպերացիայի Համահայաստանյան Առաջին Համագումարի փաստը ակններև կերպով ապացուցանում է, վոր Հայաստանը տնտեսական շինարարական խոշոր քայլերով առաջ է գնում: Գյուղատնտեսական կոոպերացիայի հաջողութեան այս փաստը Հայաստանի ներկայայմաններում մեծ հաղթանակ է: Գյուղատնտեսական կոոպերա-



ցիան ավելի խոշոր որեկախի պայմաններ և պահանջում, քան սպա-  
ռողական կոտլերացիան. մինչև վոր գյուղացին խաղաղ կյանք և  
անտեսական նպատակով պայմաններ չունենա, չեր կարող ձեռ-  
նարկել գյուղատնտեսական կոտլերացիային:

Ընկերներ, մեզ համար գլխավոր նշանակութուն ունի նաև  
այն հանգամանքը, վոր Հայաստանում գյուղատնտեսական և  
սպասողական կոտլերատիվների զարգացումը համերաչի և բն-  
թանում և նրանց միջև տեսակետների տարբերութուն չկա: Շրթ-  
ման բազմահազար թեյեր են յեղել այդ յերկու տիպի կոտլերա-  
ցիաների միջև: Գյուղատնտեսական և սպասողական կոտլերա-  
ցիաներ միասին աշխատում են գյուղում. դրա համար ել թե այս  
սուղին համագումարը և թե հետագա համագումարները պետք և  
պաշտպանեն գլխավորապես վոչ թե սկզբունքային տեսակետնե-  
րը, այլ գործնական փոխհարաբերութուններ. դա մեծապես կը  
նպաստի մեր կոտլերատիվ շինարարության: Սպասողական և  
գյուղատնտեսական կոտլերացիայինների փոխհարաբերությունը  
չատ փորոշակի գծել և արդեն Համառուտական կոտլերացիան  
12-րդ համագումարը. մեր նպատակը պիտի լինի միայն կոն-  
կրետացնել այդ փոխհարաբերությունը: Ընկերներ, պետք և ա-  
սեմ, վոր այդ գործնական հարցի լուծումը հեշտ և հաջողվում  
մեզ, քանի վոր գյուղատնտեսական կոտլերացիան նոր և սկսվում  
Հայաստանում: Վստահ ենք, վոր թե՛ գյուղատնտեսական և թե՛  
սպասողական կոտլերացիաները անարգել ատաջ կերթան և միա-  
սին գործակցությամբ կիրառվեն իրենց վրա գրված պարտա-  
կանությունները (ծափեր):

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկերներ, այժմ անցնում ենք համագումարի  
պրեզիդիումի բնարությանը: Առաջարկություն կա նախագահու-  
թյանն բնարել 10 հոգուց. առարկություն չկա.—չկա:

Նախագահուրյան համար առաջարկվում են հետևյալները.  
Հ. Ազատյան, Մելիք, Շատունց, Եվոյան, Մարտիկյեվ, Կուրսև,  
Բուջինիև, Ամիր Այի-սղյի, Վարդանյան, Մա. Գալստյան:

Նոր առաջարկներ չկան.—չկան (ծափեր):

Քարտուղարուրյան համար առաջարկվում են. Մանուկ Ղա-  
զարյան, Մ. Կարապետյան և Հ. Յերգնիկյան: Առարկություններ  
կան.—չկա:—Ընդունվում է:

Այժմ անցնում ենք մանդատային հանձնաժողովի բնարու-  
թյան: Առաջարկվում են,—Փանյան, Յերոպիկին և Մելքումյան:  
Ընդունվում է:

Պատվավոր նախագահուրյան համար առաջարկվում են բն-  
կերներ՝ Կալինին, Ռիկով, Սադիրին, Լուկաշին, Համբարձու-  
մյան, Յիսակայա, Աղամալի-ոզլի և Հովհաննիսյան:

Խնդրում են նախագահության անդամներին բռնել իրենց ա-  
ղերը:

Այժմ անցնում ենք համագումարի բեկյամենտին: Առաջար-  
կած բեկյամենտն ընդունվում է միաձայն: Քանի վոր հայերեն չի-  
մացողները համագումարում զգալի տոկոս են կազմում, նախա-  
գահությունը նպատակահարմար և զանում, վոր գեկույումները  
լինեն հայերեն լեզվով և ապա թարգմանվեն սուսերեն:—Ընդուն-  
վում է:

Խմբագրական հանձնաժողովի համար առաջարկվում են. բնկ.  
բնկ. Շադունց, Մելիք, Սաֆրազբեգյան, Մանուկ և Փանյան:—  
Ընդունվում է:

Այժմ անցնում ենք որակարգին: Համագումարի կազմակեր-  
պիչ մարմնի կողմից առաջարկվում է հետևյալ որակարգը.

**ՈՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐ՝**

1. Գյուղկոտլենարոնի գեկույումն իր կիսամյա գործունե-  
ության մասին:
2. Զեկույումներ տեղերից:
3. Հայգյուղմիության կանոնադրության քննությունը և  
հաստատումն:
4. Գյուղատնտեսական կոտլերացիայի կազմակերպչական  
սարուկաուրան:
5. Խորհրդային իշխանության գյուղատնտեսական քաղաքա-  
կանությունը (Զեկույում Հողժողովի):
6. Գյուղատնտեսական վարկը Հայաստանում (Զեկույում  
Գյուղբանկի):
7. Հայգյուղմիության վեյամսյա գործունեության ծրագրի  
և նախահաշվի հաստատումն:
8. Համամիութենական «Գյուղմիության»— Сельскохозяй-  
անդամագրվելու հարցը
9. Ընարություններ—վարչության, խորհրդի և վերստուգիչ  
հանձնաժողովի:
10. Ընթացիկ հարցեր:

Առաջարկ կա տեղերի գեկույումները համագումարին չլինել,  
այլ համագաղտատախան տնտեսական սեկցիաներին ներկայացնել,  
վորից հետո գրված բանաձևերը ներկայացնել համագումարին:

Առարկութիւններ կա՞ն.—չկան: Ընդունուում է:

ԽՈՒԴՈՅԱՆ.—Առաջարկում եմ նախահաշիւի հարցը քննել նախքան ընտրութիւնը:

ՆԱԽԱԳԱՀ.—Առայժմ յետ քվեակցութեան եմ գնում որակարգի հարցերը ամբողջութեամբ՝ ստանց հերթական դասավորութեան խնդիրը շոշափելու:

Ովքե՞ր համաձայն են:—Բոլորը:

Այժմ հարցերը դասավորուած ենք հետեյալ հերթականութեամբ:

ԲԵԿԼԱՄԵՆՏ.—1. Համապատասխան ընտրութեան 20-ին անգամ ժամի 12-ին, «Ասող» թատրոնում. 2. Նախագահութիւն ընտրութեան 10 հոգուց. 3. Խմբագրական կոմիտեան յերեք հոգուց.

Սեկցիաներ.

ա) Այգեղործական, գինեգործական. բ) Մեղվապահական. գ) Վարկային, դ) Գյուղատնտեսական, բամբակագործական և միլիտարտիվ. ե) Անասնապահական, կաթնատնտեսական: Զբաղմունքի ժամերը. համապատասխան՝ անգամ ժամի 9-ից մինչև 1-ը և յերեկոյան 4-ից մինչև 6 ու կեսը: Սեկցիաներին 7 յերեկոյան ժամի 8-ից մինչև 10-ը: Համապատասխան գեկուցման տրվում է մեկ ժամ. բառ ելութեան խոսքին 1 անգամ 10 րոպե, բառ կարգի խոսքին 2 անգամ 5 րոպե, գեկուցողին վերջին խոսք 20 րոպե, անձնական հայտարար. վերջին 3 րոպե: Բոլոր ձուները թարգմանվում են հայերենից՝ ուսերեն, ուսերենից—հայերեն:

Անցնենք սեկցիաների ընտրութեանը: Առաջարկվում է ընտրել 5 սեկցիա: Գինեգործական, Մեղվաբուծական, Վարկային, Գյուղատնտեսական, Բամբակագործական և այլն, կաթնատնտեսական: Այս անթիվ նոր առաջարկներ կա՞ն.—չկան:

Զայն.—Առաջարկում եմ ծխախոտագործական սեկցիա ևս ունենալ:

Ա. ՄԵԼԻՔՈՆՅԱՆ.—Սեկցիաների թիվը չչափացնելու համար, առաջարկում եմ այդ սեկցիան միացնել ուրիշ սեկցիաներին, որինակ գյուղատնտեսականին, կամ մի այլ սեկցիայի:

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկեր Մելքոնյանի առաջարկութեան գեմարտահայտողներ կա՞ն.—չկան: Ուրեմն մնում է մեզ ընտրել 5 սեկցիաների կազմը: Այդ անթիվ առաջարկութեան կա յուրաքանչյուր սեկցիայի համար ընտրել վորպես անգամ, համա-

պատասխան կոտակերատիվներից մեկ-մեկ հողի վճուական ձայնով, իսկ բոլոր հետաքրքրվողները կարող են ներկա լինել սեկցիաների պարագամունքներին:

Ա. ՄԵԼԻՔՈՆՅԱՆ.—Յես ավելի նպատակահարմար եմ գրտնում, վոր յուրաքանչյուր սեկցիայի նախագահական կազմն ընտրենք այստեղ, իսկ համապատասխան պատգամավորներին ազատութիւն տանք, վոր բառ իրենց ցանկութեան և պատրաստութեան մասնակցեն այս կամ այն սեկցիաներին:

ՆԱԽԱԳԱՀ.—Ուրեմն յերկու առաջարկութեան կա սեկցիաների կազմի մասին. նախագահութեան և ընկեր Մելքոնյանի:

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ.—Յես կարծում եմ, վոր սեկցիաների աշխատանքները լրիվ չեն լինի, յեթե այստեղ չընտրենք նրանց մասնակցող պատգամավորներին: Պարզ է, վոր, յեթե մեկը պարտավոր չհամարի իրեն այս կամ այն սեկցիային մասնակցելու, կարող է ուրիշ ավելի հետաքրքիր բաներով զբաղվել և սեկցիաների աշխատանքը թերի թողնել:

Ա.ԶԱՏՅԱՆ.—Ընկ. Մելքոնյանի առաջարկը յետ ավելի նպատակահարմար եմ գտնում: Պատգամավորներից շատերը կուզենան անպատասխան մի քանի սեկցիաներին: Զի կարելի ընդունել ընկ. Գարրիլայանի տեսակետը. կոտակերտիան նշանակում է ինքնագործնելութեան. քարղկանց պետք է թողնել ազատ իրենց ցանկութեամբ մասնակցելու այս կամ այն սեկցիային, վորին իրենք ուզակար են գտնում, և վոչ թե պարտավորեցնել, վոր նրանք անպայման մասնակցեն միայն մի սեկցիային: Այստեղ միայն տեխնիքական հարմարութեան խնդիր կա գրված, ուրիշ վոչինչ:

ՆԱԽԱԳԱՀ.—Խնդիրը պարզ է. քվեարկում եմ, ո՞վ է ցանկանում, վոր սեկցիաների նախագահութեանն ընտրենք այստեղ, իսկ անգամակցութեանը թողնենք—Ընդունվում է միաձայն:

Ա. ՄԵԼԻՔՈՆՅԱՆ.—Քանի վոր ժամանակը անցնում է, առաջարկում եմ համապատասխան նախագահութեանը՝ վաղ առափոցան նիստի համար սեկցիաների նախագահական կազմը վորոշել և ներկայացնել համապատասխան ի հաստատութեան:

ՆԱԽԱԳԱՀ.—Սեկցիաների նախագահութեան ցուցակներն արդեն պատրաստ են. այժմ է հետ կարելի յե քվեարկել: Մեղվաբուծական սեկցիայի համար առաջարկվում են Սորեն Տեր-

Ավագյան, Եփոյան և Ս. Կարապետյան: Քվեարկում եմ:—Ընդունվում եմ միաձայն:

Վարկային սեկցիայի համար առաջարկվում են—Սաֆրապրեկյան, Մանուկ և Ս. Մելքումյան: Առարկություններ չկան:—Քվեարկում եմ:—Ընդունվում եմ միաձայն:

Գյուղատնտեսական, (միլիոնատիվ) —Բամբակագործական սեկցիայի համար առաջարկվում են—Քալանթարյան, Ավետյան և Չաքարյան: Առարկություններ կան:—Քվեարկում եմ:—Ընդունվում եմ:

Կաթնատնտեսական սեկցիայի համար առաջարկվում են—Ընկերներ՝ Ս. Աբովյան, Փիրումյան, Յերիցյան, Մարաֆեյեվ, Բուջնեվ և Փանյան:—Ընդունվում եմ:

Այգեգործական-գինեգործական սեկցիայի համար առաջարկվում են—ընկերներ Արամ Մելքոնյան, Վաղարշակ Վարդանյան և Գրձեկյան: Առարկություններ կան:—Քվեարկում եմ:

Ընկերներ, սեկցիայի կազմի ընտրությունը վերջացավ: Այժմ խոսքը տրվում է Համառուսական Գյուղատնտեսական կոոպերացիայի Միության ներկայացուցիչ ընկեր նազարովին (ծափահարություններ):

ՆԱԶԱՐՈՎ.—(Խոսում է սուսերեն) Ընկերներ, յես չնորհակալ եմ այն ջերմ ընդունելության համար, վոր դուք ինձ ցույց տվիք: Յես բավական հոգնել եմ, բայց աշխատեցի անմիջապես գնացքից իջնել և գալ Ձեր համագումարը վողջունելու: Համառուսական կոոպերատիվ միության—Սելսկոսոյուզի կողմից: Ընկերներ, Ձեր յերկիրը այցելած յուրաքանչյուր վոք կարծում ե թե շատ ազատ և Հայաստանը, վորովհետե նա վերջին տարիներն անց և կացրել շատ վատ պայմաններում մանավանդ անուսական տեսակետից: Այժմ ազատ Հայաստանի պայմաններում ես յենթագրում եմ, վոր Հայաստանը կվերագառնա իր նախկին բարեկեցիկ վիճակին, այն վիճակին, վոր նա ուներ իր մինչ պատերազմական շրջանում: Այն դաշտերը, վորի վրա այժմ կատարվում են Ձեր կոոպերատիվ աշխատանքները հույս են հայտնում, վոր շուտով Հայաստանը պետք և վերականգնի իր գյուղատնտեսական կյանքը: Ընկերներ, Հայաստանն ամենից առաջ գյուղատնտեսական յերկիր է: Այստեղ, դուք զբաղվում եք գինեգործությամբ, կաթ-

նաանասությամբ և այլ զբաղմունքներով, այդ հանդամանքը մի նպատակով հոգ և, վորի վրա Գյուղատնտեսական կոոպերացիան լայն կերպով պետք և զարգանա: Վողջունելով Համառուսական կոոպերատիվ Միության կողմից, յես հույս եմ հայտնում, վոր ամենամոտ ապագայում, ամենատեր փոխհարաբերությունները ստեղծվեն Ձեր և մեր Միության միջև, վորի հետևանքով ապագայում ընդարձակվելու յե կոոպերատիվ գործը Հայաստանում: Ձեր միությունը միանալու յե Համառուսական մասշտաբով կազմակերպված մեր Գյուղատնտեսական կոոպերատիվ Միության հետ: բացի այդ, մոտ սրերս Գյուղատնտեսական կոոպերացիայի զանազան ճյուղերի միացման նպատակով յենթադրվում է ստեղծել մի կենտրոնական մարմին, վորի մասին Ձեր համագումարն իր վորոշումը պիտի տա: Միացման համար շուտով կայանալու յե նաև մի այլ ավելի ընդարձակ համագումար, ուր դուք պետք և ուղարկեք ձեր ներկայացուցիչը: Մեր ամբողջ յերկրում Գյուղատնտեսական կոոպերացիան զարգանելու համար անհրաժեշտ և, վոր դուք ինքներդ նախաձեռնություն հանդես բերեք, վոչ միայն ձեր յերկրի սահմաններում, այլ և յերկրային մասշտաբով ստեղծեք մի միություն, վորի գործունեյությունը տարածվի Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի վրա: Այդ յերկրային միացումը հիմք կը ծառայի Գյուղատնտեսական կոոպերացիայի ամրապնդման:

Ընկերներ, վողջունելով Ձեզ Համառուսական Գյուղատնտեսական կոոպերատիվ Միության կողմից, յես հույսով եմ, վոր Ձեր ցանկություններն ու տենչերը ապագայում կիրականանան և Հայաստանի տնտեսական վերածնունդը կրնթանա շատ արագ տեմպով:


Կեցցե՛ Գյուղատնտեսական կոոպերացիան, կեցցե՛ ազատ Հայաստանի կոոպերացիան, կեցցե՛ Համառուսական կոոպերացիան (ծափեր):

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկերներ, առաջարկություն կա վողջունի հեռագրեր ուղարկել Յարմոկապիլիի և Ադրբեջանի Գյուղատնտեսական կոոպերատիվ միությանը: Այս գործը հանձնարարենք պրեզիդիումին: Բացի այդ, ընկերներ, առաջարկություն կա կաթնատնտեսության սեկցիայի անդամների թվին ավելացնել նաև ընկ. ընկ. Գյուլախմեզով, Յերոպկին և Փանյան: Առարկություններ չկան: Այսպիսով մենք այժմ կարող ենք վերջացնել մեր աշխատանքները: Նիստն սկսվելու յե վաղը առավոտյան:



նեմ, վոր դեռ մինչև 1924 թ. մեր գյուղերում ինքնաբերաբար առաջանում էին, այսպես կոչված գյուղատնտեսական կամ կուլտուրական ընկերություններ; սակայն դրանք չունեցին վոչ կոոպերատիվ ուղղութիւն կամ բովանդակութիւն և վոչ էլ բնագրերում էին այն, ինչ վոր ներկայացնում է Գյուղատնտ. կոոպերացիան ինքնին: Կոոպերատիվ սկզբունքների վրա չէին հենված այդ ընկերությունները, մանավանդ բացակայում էր գյուղացու անասական արտադրական պրոցեսի կազմակերպման հրամայականը-մատակարարման, վերամշակման, վարկավորման, մթերքների արտահանման գործը: Զուտ առևտրական կամ սպառողական մթերքներ մատակարարելով չէր կարելի գյուղացու անասութիւնը վարդացնել, բարձրացնել: Այնուհետև մի ուրիշ արդեւորիթ հանգամանք, վորին հանդիպել ենք Հայաստանի Գյուղատնտեսական կոոպերացիայի վարդացման ընթացքում և վորի դեմ պայքարել ու շարունակում ենք պայքարել:

Դա ինտեղրալ-միասնական կոոպերատիվի սկզբունքն է, վորը առայժմ միայն վտանգում է Գյուղատնտեսական կոոպերացիայի վարդացման ու ամրապնդման: Կոոպերատիվ շինարարութիւնը պետք է համաչափ վարդանա Սորհրդային քաղաքականութեան հետ. ներկայումս հնարավոր է արտադրական միենույն ճյուղերի կոոպերացումն, վորպիսի գեպքում արտադրող գյուղացին կամավոր ձեռով և ամբողջովին կը նվիրվի իր կոոպերատիվին, գառնալով նրա անբաժանելին և ակտիվ մասնիկը: Այս գիտակցութիւնը դժբախտաբար բացակայել է, և շատ գեպքերում պարզ պատկերացում չկա Գյուղատնտեսական կոոպերացիայի անելիքների ու նպատակակերի մասին: Այդ պատճառով ստեղծվել են թյուր տեսակետներ և պարզ մտքերի խեղաթյուրում: Մի քանի ընկերներ (դժբաղդաբար կոոպերատորներ) դեռ ևս կարծում են, վոր որինակ, այգեգործական ընկերությունը պետք է կազմակերպվի նաև սպառողական կոոպերատիվին կից՝ նրանից անբաժան: Իսկական տեսակետ Գյուղատնտեսական կոոպերացիայի ստրուկտուրայի ու վարդացման վերաբերմամբ գոյութիւն չի ունեցել, այլ յեղել է ձգտում, վոչ թե բնական ձեռով այլ «ի վերուստ» ուղղութիւն տալ այդ ընկերություններին՝ վորպեսզի դրանք միասնան մի բնոց հանուր սպառողական կեզեի մեջ: Ահա մտքերի այն խառնաշփոթը, վոր գոյութիւն է ունեցել մեր Գյուղատնտեսական կոոպերացիայի պատվաստման շրջանում: Զրգտում գեպի ինտեղրալ և կոոպերատիվ մի քանի ֆունկցիաների



միացում—մեր տեսակետով սխալ մոմենտ է Գյուղատնտեսական Կոոպերացիայի զարգացման և կոոպերատիվ շինարարութեան ներկա շրջանում: Սակայն այդ շփոթութիւնը չի յեղել միայն մեր գյուղում և պովստում, այլ ավելի բարձր շրջաններում: Հող-ժողովուրդի առաջին Անդրկովկասյան խորհրդակցութիւնը, դեռ ևս մարտ ամսին Թիֆլիսում վորոչէլ է, վոր գյուղում գոյութիւն ունենա մեկ միասնական կոոպերատիվ. նրա մեջ կենտրոնացնելով վարկային, արտադրողական, սպառողական, արհեստագործական և այլ ֆունկցիաներ: Ապա ապրիլի 5-ին 2-րդ Անդրկովկասյան կոոպերատիվ խորհրդակցութիւնը բռնեց նույն ճանապարհը, «Թե կոոպերացիան պետք է լինի ինտեգրացիոն և այդպէս արվեց, վորովհետեւ խորհրդակցութեան 99 ատկուսը նույն ինտեգրացիոն սիրահարներն էին: Այլ կերպ էլ չէր կարող լինել: Բայց հարց է ծագում թե վորն է մեր տնտեսութեան զարգացման ուղին, կարելի չէ արտադրողական ընկերութիւնները կենտրոնացնել մի մարմնի շուրջը, կարող է արդյոք գյուղացին իր արտադրութեան, տնտեսութեան բախտը կապել սպառողական խանութի հետ. դրան չեն ձգտում նաև մեր տնտեսութեան պահանջները:

Այնուհետև աննպաստ պայմաններից մեկը յեղել է և այն, վոր Գյուղատնտեսական կոոպերատիվների ներսում թյուր բմբունում է յեղել ընդհանրապէս կոոպերացիայի զարգացման մասին: Կոոպերատիվ ազիտացիայի և պրոպագանդայի խնդիրը մասսայական չի յեղել Հայաստանի գյուղական ազգաբնակչութեան համար, վորի հետեանքով մնացել են կոոպերացիայի մասին նախկին գաղափարները: Գրականութիւն անհրաժեշտ քանակութեամբ չի յեղել և Գյուղկոոպենտրոնն էլ հնարավորութիւն չի ունեցել բավարարելու այդ բացը, վոր պետք է տեղական ընկերները կարողանային տարբերել Գյուղատնտեսական կոոպերացիայի գաղափարը՝ սպառողականից և այլն: Պատրաստված կոոպերատոր հրահանգիչները բացակայութիւնը, բնականորեն անդրադարձել է մեր աշխատանքների ծավալման, ինչպէս և Գյուղատնտեսական կոոպերատիվների, արտաբնակների և ընկերութիւնների գործունէութեան վրա: Յեթե այս բոլորին ավելացնենք նաև Փինանսական մեր ծանր վիճակը, հիմնական գրամագլխի և շրջանառութեան միջոցների բացակայութիւնը, Չեզ հասկանալի կը գտնուէր այն ծանր աշխատանքը, վոր վիճակված է յեղել Գյուղկոոպիկենտրոնին:

Այնուհետև աչքաթող չպիտի անել նաև Հայաստանի գյուղական ազգաբնակչութեան չբավոր դրութիւնը, վոր սերտորեն կապված է կոոպերացիայի զարգացման հետ: Չեզ հայտնի չէ, վոր ինվենտարի մեծ պակաս է զգացվում և մեր գյուղատնտեսութեամբ զբաղվող ազգաբնակչութեան կիսից ավելը գուրկ է դրանից: Յեղածն էլ նահապետական և անպետք: Յեզ յեթե կազմակերպվում է մի Գյուղատնտեսական կոոպերատիվ ընկերութիւն, նրան առաջին հերթին անհրաժեշտ է մատակարարել ինվենտար: Մեր պետական և հասարակական կազմակերպութիւնները, չնայած իրենց խոշոր ջանքերին, անկարող են յեղել կարիքի մեծութեան պատճառով, գյուղատնտեսական ինվենտարով վորոզէլ մեր գյուղական տնտեսութիւնները և մասամբ դրա բացակայութիւնն է, վոր Գյուղատնտեսական կոոպերատիվ ընկերութիւնները Հայաստանում քիչ են կազմակերպվել: Շատ ընկերութիւններ կազմակերպվելուց հետո՝ ինվենտարի բացակայութեան պատճառով լուծվել են: Սա խոշորագույն բացասական հանգամանք է, մի դեֆեկտ, վոր չի նպաստել մեր աշխատանքների զարգացման, և վորի վերացման գործին պիտի յծվի Գյուղատնտեսական կոոպերացիան այսուհետև:

Գյուղատնտեսական կոոպերացիայի՝ վորպէս աղքատ և մանր տնտեսութիւնների կազմակերպութեան համար մեծ նշանակութիւն ունի կոոպերատիվ վարկի խնդիրը. առանց պետական յերկարատե վարկի ոգնութեան անհնարին է մեր հաջողութիւնը, անհրաժեշտ է ընկերութիւններին յերկարատե վարկով ցույց տալ վորոչ ոժտանդակութիւն, վորպէսզի նրանք մինչև իրանց արտադրութեան արդյունքների ստանալը կարողանան դիմանալ: Դա յեղել է զժվարին խնդիրներից մեկը, և մնում այդպիսին: Այս հարցը զուցե ավելի ևս պարզվի, կոնկրետանա մնացած զեկուցումները ընթացքում: Այսպիսով, ուրեմն՝ ինվենտարի բացակայութիւնը և յերկարատե վարկի անբավարար չափով մատակարարումը կոոպերատիվ ընկերութիւններին ու թվածս մի շարք այլ հանգամանքներ՝ հանդիսացել են վորպէս բացասական մոմենտներ Հայաստանի Գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման համար: Սակայն, չնայելով այդ բոլորին՝ աշխատանքը այդ սուպարիզում կատարված է միանգամայն բավարար: Դրա համար խոշորապէս մենք պարտական ենք կոմունիստական կուսակցութեանը, վորը հերթական գարձնելով Գյուղատնտեսական կոոպերացիայի անհրաժեշտութիւնը և անհրաժեշտ համարելով

Գյուղական տնտեսութիւնների կոոպերացումը, ընդգծել է և զիբրեկտիվներ ավել հատկապես այդ աշխատանքների վրա լուրջ ուշադրութիւն դարձնելու մասին՝ տեղական, կուսակցական և խորհրդային օրգաններին: Մեր աշխատանքների մասին կուսակցութիւնը ղեկավար սկզբունքներ է ավել և այդ աշխատանքները ընթացել են համարյա թե նրա ղեկավարութեամբ: Պետք է հիշատակել, վոր յեթե մենք հաջողութիւն ունեցել ենք, այդ հաջողութիւնը պետք է վերագրել կուսակցութեանը և այս հանգամանքը, ի դեպս, բոլորովին չի վտանգել կոոպերացիայի կամավոր զարգացման, աճման:

Մեզ աջակցող և թեւավորող հիմնարկը յեղել է Հոլմոդկոմատը, վոր փարում է Հայաստանի գյուղատնտեսական քաղաքականութիւնը: Չեզ հայտնի յե, վոր վերջերս հրատարակվեց դեկրետ Գյուղատնտեսական կոոպերացիայի մասին: Դա Հայաստանի պայմաններում ձեւավորում է մեր վեց ամսվա ընթացքում կատարած աշխատանքների իրավական սահմանները: Դեկրետը սահմանադրում է մեր անելիքները:

Վերջերս, ընկերներ, դեպի Գյուղատնտեսական կոոպերացիան նկատվում է մեծ հոսանք—աջակցութեան և սղնութեան խորհրդային բոլոր օրգանները մի առանձին և հաճելի թեքում են ցույց տալիս դեպի Գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացումը: Այս հանգամանքը խոշոր ազդակ է և սահմանադրող Գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման:

Այժմ թույլ ավել կանգ առնելու Գյուղատնտեսական կոոպերացիայի ծավալման և ներկա դրութեան վրա:

Գյուղատնտեսական կոոպերացիան, ընկերներ, կազմակերպվել է մոտ միայն 24 թվից, այլ նա յեղել և ստաց: Յես այստեղ չեմ խոսում վարկային ընկերութիւնների մասին, վորոնց սկիզբը հասնում է մինչև 1901 թիվը: Սուքս արտադրական այն արեւելիքներին և վերաբերում, վորոնք սկսած 1917 թվից կազմակերպվել են Լոտու, Դիլիջանի, Եջմիածնի, Յերևանի շրջաններում:

Սակայն, ինչպես ասացի սկզբում, նրանք գործել են առանց կազմակերպչական սարուկաուրայի, կանոնադրութեան և սխտեմասիկ աշխատանքի ճիշտ կիրառումը նրանց մեջ բացակայել է: Իսկական կոոպերատիվ շինարարութիւնը գյուղատնտեսութեան ասպարիցում սկսվում է 1924 թ.:

1924 թ. հունվ. Հայաստանում կային վեց կաթնատնտեսական արտելներ 147 տնտեսութեամբ, 5 վարկային ընկերութեամբ՝ 1140 տնտեսութեամբ և ութ գյուղատնտեսական ընկերութեամբ— ընդամենը 13 միավոր:

Գյուղկոոպիկենտրոնի կազմակերպման ժամանակ—մարտի 15—ին այդ կոոպերատիվ միավորների թիվը հասավ 27—ի: Մայիսի 1—ին՝ 53—ի, հունիսի 1—ին՝ 67—ի և ոգոստոսի 1—ին՝ 75—ի: Այս զարգացման ընթացքում հունվարին դրանք ունեյին 1300 անդամ արեւտեսութեան, մարտին՝ 2400, մայիսին՝ 4700, հունիսին՝ 8000 և ոգոստոսին՝ մոտ 9000 անդամ: Սա շտեմնված թոխք է, զարգացման ընթացք, խոշոր նվաճում: Բացի այս թվից՝ պետք է հայտնեմ, վոր կան նաև մի քանի այլ ընկերութիւններ, վորոնք չեն հաստատված Գյուղկոոպիկենտրոնի կողմից և չեն մտնում նրա մեջ, այդպիսիների թիվը մեր տեղեկութիւններով հասնում է 10—ի, նրանք չունեն կանոնադրութիւններ և կոոպերատիվ միասնական աշխատանքից խուսափում են առ այժմ: Յեւնելով մեր կոոպերացիայի զարգացման ընթացքից պետք է յենթադրել, վոր այդ 9000 տնտեսութիւնները այժմ պետք է ել ավելի շատացած լինին, վորպիսի հանգամանքը նկատելի յե ընկերութիւնների զարգացման տեմպից:

Կոոպերատիվներից շատերն ունին արտադրութեան վերամշակման համար գործարաններ, ձեռնարկներ, վորոնց շուրջը խմբված են բազմաբնակ բնակավայրեր: Միայն կաթնատնտեսական կոոպերատիվ արեւելների գործարաններում աշխատում են 260—ի շափ բանվորներ, մի թիվ, վոր քիչ չի բնդ հանրապես Հայաստանի նկատմամբ: Չպետք է անտես առնել յերկու հանգամանք ևս. մեր կոոպերատիվ ցանցում գործում է Պանիրմիութեանը: Սկզբում հարց էր դրված կամ յիկվիդացիայի յենթարկել այդ միութեանը, կամ ուժեղացնել նրան՝ նկատի առնելով նրա կարեւորութեանը: Մենք ուժեղացրինք պանիրմիութեանը և նրա շուրջն այժմ կենտրոնացած և պանիր արտադրողների խոշոր սուկուր: Այդ միութեան ուժեղացնելը մեզ համար ունեւ վործնական նշանակութեան: Կոոպերացիայի սարուկաուրայի մասին խոսելիս յես կր կանգնեմ այդ հարցի վրա, բայց այժմ ասեմ, վոր մասնագիտական այդ միութեան կազմակերպումը և հետագա զարգացումը մեզ հնարավորութեան կտա լուծել կոոպերացիայի մասնագիտացման ուղիով զարգանալու խնդիրը: Յերկրորդ վործը, վոր արել ենք, դա մեղվաբուծական ընկերութեամբ միութեանն է,

ուր կենտրոնացված են մեղվարուծական անտեսությունները, վորպես մեր յերկրի կարևոր գրադմունքներից մեկը:

Գյուղկոտակենտրոնը կոտակերացման է յենթարկել և գրադվել է հետևյալ անտեսություններով. — կաթնատնտեսությամբ, գյուղործությամբ, մեղվարուծությամբ, ալգեգործությամբ, շերամազահությամբ և այլն: Մնացած անտեսություններից խոշոր նըշանակություն ունեցողները, ինչպես որինակ բամբակագործությունը, մեղիորացիան և այլ գրադմունքները կարծես ուշագրության չեն անվել մեր կողմից: Այդ այդպես է, վորովհետև մեր աշխատանքների առաջին շրջանում մենք հնարավորություն չունեցինք ավելի լայն սահմաններում ծավալել մեր աշխատանքը, սակայն բամբակագործ գյուղացիների և նման գրադմունք ունեցողների կոտակերացման խնդիրը Գյուղկոտակենտրոնի հիմնական և հրատապ խնդիրներից մեկն է հանդիսանում:

Ընկերներ, անհրաժեշտ է ցրել մի թյուր տեսակետ ևս. դա մեր ընկերությունների կազմի սոցիալական գրության մասին է: Ի՞նչ սոցիալական կազմ ունի մեր գյուղատնտեսական կոտակերացիան: Սա մի հիմնական խնդիր է, վոր շոշափվել է մամուլում և այլ շրջաններում: Կարծույներ կան, թե մեր ընկերությունները կազմված են ամբողջովին կուլակ տարրերից, այսինքն այնպիսի տնտեսություններից, վորոնք շահագործում են ուրիշի աշխատանքը: Մեր տրամադրության տակ յեղած ստատիստիկական տվյալները բոլորովին հակասակն են ասում: Ահա ձեզ մեր ընկերությունների սոցիալական կազմը: Յեթե վերցնենք կաթնատնտեսությունը կտեսնենք, վոր նրանց 27 կազմակերպություններ ունեն 1637 անդամներ, վորոնք ունեն 5.750 կով: (Կովը կաթնատնտեսական կոտակերացիայի անհրաժեշտ չափանիշն է): Յեթե անալիզի յենթարկենք այդ կազմը, կը տեսնենք, վոր մեկ-յերկու և յերեք կով ունեցողների թիվը կազմում է անդամների մոտ 70 տոկոսը: Յեթե զրան գումարենք 4-ից մինչև 6 կով ունեցողների թիվը կստացվի 85 տոկոս. կոտու շրջանում մինչև 3 կով ունեցողը միջակից ցած-աղքատ անտեսություն է, և յեթե անդամ ընդունենք, վոր զրանք միջակ են, յեթե չբավոր կացած, մինչդեռ մնացած 10 և ավելի կով ունեցողների թիվը շատ չնչին է: Այսպես ուրեմն կաթնատնտեսական արտաձևերը բաղկացած են խոշոր մեծամասնությամբ չբավոր և միջակ տրև-

տեսություներից: Այլ հարց է, թե ո՞վ և ինչպես է ղեկավարում այդ անտեսություններին: Վարկային ընկերությունների պատկերը համարյա նույնն է: Այս մասին յես մանրամասն կանգ չեմ առնի, դուք կարող եք կարդալ «Գյուղատնտեսական կոտակերացիա» ամսագրում: Այգեգործական ընկերություները շուրջը հավաքված է 627 անդամ, վորոնք ունեն 475 գեսյատին ալգետեղ. դրանց անդամների 1-4, 1-2, 1-3 և 1 գեսյատին ալգի ունեցողների թիվը կազմում է 70 տոկոս, իսկ 2 և ավելի գեսյատին ունեցողների թիվը միմիայն 5 տոկոս: Այս բոլորը գալիս են ասելու, վոր ընկերությունների կոտակերացված արտեսությունները ուժեղ չեն, այլ ընդհակասակը մեծ կարիք ունեն ուղնության, յերկարատև վարկի և գյուղատնտեսական ինվենտարի: Յես մնացած ընկերությունների վրա կանգ չեմ առնում, վորովհետև դա շատ յերկար կլինի: Այժմ հետևենք այդ ընկերությունների վարչությունների կազմին: Սա ևս խոշոր նըշանակություն ունի թե ի՞նչ ուժեր են մեր կոտակերատու ղեկավարները: Այս տեսակետից պետք է ասել, վոր գրությունը անմխիթարական է: Կաթնատնտեսական 27 կազմակերպությունների վարչությունների մեջ խոշոր մեծամասնությունը ուժեղ անտեսություն ունեցողներն են: Սրանք իհարկե, անդամների թիվը համեմատությամբ շատ քիչ են, բայց ղեկավարելու տեսակետից՝ մի բացասական յերեույթ է: Սակայն ընդհանրապես Գյուղկոտակենտրոնի կազմակերպչական առաջին շրջանում դա անխուսափելի յե, վորովհետև մեր գյուղերում քիչ են թե կուլտուրան ուժերը և թե կոտակերատուները: Այդ պատճառով վարչությունների մեջ են անցել ուժեղ անտեսություն ունեցողները: Սակայն այդ այդպես չի մնալու և յես հավատացած եմ, վոր այդ խնդիրը ապագայում դրականորեն պիտի լուծվի, հսկուտ կոտակերացիայի մեծամասնությունը կազմող տարրի:

Կազմակերպչական աշխատանքների տեսակետից աննկատ չպիտի թողնել և վարչությունների ու վերստուպիչ հանձնաժողովների հարցը: Մեր նախնական ցանցը թույլ է, մեր վերստուպիչ հանձնաժողովները չեն կարողանում իրենց աշխատանքները կիրառել՝ բովանդակապես: Այսպիսի հանգամանքներում շատ բնական է, վոր անալոգիան կը լինեն վոչ ցանկալի յերեույթներ, վորովհետև սա ղեռ ևս մեր աշխատանքների նախնական մասն է: Կապը մեր պերեֆերյայի հետ, չնայած յեղել է շատ լավ, բայց կոտակերատու հրահանգիչների բացը, վորը պիտի ղեկավարի փաս-

տարեն, խորհուրդներ տա անխորձ մեր «կոտակերատորներին», պետք է վերացնել:

Անցնենք Գյուղկոտակենտրոնի տնտեսավարութեան և միջնորդական գործառնութեանը: Գյուղկոտակենտրոնը իր 6 ամսվա աշխատանքների ընթացքում, աչքաթույ չի արել նաև բնակչութեանը: Արտադրած արգյունքի վերամշակման, արտահանութեան և վաճառքի խնդիրները: Ընկերներ, կարևոր և՛ գտնում չի շատակել, վոր մեր ժամանակավոր կանոնադրութեանը, նախատեսում և և հնարավորութեան և տալիս Գյուղկոտակենտրոնին իրագործել իր միջնորդական գործարքները: Այդ կանոնադրութեանը գուք կհաստատաք այստեղ: Մեծ սպերացիաներ չենք արել, մենք աշխատել ենք այնքան, վորքան վոր յեղել ենք կազմակերպչական կենտրոն և չենք ունեցել ձեր վստահութեանը: Սակայն և այնպես ձեզ աննկատ չենք յեղել և բնդատալելով ձեզ, կատարել ենք նաև միջնորդական մեր պարտականութեանը: Կոտակերատիվ առաջին խորհրդակցութեանը իր կարևոր հարցերից մեկն ևր դարձել գինեգործութեան և գյուղատնտեսական պրոդուկցիայի արտահանութեանը, այդ վորոշումները հայտնել են ձեզ, վորոնց վրա հենվելով՝ մենք կարողացել ենք բնդաւորոնք պայմանագրեր ունի իր միջնորդներով մոտ 40.000 վեդրո պիկան պանիր արտահանելու մասին: Սա փոքր թիվ չէ, յեթե ինկատել ունենք, վոր մեր աշխատանքները գեուս առաջի շրջանումն են գտնվում: Այսպիսով Գյուղկոտակենտրոնը իր աշխատանքների ընթացքում արտահանութեան գործում վորոշ ուղղութեան և բունել և աշխատանքները գնալով ուժեղանում են մնում և, վոր հետագայում Միուրյունը սրա վրա կենտրոնացնի իր ուշադրութեանը:

Ընկերներ, վորպեսզի պարզ լինի մեր աշխատանքների բովանդակութեանը պետք է կանգ առնել նաև մեր Փինանսական գրութեան վրա: Մենք Փինանսական ինչ միջոցներ ենք ունեցել: Ընկերներ, բորբրիք հայտնի չէ, վոր միայն պետական միջոցներով ու գումարներով չի կարող և չպիտի գարգանա կոտակերացիան: Այս մասին մենք ունինք գողարիկ սրինակներ: Որինակ, Հայաստանի իրականութեան մեջ Հայկոտպր սկզբում չէր կարողանում հատաջողիմել այն ժամանակ, յերբ ստանում ևր միջոցներ պետութեանից և բաժանում, իսկ վերջում, վորովհետև գուրս և յեկել պետական մատակարարումից և հենվել և տեղա-

կան իր կոտակերատիվների Փինանսական և տնտեսական գործարքների վրա, ցույց և տալիս ակնհայտնի հաջողութեաններ: Մենք հետու յենք յեղել այն մտքից, վոր պետք է ամբողջովին ծանրանալ պետական բյուջեի վրա և բավարարվել ենք չնչին միջոցներով: մենք ստացել ենք վարկի կարգով գյուղատնտեսական կոտակերացիայի կազմակերպչական աշխատանքների համար 6000 րուք: սահմաններում, վորպիսի գումարով մինչև այժմս էլ կատարվել են մեր բոլոր աշխատանքները:

Մի այլ հանգամանք ևս, վոր վատ և անգրագարձել մեր աշխատանքների վրա, դա ազրոկուլուր աշխատանքի բացակայութեանն է: Իր գործունեութեան առաջին շրջանում Գյուղկոտակենտրոնը բնդգծել էր այդ աշխատանքը, բայց Փինանսների բացակայութեան պատճառով հնարավորութեան չի ունեցել կատարելու: Պարզ է, վոր Գյուղկոտակենտրոնի նպատակների մեջ մտնում են ազրո-կուլուր աշխատանքները: Ապագայում այս աշխատանքները Գյուղկոտակենտրոնը պիտի կենտրոնացնի իր ձեռքում, իսկ այժմ դրանք տարվում են Հողօրդկոմատի կողմից:

Ընկերներ, թույլ տվեք մի քանի խոսք: կանդ առնեմ Գյուղկոտակերացիայի կազմակերպչական ստրուկտուրայի վրա: Այս մասին առանձին ղեկուցում էր դրված, սակայն համագումարը միացրեց իմ գեկուցմանը: Այդ մասին կասեմ հետեյալը: Կոտակերացիայի ստրուկտուրան մեզ համար մի Փետիչ չէ, մի կուրք չէ, այլ մի տեխնիկական խնդիր, վոր նայած ժամանակին և տնտեսութեան պայմաններին՝ պետք է նրան հարմարեցնել: Այս առթիվ գոյութեան ունեցող վեճերը—ավելի վերացական բնույթ են կրում, քան իրական դրութեանից յեյնում: Մենք կիրառել ենք հետեյալ սխեմեր: Ստորին միավորներ, ապա միատեսակ կոտակերատիվների շրջանային միութեաններ: Միավորները մտնում են Գյուղկոտակենտրոնի մեջ ուղղակի և յերկատիժան ձևով: Թվում է թե այսուհետև սրանից մի քիչ պետք է չեղվել: Հայտնի չէ, վոր գյուղատնտեսական կոտակերացիայի ստրուկտուրան պետք է ելատարիկ, ձկոււն լինի և մենք կարծում ենք, վոր նրա հետագա ստրուկտուրան պետք է գնա արտադրութեան պրոցեսի բնթացքով՝ միատեսակ միավորների կազմակերպումով: Որինակ, կաթնատնտեսական կենտրոնում: Այդ ձկոււն ունենալու յե իր Հայաստանյան կենտրոնը, վորը մտնելու յե գյուղատնտեսական կոտակերացիայի Միութեան մեջ, ուրեմն յեռատիքան սխեմ: Այս տեսակետից կարծես թե սխալ և արված մինչև այժմ կազմակերպելով շրջանային յերկու միութեաններ. սակայն դա մի փորձ և յեղել, վորի հաջողվելու գեպքում հիմք կլինի, վոր մասնագիտական միավորները կազմակերպվեն Հայաստանյան մասշտաբով: Վարկային գյուղատնտեսական և այդեգործական բնկերութեանները նույն ձևով կամ ուղղակի մտնելու յեն Միութեան մեջ: Այն Միութեանը, վոր գուք կը կազմակերպեք այս համագումարում այս

տեսակետից ապառաջում դառնալու յե միությունների միություն: Կազմակերպչական այս ձեվը յենթադրվում է մեր տեսակետով:

Ընկերներ յես չասացի թե ինչ հրահանգներ են տրվեր մեր կազմակերպություններին: Պետք է ասեմ, վոր բացի մի շարք կարևոր շրջաբերականներից և կարգադրություններից՝ հնարափորություն ենք ստացել տպելու նաև բրոշյուրներ, պլակատներ և կանոնադրություններ: Սկզբում, կանոնադրությունների բացակայությունը վտանգել էր մեր աշխատանքները, մինչև վայժմ տպագրել ենք գրամեքենայի վրա յերք հարյուր որինակ կանոնադրություններ և բաժանել ընկերություններին: Հետագայում այդ խոչոր պակասը մենք լրացրել ենք հրատարակելով՝ Գյուղկոտակենտրոնի միջոցներով մի քանի կանոնադրություններ՝ բազմաթիվ որինակներով: Մեր միավորները ներկայումս անտեսափարական կանոնավոր գործառնություն ունեն, հազիվ յենթադրում յերանք իրենց անտեսական ամուր պատվանդանն ունեն: Գյուղկոտակենտրոնը իր համար նպատակ է դրել այդ ցիր ու ցան միավորներին կոտակերպարիվ միատեսակության բերել: Հրահանգչական և կազմակերպչական տեսակետից կանոնավորել և ուղղություն տալ նրանց գործունեության:

Ապա մեր նպատակն է յեղել այդ միավորների լիազորներին այստեղ համագումար բերել՝ կազմակերպելու իրանց կենտրոնական որդանը: Վարչությունը իր աշխատանքները խոչոր տուկոտով համարում է իրագործված: Մնում է կազմակերպություններին իրանց հեղինակավոր խոսքով հիմք դնել մի նոր կազմակերպության—Գյուղկոտակության և խորացնել իրանց աշխատանքները:

Հարց էր առաջանում հարկ կա՞ր հրավիրելու այս լիազորական համագումար միություն կազմակերպելու համար, այդ անենք ձեզ, և մեր հարցումների պատասխան, դուք պահանջել եք ստեղծել այնպիսի մի կազմակերպություն, վոր բովանդակապես ղեկավարի և պաշտպանի ձեր շահերը բոլոր տպարեղներում և մատակարարի, արտահանի և վարկավորի ձեր արտադրությունը: Այս տեսակետից Գյուղկոտակենտրոնը հրավիրելով այս ասել է «առանձին ջութակահարը ղեկավարում է ինքն իրեն, իսկ դերիժոր ներդաշնակություն մտցնելու մեծ գործի մեջ և դա այն միությունն է, վոր դուք պետք է կազմակերպեք (ծափեր):

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկ. Մելիքի գեկուցումը սուտերեն թարգմանելու համար խոսք է տրվում ընկ. Ս. Սարգսյանին:—Թարգմանությունից հետո:

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկերներ, ընկեր Մելիքի գեկուցման առթիվ հարցեր կարող են տրվել բանավոր և գրավոր: Տրված հարցերից հետո ընկ. Մելիքը պատասխանում է.

ՄԵԼԻՔ.—«Հետաքրքրվում եմ իմանալ թե գյուղատնտեսության կոոպերացումը ինչ չափերի յե հասել մեզանում ըստ գավառների: Կարող եմ հաղորդել, հետևյալ տվյալները. Յերևանի գավառում հունիս ամսին 6,2 տոկոս, ոգոստոսին 9,2 տոկոս, Եջմիածնի գավառում հունիս ամսին 5,5 տոկոս, ոգոստոսին 8 տոկոս, և Լենինականի գավառում հունիսին 2,3 տոկոս, այժմ 5,3 տոկոս: Կաթնատնտեսական արտելներ ունենք Լենինականի գավառում—1, Չանգեզուրում—1, Լոռ-Փամբակում—32: Վարկային ընկերություններ՝ Յերևանի գավառում—4, Եջմիածնի գավառում—3, Լոռ-Փամբակում—2, Դիլիջանի գավառում—1, Նոր-Բայազետի գավառում—1, Չանգեզուրում—1, Դարալագյում—1, Մեղրիում—1 և Լենինականի գավառում—1: Այգեգործական ընկերություններ՝ Յերևանի գավառում—4, Եջմիածնի գավառում—3, Մեղրիում—1. այստեղ կա նաև 1 շերամապահական—հնդահանության ընկերություն: Խառը գյուղատնտեսական ընկերություններ՝ Յերևանի գավառում—3, Եջմիածնի գավառում—2, Լոռ-Փամբակում—2, Ծխախոտագործականում—1, Լենինականում—1, Դիլիջանի գավառում—1 ծական ընկերություն՝—1: Մեղվաբույծների ընկերություններ՝ և Լոռ-Փամբակի գավառում—6:

Սակայն կոոպերատիվների թիվն ըստ գավառների կազմում է՝ Յերևանի գավառ—12, Եջմիածնի գավառ—6, Լենինականի գավառ—3, Նոր-Բայազետի գավառ—2, Դիլիջան—4, Չանգեզուր—2, Լոռ-Փամբակի գավառ—42, Դարալագյում—1 և Մեղրու շրջան—3: Ահա ընկերներ Հայաստանի Գյուղատնտեսական Կոոպերացիայի ներկա ցանցն ըստ տեսակների ու գավառների:

Այստեղ հետաքրքրվում եմ Հայգյուղկոտակենտրոնի ստրուկտուրայով: Ընկերներ, պետք է ասեմ, վոր ստրուկտուրայի մասին մեր ունեցած ներկա պատկերացումը չենք համարում վորպես բարացած և վերջնական մի ձև: Կյանքի պայմանները, մեր անտեսության զարգացման կազմակերպչական մեթոդները—ամենայնպես ուսուցիչն են ստրուկտուրայի վորոշման գործում: Մեր տեսական այն է, վոր տեղական գյուղատնտեսական

կողերատիվները ապագայում կարող են ունենալ բոտ իրենց մասնագիտական բնույթի Համահայաստանյան մասնագիտական կենտրոններ, վորոնք անմիջապես կը մտնեն Հայաստանի Գյուղատնտեսության Միության մեջ: Այս է թելադրում արտադրության զարգացումը, վոր հիմնական խնդիր է մեզ համար:

Ընկ. Յերիցյանըը հետաքրքրվում է, թե ի՞նչ պահանջ է յեղել գյուղատնտեսական վարկի և թե ի՞նչ չափով է բավարարվել:

Գյուղատնտեսական վարկի պահանջը յեղել է շատ խոշոր. յեղած պահանջի բավարարումը հազիվ 25 տոկոսի հասնի: Կոոպերատիվ կենտրոնը միջոցներ չի ունեցել: Վարկավորել է միայն Գյուղբանկը, վորի միջոցները նույնպես յեղել են սահմանափակ:

Վարկ է տրված՝ մեղվաբուծական 9 ընկերություններին՝ 7100 ո.: Այս ընկերություններն ունեն 643 անդամ, այնպես, վոր յուրաքանչյուրին միջին հաշվով հասնում է 11 ո. 20 կոպ.: Վարկային ընկերություններին մինչև ողոստոս ամիսը տրվել է ընդամենը 190,507 ո.: Այս ընկերություններն իրենց հերթին անդամներին տվել են փոխառության կարգով 211,719 ո.: Ինչպես ասանում էք, նրանք իրենց անդամներին տվելի յեն տվել, քան ստացել են:—Դա կատարել են ի հախիվ փայտամշակների, վորոնց զումարը հասնում է 56,000-ի: Այդպիսով յուրաքանչյուր անդամի համար միջին հաշվով ստացել են 34 ուրբի 68 կոպեկ, իսկ տվել են՝ 39 ո.:

Այգեգործական 5 ընկերություններն ստացել են 8900 ո., ունենալով 250 անդամ, սրանցից յուրաքանչյուրին միջին հաշվով բաշխվել է՝ 36 ո.: Գյուղատնտեսական խառն ընկերություններն (սրանց թվում նաև հնդահաններին ու ծխախոտագործներին) տրված է 19,200 ուրբի: Այս գումարից մի զգալի մասը, կաթնատնտեսական «Պանիր միությունը» և միավորները ստանալով 67,825 ուրբի վոչ թե արտադրական, այլ մթերքի վոր նրանց ստացած վարկի ամբողջ գումարը կազմում է մոտ 85,000 ո.: Այս միավորներն ունեն ընդամենը 1113 անդամ, այնպես վոր տրված կարծատե վարկից յուրաքանչյուրին հասնում է մոտ 60 ո.: Յեթե բոլորին միասին վերցնենք այն ժամանակ կը տեսնենք, վոր միջին հաշվով կոոպերացած տնտեսություններից յուրաքանչյուրն ստացել է 36 ո. 37 կոպ. զանազան տեսակի՝ մեծ մասամբ կարծատե վարկ:

Ընկ. Աթանասյանը հարց է տալիս «արդյո՞ք Հայգյուղատնտեսական կոոպերատիվների համապատասխանում է հարեվան յերկրների նման կազմակերպությունների ստրուկտուրային»: Իմ կարծիքով վոչինչ մեզ համար պարտադիր չէ, վորպեսզի մեր Գյուղատնտեսական կոոպերացիայի կենտրոնի ստրուկտուրան հարեան յերկրների նման լինի: Կարող է պատահել, վոր Վրաստանում և Ադրբեջանում բոլորովին այլ կազմակերպչական ձևեր լինին: Մենք մեր կազմակերպչական ձևը պետք է հարմարեցնենք մեր յերկրի պայմաններին:

Ընկերներից մեկը հետաքրքրվում է. «Թե Գյուղատնտեսական կոոպերացիայի անդամներն ի՞նչ իրավունքներ են վայելում»: Ընկերներ, յես կարծում եմ այս մասին կարիք չկա խոսելու, վորովհետև ամեն ինչ պարզ գրած ու ապագրված է մեր կանոնադրության մեջ: Այդ մասին խոսք լինել կարող է մեր համագումարում այն ժամանակ, յերբ քննության կառնվի կանոնադրությունը:

Հետաքրքրվում են նաև՝ «Թե արդյո՞ք ինչ մասնակցություն ունի գյուղատնտեսական կոոպերացիան վերամշակվող մթերքների գների վորոշման գործում»: Ընկերներ, ձեզանից յուրաքանչյուրը պետք է իմանա, վոր Գյուղատնտեսական կոոպերացիայի կենտրոնը գների վորոշման առանձին քաղաքականություն չի վարում և մինիմալ գների մշակման համար սասանձին պետական մարմիններ կան, վորոնք պաշտպանում են գյուղատնտեսության շահերը, դա նրանց գործն է:

Հարց են տալիս «թե Գյուղատնտեսական կոոպերացիայի կենտրոնն ի՞նչ չափով յարկուրդներ ու ցուցմունքներ է տվել գյուղատնտեսության բարձրացման տեսակետից»: Պետք է ասեմ, վոր դրա համար մենք թեև չենք ունեցել համապատասխան մասնագետներ, այնուամենայնիվ այն կազմակերպությունները, կամ անհատ գյուղացիք, վորոնք դիմել են մեզ՝ հնարավորության չափով բավարարվել են: Ծիշա է այս ասպարիզում մենք դեռևս անկազմակերպ ենք, բայց հետագայում այդ ուղղությամբ պիտի տարվի մեծ աշխատանքներ:

Այստեղ մեր ուսու ընկերներից մեկն ուզում է իմանալ «թե արդյո՞ք, արտադրական կոոպերացիան կարող է սպառողական կոոպերատիվ հիմնել թե վոչ»: Պետք է ասել, վոր վոչ:—Արտադրական կոոպերատիվներն այդ իրավունքը չունեն, վորովհետև նրանց կոչումը և գործունեության նպատակն այդ չէ. նրանց նպատակն է նպաստել գյուղատնտեսական արտադրության բարձ-

բացմանը: Իսկ սպառողական պարտականությունները պետք է կատարի համապատասխան կազմակերպությունը: Յեթե արտադրական կոտպերատիվները հանձն առնեն նաև սպառողական ֆունկցիաների կատարումը, այն ժամանակ կստեղծվի մի խառն դրուժյուն, վորից ամենից առաջ կը վնասվի ինքն՝ արտադրական կոտպերացիան: Արտադրական կոտպերատիվները կարող են իրենց անդամներին վարկավորել միայն նրանց անտեսություն անհրաժեշտ պարագաներում և նյութերով: Իսկ բոլոր սպառողական միջերջների մատակարարումը պետք է վերապահել սպառողական բնկերություն և դա մեր ֆունկցիաներից դուրս է:

Այստեղ հետաքրքրվում են «Թե արտադրական կոտպերատիվների շուրջը համախմբված յերեք հարյուր բանվորներից քանի տոկոսը Պրոֆմիության անդամ են»: Թույլ տվեք պատասխանել, վոր այդ մասին պետք է հարցապնդել պրոֆմիության, քանի վոր ձեռքի տակ թվական տվյալներ չունիմ:

Ինձ սխալ են հասկացել, յեթե կարծում են, վոր իրր թե յես ասել եմ «թե կարևորնտեսական միությունը պետք է լիկվիդացիայի յենթարկել»: Դա սխալ է, յես այդպիսի բան չեմ ասել: միայն շեշտում եմ, վոր նրա ապարատը պետք է յինի եժան և ճկուն: Կաթնատնտեսական արանյներն ամբողջ Հայաստանի մատարով պետք է ունենան իրենց մի քնդհանուր համահայաստանյան կենտրոն և վոչ թե մի կենտրոն Ստեփանավանում, մի ուրիշը՝ Դիլիջանում, Զանգեզուրում և այլ տեղերում: Դա կը նշանակե արհեստական կերպով ավելացնել վերագիր ծախսերը: Մեր տնտեսական այն է, վոր բոլոր Գյուղատնտեսական արտադրական կոտպերատիվներն ըստ իրենց տեսակների՝ գյուղի ապրանքայնացման չըջանում ավել պիտի դիֆերենցիացիայի յենթարկվեն՝ հավանականորեն ստեղծելով իրենց մասնագիտական կենտրոն, վորի միջոցով կը մանեն Հայգյուղկոտպկենտրոնի մեջ: Սա, ի հարկե, ապագայի խնդիր է:

Ուզում են իմանալ «Թե հրահանգչական ի՞նչպիսի կազմ ենք ունեցել»: Յես իմ ղեկուցման սկզբում արգեն ասել եմ, վոր հրահանգչական ուժեղ կազմ չենք ունեցել, վոր դա յեղել է մեր թույլ կողմը, բայց պետք է ավելացնեմ, վոր հրահանգչական բոլոր աշխատանքը կատարվել է յերկու հրահանգիչների միջոցով, և պետք է ավելացնեմ նաև, վոր հրահանգչական աշխատանքներին դավառներում անմիջականորեն մասնակցել են նաև Գյուղկոտպկենտրոնի վարչություն անդամները:

Հարց են տալիս այն մասին «Թե մեր կոպմից ի՞նչպիսի միջոցներ ենք մեք առնվել թույլ կոտպերատիվներն իրար միացնելու համար»: Պետք է ասեմ, վոր առանձնահատուկ աշխատանք այդ ուղղությամբ չի կատարված և կարիք էլ չկար կատարելու, վորովհետև դրանց միացման անհրաժեշտությունը կյանքի պահանջ լինելով՝ կատարվում է ինքնաբերաբար: Ճիշտ է տեղերում տեղական և կուսակցական կազմակերպություններն ունեցել են այս խնդրի շուրջը մաքերի փոխանակություններ: Այդ միացումը վերից չպիտի թելադրվի, այլ տեղերում իրենք կոտպերատիվ անդամները կզան այդ յեզրակացություն:

Հետաքրքրվում են «Շրջայնացման մասին»: Այդ մասին յես չեմ խոսի, վորովհետև ընկ. Շաղունցը իր ղեկուցման մեջ այդ մասին կը խոսի:

Հետաքրքրվում են թե՛ «Գյուղկոտպկենտրոնը ի՞նչպիսի դեր է կատարել Հայաստանի Գյուղատնտեսական Բանկի գործունեության մեջ»: Այս հարցին իմ ղեկուցման մեջ վորոչ չափով յես արգեն պատասխանել եմ, իսկ յեթե կուզեք, այժմ էլ կավելացնեմ, վոր մենք այդ ուղղությամբ նպաստել ենք մեր միավորներին ստանալու Գյուղատնտեսական Բանկից վարկ: Այս ղեկուցում բնական է, վոր մենք պաշտպանել ենք կոտպերացիայի շահերը:

Հարց են տալիս «Թե Գյուղկոտպկենտրոնն ի՞նչ միջոցներ մեք տվել ենք առաջնություն վարկավորման տեսակետից»: Պետք է ասեմ, վոր մեր գործունեություն մեջ այդպիսի գիծ չի անցել, իսկ յեթե նկատել են այդպիսի գիծ, դա պետք է վերագրել վարկավորված կոտպերատիվի առողջ լինելուն, նրա լավ գործունեություն: Սուր կարիք ունի անանապահությունը, այդպիսի գործությունը և այլն—նրանց էլ մենք վարկավորել ենք:

Հարց են տալիս «Թե գյուղատնտեսության վո՞ր նյութին րաբերություններն մեջ է յեղել Հայաստանի Գյուղատնտեսական Բանկի հետ»: Պետք է ասեմ, վոր մեր փոխհարաբերությունները յեղել են վոչ շատ սերտ, վոր հետևանք է վարկավորման ծանրակշիտ խնդրի: Ի հարկե կարող են խոսակցություններ լինել այս կամ այն կոտպերատիվ վարկավորման չափի մասին:

Ինձ հարց են տալիս. «Թե Գյուղկոտպկենտրոնը ինչ միջոցներ է մեք առել գյուղացիության ինվեստար մատակարարելու համար»: Պետք է պեմ, վոր մեր Գյուղկոտպկենտրոնը դրա համար խոշոր միջոցներ չունի, և ստիպված ենք յեղել այս ատպարկում հարմարվել Գյուղատնտեսական Բանկի հնարավորություններին:

Յեթե կուզէք, այդ հարցը ներկայումս խոչոր պետական խնդիր է դառնում :

Մեկ ուրիշը հարց են տալիս «Թե արտադրական կոուպերատիվները իրավունք ունեն բաց անել սպառկոուպներ» : Յես արդեն պատասխանել եմ, վոր վոչ, դա նրանց գործը չէ, դրա համար գոյութիւն ունի Հայկոուպն իր ցանցով, վորին կարելի չէ աջակցել միայն :

Հարց են տալիս «Արդյո՞ք արտադրական կոուպերատիվները կարող են սպառկոուպներ բաց անել այն տեղերում, վորտեղ այն չկա, կամ ուր Հայկոուպը դեռ չի կազմակերպվել» : Պետք է պատասխանեմ վոչ :

Հարց են տալիս «Թե արդյո՞ք Գյուղկոուպիկներունը բանակցութիւններ վարել է արտասահմանյան և Խորհրդային համապատասխան ֆիրմաների հետ նրանցից գյուղատնտեսական մեքենաներ ստանալու մասին» : Թույլ տվեք ասել, վոր սա միայն ծիծաղ կարող է առաջացնել : Մտածել և արդյոք հարց տվող ընկերն այն մասին, վոր դրա համար ամենից առաջ պետք է դրամ, և յերկրորդ՝ լիազօրութիւն, վորն ինչպես բոյորին հայտնի չէ մենք չունենք : Մենք ինչ յերաշխիքներ կարող ենք տալ, քանի վոր մեր կենտրոնը միութիւնն չէր, կանոնադրութիւնը դեռևս ձեր կողմից հաստատված չէր և այդ կարևոր գործը պետք է կատարել միայն ներկա համագումարը :

ՆԱԽԱԳԱՀ.—Այժմ մենք կանցնենք բառ եյության, մտքերի փոխանակութիւն : Խոսքը պատկանում է ընկ Սարգսյանին :

ՍԱՐԳՍՅԱՆ.—Ընկերներ, յես յերեք նկատողութիւններ ունեմ անելու մեր կենտրոնական վարչութիւն աշխատանքների մասին, վորպեսզի նորընտիր վարչութիւնը նկատի ունենա : Յես նպատակ չունեմ մեղադրելու կենտրոնական վարչութիւնը, վորովհետև նրա գործունեյութիւն ժամանակը շատ կարճ էր և նա հնարավորութիւն չի ունեցել ավելին անելու :

Իմ առաջին նկատողութիւնը վերաբերում է Այգեգործական ու Գինեգործական արտադրական ընկերութիւնը : Խաղողի վերամշակման հարցը առաջին տեղն է բռնում : Ունենք Վաղարշապատում, Ոչականում և Աշտարակում գինեգործական ընկերութիւններ : Թեև նրանք վորոշ միջոցներ ունեցել են, բայց չեն կարողացել վերամշակման գործը կանոնավոր տանել : Գործարաններ, գինու պրեսներ, ողիի պատրաստութիւն հարմարութիւն-

ները գտնվել են մասնավոր մարդկանց ձեռքում : Մեր ապագա կենտրոնական վարչութիւնը պիտի մտածի այդ միջոցները կենտրոնացնել ընկերութիւն ձեռքում և իր մասնագետների միջացով աշխատի ոգտագործել այդ գործարանները, վորպեսզի տեղերում վերամշակման գործը կանոնավոր հիմքերի վրա դրվի, դա չափազանց անհրաժեշտ է. դրանով մենք կը կարողանանք ավելի մեծ չափով գյուղացու ուշադրութիւնը հրավիրել այդ գործի վրա :

Յերրորդ խնդիրն այդ շրջաններում գնումների վարկավորման հարցն է : Ասում են, վոր վարկավորումը չենք կարող տալ Այգեգործական ընկերութիւններին : Ոչականում, Աշտարակում և մասամբ Վաղարշապատում գինեգործութիւնն ուժեղ է. այդ գինեգործներին հարկավոր է վարկավորել, բայց յեթե միաժամանակ գործեն նույն տեղում և վարկային և այգեգործական ընկերութիւնները, վարկավորելով նրանց, առաջ կը դա մրցութիւն այդ յերկու ընկերութիւնների միջև. որինակ՝ Աշտարակի վարկային ընկերութիւնը յեթե վարկավորի Աշտարակի գինեգործներին, այլ ևս գյուղացիները տնտեսապես կը կապվեն նրա հետ և դրանից Աշտարակի Այգեգործական ընկերութիւնը կը տուժի : Վարկավորման իրավունքը պիտի է տալ արտադրական ընկերութիւն. նա կը վարկավորի նախ իր անդամներին և ապա վոչ անդամներին : Այդպիսով մենք այգեգործներին կը կապենք արտադրական միութիւնների հետ :

Յերրորդ խնդիրը այն շրջաններում գնումներ կատարելու հարցն է : Գիտենք, վոր «Արարատ» գործարանը կազմակերպչական աշխատանքների ժամանակ շատ անգամ գյուղացի կուլակների հետ է պայման կապում. տալիս է որինակ 10,000 ո. և ասում, վոր գինի պտրաստեն իր համար : Դրանով նա խանդարում է մեր աշխատանքը : Այդ ձևով վարկ ստացած կուլակները նախ կուպիտակերպով շահագործում են գյուղացիներին, ապա նրանց հեռացնում արտադրական միութիւններից : Կենտրոնական վարչութիւնը լուրջ ուշադրութիւն պետք է դարձնի, վոր գյուղում յուրաքանչյուր հիմնարկութիւն անպատճառ աշխատի պայմանները կնքել արտադրական կոուպերացիայի հետ : Յեթե վերջինս հնարավորութիւն չունենա գոյացում տալու յեղած պահանջին, այն ժամանակ միայն կարելի չէ մասնավորների հետ կապ ունենալ :

Վերջին հարց : Պետք է ուշադրութիւն դարձնել մեր լեռնային շրջանների վրա, վորոնք մինչև այժմ անտես են ատնված. որի-

նակ՝ Ապարանի շրջան, ուր սասունցիներ են ապրում: Նրանց պետք է վարկավորել, վոր կարողանան վերականգնել իրենց տրնտեսությունները:

Պետք է ասեմ, վոր մեր կաթնատնտեսական կազմակերպությունը համեմատաբար հին է Հայաստանի պայմաններում. նրա ընդհանրը գործել սկսել են 1917-18 թվականներից: Սկզբում աշխատանքը շատ դժվար էր, մանավանդ յերբ անջատ-անջատ էյինք գործում: Միայն 1923 թվի դեկտեմբեր ամսին հավաքվեց մեր բնդհանուր ժողովը և վորոշեցինք վերջ տալ մեր անջատ գործունեյության և հիմնել բնկերություն: Ընկերությունը մեր աշխատանքները հեշտացրեց: Գործունեյությունն ավելի ևս լավացնելու համար առաջարկում եմ վորպեսզի ապրանքային և փողային վարկը լավացվի: Տրվելիք վարկը լինի հնարավոր չափ յերկարատե, վորովհետե կարճ ժամանակյա վարկերն իրենց նպատակին չեն հասնում. կարճ ժամանակվա վարկ աննող անտեսը ստիպված է լինում ժամանակից առաջ և եթանազին ծախել իր մթերքները:

ԱԹԱՆԱՍՅԱՆ.—Ընկերներ, յերբ յես հարց ավի բնկ. Մեյիքին մեր հարեան հանրապետությունների մեջ գոյություն ունեցող կոոպերատիվ սխեմայի մասին, նպատակ ունեյի ծանոթանալ նրա հետ և առիթ տալ, վոր այստեղ պարզվեր նրա էյությունը: Ընկ. Մեյիքի առաջադրած սխեման մեր փոքր հանրապետության համար անհարմար է. յեթե Ռուսաստանում կիրառվում է, շատ հասկանալի յե, վորովհետե Ռուսաստանը բնդարձակ յերկիր է, մինչդեռ Հայաստանի սահմանները շատ փոքր յեն: Առանձին արտադրությունների միություններ կազմակերպելը նշանակում է ավելի դժվարացնել կազմակերպչական աշխատանքը և ծանրացնել ասպարար:

ՓԱՌՆԱՎԱԶ (Ղուրղուղուրու գյուղ. բնկեր.).—Ընկերներ, բնկ. Մեյիքն իր դեկուցման մեջ չեշտեց, վոր մեր վարկային, գյուղատնտեսական բնկերությունները դուրկ են գյուղատնտեսական գործիքներից, ինվենտարից: Գործիքներ ճարելիս ել ամխաներով մեզ մոտ քնեցնում ենք: Յանկալի յե, վոր տեղական պահանջները նկատի ունենալուց հետո՝ միայն գործիքները բերվեն: Յերկրորդ, կան վայրեր, վորոնք քայքայվում են. վարկավորման գործը նրանց թույլ չի արվում, վոր դարգանան, հարկավոր է ուշադրություն դարձնել այդպիսի վայրերին, ինչպես որինակ՝ Ղուրղուղուլիին, վոր բամբակի վայր է, պետք է վարկավորել: Նրանք հարկադրված մասնավոր սպեկուլյանաներից են վարկ

վերցնում, բնկնելով նրանց ճանկը: Պետք է նրանց ազատել այդ ճանկերից և կապել գյուղկոոպերին: Յերրորդ. Գրախտի մոտ մթերված հացահատիկներ և այլ մթերքներ պետք է բաշխել միայն գյուղկոոպերի, վարկային բնկերությունների միջոցով, վորպեսզի սրանք ավելի ևս զարկ ստանան:

Պ. ՍՏԱՄԲՈԼՅՅԱՆ.—Ընկերներ, Մեյիքի դեկուցումը, ինձ թվում է, մի խոչոր պակասություն ուներ. նա յերբ խոսեց իր պերսպեկտիվային անելիքների մասին...

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկ. Պարույր, նա հետագա անելիքների մասին չի խոսել, ինդրեմ խոսեցեք նրա մասին, ինչ նա ասել է:

ՍՏԱՄԲՈԼՅՅԱՆ.—(չարունակելով) Կը խոսեմ կազմակերպչական սխեմայի մասին. հարցը նրանումն է, վոր մեր կոոպերատիվ չինարարության մեջ, ինչպես յես ասի իմ վողջույնի խոսքերում, գյուղատնտեսական և սպառողական կոոպերատիվները չփման բազմաթիվ կետեր ունեն. դրա վճիռը չափազանց նպաստավոր կերպով տրված է արդեն: Մեր յերկիրը անտեսապես զարգացած է, մեր չինարարությունն այնքան է առաջ գնացել, վոր կարելի յե վորոշ աշխատանքի բաժանում կատարել այս կամ այն միատեսակ բնկերությունների միջև: Ընկ. Մեյիքը պետք է դիտենա, վոր ինտեգրալ սկզբունքը հետևանք է մեր պատմական պայմանների: Այդ հարցը թե 13-րդ Համագումարի, թե Սորհրդային իշխանության և թե կոոպերատիվ բնկերությունների միջև լուծվել է արդեն: Բայց ինչիրը նրանումն է, թե ինչպիսի Ֆունկցիաների բաժանում պիտի լինի նրանց միջև, վորպեսզի իրար չխանդարեն: Մանավանդ այդ հարցում սպառողական կոոպերացիայի 3-րդ համագումարում բնդունված դեկրետը (մայիսի 23-ին-24-թվին) բազմաթիվ ֆուկցիաներ է տալիս սպառողական կոոպերատիվներին: Գա Ռուսաստանում հիվանդոտ խնդիր է. ինտեգրալ կոոպերացիան այնտեղ վորոշ նվաճումներ է արել. խառն կոոպերացիան այնտեղ վորոշ դեր է կատարել. մինչդեռ Հայաստանում վոչ: Այստեղ պիտի կանդ առնել այդ հարցի վրա և կոնկրետ գծել: Սպառողական և Գյուղատնտեսական կոոպերացիաների փոխհարաբերությունները:

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկեր Ստամբոլյան, ինդրեմ կանդ ասնել միայն խոսված խնդիրների և վոչ խոսվելիքի մասին:

ՍՏԱՄԲՈԼՅՅԱՆ (չարունակում է).—Սխեմայի մասին բնկ. Մեյիքն ասաց, վոր գյուղատնտեսական գանազան ճյուղերի—կաթնատնտեսության, մեղվաբուծության և այլն կենտրոն-

ներ ունենալու հարցին նա մոտենում է իբրև պերսպեկտիվ-ների, բայց նա չեչտեց միաժամանակ, վոր արդեն չըջանային կոոպերատիվներն սկսել են կազմակերպվել: Ինձ թվում է, վոր նման կենտրոններ ունենալու հարցը պետք է թողնել ապագային. կյանքն ինքնին կը լուծի այդ խնդիրն ավելի հեշտ և ավելի կոնկրետ, յերբ զարգանան չըջանային ընկերությունները մինչև այն աստիճան, վոր կարիք զգացվի ունենալու Համահայաստանյան կենտրոն, իսկ առ այժմ նրանց վրա պիտի նայել իբր հեռանկար-ների:

ՄԱՆՈՒԿ.— Ընկերներ, մեր վիճարանության ընթացքում յերևաց, վոր ընկեր Մելիքի առաջարկած կազմակերպչական սխեման հիմնապես ընդունելի չէ. նա բաժանվում է յերկու մասի. առաջին նախնական բջիջը, վոր մեր ընկերություններն են, յերկրորդ՝ կազմակերպչական կենտրոնը, վոր վաղը կը դառնա այդ ընկերությունների Համահայաստանյան կենտրոնը: Յերրորդ խնդիրը՝ մասնագիտական կենտրոնի խնդիրն է. ընկերները կարծում են, վոր դա ապագայի հարց է. իմ կարծիքով դա այժմեյական խնդիր է: Կոոպերացիան մի քարացած առարկա չի յեղել յերբեք մեզ համար: Սկզբում մենք պահանջում է յինք միասնական կոոպերացիա և վորոչ չափով հասանք դրան. այժմ թողել ենք այդ սկզբունքը, վորպեսզի կոոպերացրած անտեսության յուրաքանչյուր առանձին ճյուղն ավելի ևս ուժեղացնենք: Հայաստանում գյուղատնտեսական յերեք գլխավոր ճյուղեր կան. Այգեգործություն—գինեգործություն, կաթնատնտեսություն և բամբակագործություն, յերեքն էլ ունեն իրենց զարգացման համար առանձնահատուկ միջոցներ և ձևեր: Այն կազմակերպչական ձևերը, վոր մենք գործադրում ենք այգեգործության կոոպերացման ասպարեզում, չենք կարող՝ կաթնատնտեսության կամ բամբակագործության ասպարեզում. յուրաքանչյուր գյուղատնտեսական ճյուղ պահանջում է իր առանձին միջոցներն ու ձևերը: Յեթե կազմակերպենք Գյուղատնտեսական Կոոպերացիայի կենտրոն, նա պիտի մտածի այդ բոլոր ճյուղերի կոոպերացման մասին: Ընկ. Մելիքը լավ ասաց, վոր յեթե Սպառողական կոոպերատիվին միայն ույժ տանք, վարկայինը կը կործանենք կամ ընդհակառակն: Մի ճյուղին ույժ տալով՝ մյուս ճյուղը կը տուժի: Մենք տալու՞ ենք խորհրդային վարկային ֆալաֆականությունը. ունենք գյուղվարկի առանձին ֆոնդեր, յեթե դրանք միացնենք, կարող է այս կամ այն նպատակավոր ֆոնդը կուլ գնալ մյուս ճյուղին: Ներկայումս Ռուսաստանում կազմա-

կերպվում են կաթնատնտեսական և այլ մասնագիտական կենտրոններ: Մի թե կարելի չէ պահանջել մի մասնագետից, վոր նա լինի և կաթնատնտես և ազրոնոմ, մեզ վապահ և ուրիշ մասնագետ: Մի կարևոր խնդիր, վորն ընկ. Մելիքը մոռացավ, դա մեր գյուղատնտեսական ընկերության հարաբերությունն է Փոխոգկոմների հետ: Հայաստանում 1000-ի չափ փոկեր կան. դրանք կամաց-կամաց անտեսական հիմնարկությունների յեն վերածվում՝ ազատվելով սարեսական բնույթից: Այս համագումարում պետք է այդ մասին խոսել և աշխատել, վոր նրանց կապել գյուղատնտեսական կոոպերատիվների հետ. այսինքն՝ վոր նրանք ակտիվ մասնակցություն ցույց տան մեզ՝ իրենց միջոցներով օգնության հասնելով գյուղատնտեսության:

Պետք է կրկնել դարձյալ, վոր յերբեք կոոպերացիան մեզ համար նպատակ չէ: Ընկեր Լենինը հեղափոխական դանազան պերիատներում կոոպերացիայի մասին գրել է դանազան կարծիքներ: Շատերը կարծում են, վոր նա հակասել է իրեն: Վոչ, ընկերներ, նա չի հակասում իրեն. նա միշտ էլ կարծել է վոր կոոպերացիան անտեսական զարգացման մի միջոց է, վոր նա պետք է հետևի կյանքին: Անցյալ տարի յես ինտեգրացիայի կողմնակից է յի, այսօր հակառակն եմ. վաղը կարող ենք դարձյալ ինտեգրացիային վերադառնալ: Կոոպերացիան մեզ համար Փետիչ չէ. նա պիտի հարմարվի մեր խորհրդային անտեսական քաղաքականության:

Ընկեր Պարույրը խոսում է կոոպերացիաների փոխհարաբերության մասին: Վոչ մի ժամանակ կոոպերացիան իր փոխհարաբերությունն այնքան չի պարզել, ինչքան Կոմկուսի 13-րդ համագումարից հետո և նրա նշանավոր վորտչումներից հետո ասել, վոր մեր փոխհարաբերությունն անորոշ է, նշանակում է ասել, վոր մեր խորհրդային քաղաքականությունն էլ մեզ համար դեռ անորոշ է: Վերջնականապես պարզ է, վոր Սպառողական կոոպերացիան չպիտի զարգանա ի հաշիվ գյուղատնտեսական կոոպերացիայի և բնդհակառակը:

ՆԱՆԱԳԱՀ.— Ընկեր Մանուկի ժամանակը լրացել է. յեթե համարումարը ցանկանում է, կարող ենք հինգ րոպե ևս ժամանակ տալ: (Տրվում է): ՄԱՆՈՒԿ (չարունակում է).— Ընկերներից մեկը այստեղ մի կարևոր հարց դրեց. դա վերաբերում էր վարկային կոոպերատիվների և այգեգործական ընկերությունների վարկավորման ֆունդիաներին: Ճիշտ է, վոր այժմ այգեգործ գյուղացին վարկավորվում է

յերկու ուղղությամբ: Ժամանակի ընթացքում այդ խնդիրները  
գրականապես կը լուծվեն: Մեր գյուղացին դեռ ևս բազմափեշակ  
է, յերբ յուրաքանչյուր գյուղը մի գործ կատարի, գյուղատնտե-  
սական մի ճյուղով կը զբաղվի—մեր վարկային խնդիրներն ել այն  
ժամանակ կը լուծվեն: Յես շատ ուրաղ եմ, վոր ընկ. Շադունցը  
չըջանացման հարցի վրա կանգ կառնի: Շըջանացման միջոցով  
մենք լիակատար կոոպերացիայի կը հասնենք:

Այժմ դառնանք սոցիալական կազմի խնդրին—այստեղ աս-  
վեց, վոր մեր ընկերությունների մեջ կուլակային տարրերը մուտք  
են գործել: Ընկերներ, մենք գիտենք, վոր գյուղ կոոպերացիային  
անդամ կարող են լինել միայն նրանք, ովքեր ընտրելու և ընտրվե-  
լու իրավունք ունեն—միայն քյասիր և միջակ գյուղացիները:  
Նշանակում է գյուղկոոպը կուլակային կազմակերպություն չէ, այլ  
գուտ աշխատավորական: Մի քանի խոտք ել մեր կոոպերատիվ  
ցանցի մասին: Մենք ունենք Լոսում 42, իսկ Չանգեզուրում 1-2  
կոոպերատիվ միավորներ, իհարկե աննորմալ յերևույթ է: Այս  
համագումարից հետո ցանցի հավատարաշարի գարգացումը պիտի  
լինի և գյուղատնտեսական վարկն ել ապագայում ըստ ցանցի հա-  
վասար չափով պիտի բաշխվի:

Մասնագիտական կենտրոնների խնդիրներին դարով, յեթե  
ընկ. Մելիքն այդ հարցն արծարծում է այստեղ, դա բղխում է  
մասնագիտացման և շըջանացման սկզբունքից—կյանքի անհրա-  
ժեշտությունից: Ստամբուլցյանի սասժի համաձայն՝ յեթե այդ  
նպատակը դարձնենք մեզ համար ազագա հեռանկար, նշանակում  
է խորտակում ենք մեր գյուղ—կոոպերացիան: Կյանքը հարկադ-  
րում է մեզ տանելու այդ ուղղությամբ հիմնական աշխատանք:

ՆԱԶԱՐՈՎ.—Ընկերներ, քիչ առաջ լսեցի Հայաստանի Գյուղկոոպ-  
կենտրոնի վարչության գեկուցումն իր գործունեության մասին և  
այդպիսով մեզ հնարավորություն տրվեց ծանոթանալ Գյուղկոո-  
պերացիայի գրության հետ:

Ընկերներ, ամենից առաջ պետք է դարմանալ այն խոչոր ենե-  
րիայից, վոր ցուցահանվել է այս շատ կարճ ժամանակամիջոցում—  
ընդամենը վեց ամսվա ընթացքում: Պետք է հաստատել, վոր շատ  
խոչոր աշխատանք է կատարվել: Ինձ քվում է, վոր մինչև այժմ  
կատարված աշխատանքն ապահովվում է Գյուղատնտեսական կոո-  
պերացիայի հետագա զարգացումը: Պետք է հիշել, վոր այստեղ  
ծագեցին հարցեր սոսնձին վարկային ընկերություններ կազմե-  
լու մասին: Ինձ թվում է թե դա ճիշտ և նպատակահարմար չէ:

Ավելի լավ յեթե Գյուղատնտեսական կոոպերացիան ունենա նաև  
վարկային ֆունկցիաներ, դրա համար ունենալով անհրաժեշտ  
դրամական միջոցներ:

Պարզվում է, վոր «Սիր—Սոյուզի» պատվերներն ապահովված  
են միայն յերեք հազար փութի սահմաններում: Մա համեմատաբար  
չնչին մի թիվ է և պետք է կարծել, վոր յեթե «Սիր—Սոյուզը» ինքն  
իր համար սոսնձին գոյություն ունենա, ապա վերագիր ծախսերն  
անհամեմատ կավելանան և դա կանրադառնա գների վրա. յես մի  
փոքրիկ որինակ բերեմ Սիրիի Կաթնատնտեսական ընկերություն-  
ների կյանքից, նրանք արտադրում են տարեկան մինչև մի միլիոն  
փութ պանիր, և միայն վերջերս հարց հարուցվեց նրա անջատ գո-  
յության մասին. մինչ նա մտնում եր ընդհանուր Գյուղատնտե-  
սական կոոպերացիայի սիստեմում: Հայաստանի պայմաննե-  
րում այս որինակը ի նկատի ունենալով՝ անհրաժեշտ է ավելի  
զգույշ լինել և չկազմել անկախ միություն: Յեթե սոսնձին միու-  
թյուն կազմվի՝ ապա սոսնձին միությունները կարող են շեղվել  
ընդհանուր ճանապարհից և թուլանալ: Այստեղ հարց հարուցվեց  
նաև այն մասին, վոր արտադրական կոոպերացիան միևնույն ժա-  
մանակ հանձն առնի նաև Սպասողական ֆունկցիաներ. այլ կերպ  
ասած սա մի սուղարկ է թաքնված ինտեգրալ կոոպերացիայի գի-  
մակով: Այդ առաջարկներն անընդունելի պիտի համարել: Անըն-  
դունելի պիտի համարել, կրկնում եմ, վորովհետև դա այժմ ճիշտ  
զժված ճանապարհից շեղվել է նշանակում: Յերկու խոտք ել կոո-  
պերացիայից ազգարնակչության մասին: Ընկերներ, զեկուցումից  
յերևաց, վոր Գյուղատնտեսական կոոպերացիան Հայաստանում  
իր մեջ միացնում է յերկրի ազգարնակչության միայն վեց տոկոս-  
սը. հասկանալի յե թե ինչու այդքան փոքր է տոկոսը, վորովհետև  
Գյուղկոոպերացիան Հայաստանում իր հեռուում ունի միայն վեց  
ամսվա պատմություն՝ այդ մտաշտաբով վեց տոկոսը բավարար  
պիտի համարել: Առջիկայում պիտի աշխատել վորպեսզի այդ տո-  
կոսը հարանյուն կերպով մեծանա և Հայաստանի Գյուղկոոպերա-  
ցիան իր շարքերը նորանոր անդամներ գրավի (ծափեր):

ԳԱՆՐԵԼՅԱՆ.—Ընկերներ, այն հարցերը, վոր յես ուզում եյի շո-  
չափել, արդեն ընկ. Սարգսյանի կողմից մեծ մասամբ շոչափվե-  
ցին: Յես ուզում եմ մի յերկու խնդրի վրա սոսնձնապես կանգ առ-  
նեմ: Մեր արտադրական և վարկային կոոպերացիաները մեր գյու-  
ղերում հաճախ իրար խանդարում են. այսպես որինակ, զինեզոր-  
ժական աշխատանքը կատարում են թե վարկային և թե այգեզոր-

ծական ընկերութիւնները: Սրանք միեւնոյն միջավայրում իրար դեմ են դուրս գալիս և ժխտում իրար: Կամ մեկը պիտի լինի կամ մյուսը: Յեթե սրանցից մեկով չի կարելի բավականանալ, պետք է պահանջել, վոր այն տեղերը, ուր կարելի չէ միաժամանակ մի քանի կուլտուրա զարգացնել, հիմնել չէ թե անկախ ընկերութիւններ, վարկավորելով նրանց առանձին-առանձին, այլ միայն մի ընկերութիւն: Մեր գյուղերում շատ անգամ մի գյուղացի անգամ է թե վարկային և թե այգեգործական ընկերութեան: Յերկու տեղերից էլ նա վարկ է վերցնում: Հետեանքը լինում է այն, վոր մենք ստիպված ենք լինում քայքայել գյուղացու տնտեսութիւնը, քանի վոր նա չի կարող ժամանակին հատուցանել իր պարտքը: Յես գտնում եմ, վոր մեր կյանքի պահանջն է այսոր նրանց միացնել. մի տեղից միայն պիտի ստանալ վարկ: Յեթե վարկերը կը խառնվեն և մեկից մյուսին կանցնեն, էլ ինչո՞ւ համար է ապա Գյուղկոոպկենտրոնը:

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկ. Գարբելյանի ժամանակը լրացել է. ցանկանում եք արդյոք տալ նրան ևս մի քանի րոպե:—Տրվում է ևս 5 րոպե:

ԳԱԲՐԵԼՅԱՆ.—(չարունակում է) Այստեղ խոսք չեղավ, թե ինչ միջոցներ է ձեռք առել կենտրոնը այս կամ այն միջերջի գինը վորոչէլու համար. սա կարեւոր խնդիր է. դավառում այսոր դանազան կոմբինացիաներ են կատարվում. ինչու կարելի չէ ընկերութեան հայտնել այս կամ այն միջերջի գները, իսկ մասնավորներին կարելի չէ հայտնել: Որինակ «Արարատ» Տրեստը խաղողի գնի մասին յերաշխիքներ է տալիս գյուղացուն, դրանով խանդարելով մեր կոոպերատիվ աշխատանքները: Պետք է դրա տոաջնատնել:

Անհրաժեշտ է ընկերութիւններին կանոնադրութիւնը տպագրել և ուղարկել անդամներին, վոր նրանք գիտակ լինեն իրենց պարտականութիւններին և իրավունքներին: Մի այլ անհրաժեշտ յերեույթ էս: Գավառում նստածները կարիք ունեն խորհուրդներ. հարկավոր է, վոր կենտրոնը մի հաշվապահական սխառեմ առաջարկի շրջաններին ի գործադրութիւն, վոր ամսթով դուրս չգանք կենտրոնի առաջ:

ՆԱԽԱԳԱՀ.—Ժամի մեկն է արդեն և դես յերեք հոգի էլ կան բոտ եութեան խոսելու համար: Քանի վոր այսոր մի ժամ ուշ սկսեցինք, ըստ կը լինի, վոր մի ժամ ևս չարունակենք: Լսենք այս

յերեք հոգուն, ընկեր Մելիքի վերջին խոսքը և ապա փակենք նիստը: Ընդունվում է նախագահութեան առաջարկը:

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ.—Ընկեր Մելիքը ասաց, վոր յուրաքանչյուր Գյուղատնտեսական մասնագիտական միավորները պիտի ունենան իրենց կենտրոնը: Ընկերներ, կախած և մեծ ծախսերի հետ. դես մեր ընկերութիւնները չեն ծագկած այն չափով, վոր հարկավոր լինի նրանց համար կենտրոններ ունենալ: Այս այժմ պետք է բավականանալ այն կապով, վոր գոյութիւն ունի Գյուղկոոպկենտրոնի և Գյուղատնտեսական կոոպերատիվների միջև:

Կոոպերատիվ ցանցի քանակն այնքան նշանակութիւն չունի, վորքան վորակը: Գոյութիւն ունեցող մեր 75 միավորները պետք է նախ բարելավ վիճակի մեջ դնել ապա քանակի մասին մտածել:

Մի քանի խոսք Գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման և մանավանդ վարկային ընկերութեան մասին: Մեր վարկային ընկերութիւնները նման պայմաններում չեն կարող զարգանալ: Որինակ «Արարատ» Տրեստը պայմաններ է կապել յուրաքանչյուր գյուղում ամենագորեց տնտեսութիւնների հետ, վորոնք ունենալով կանխիկ գրամ և ինվենտար, հնարավորութիւն ունենահագործելու մեր աշխատավորութիւնը յայն չափերով և խանգարելու մեր կոոպերատիվ աշխատանքները: Այդ մասնավոր անհատները ընդունակ են հահագործելու և մենք տալիս ենք նրանց հնարավորութիւն, մինչդեռ մեր ընկերութիւնները զուրկ են միջոցներից վերացնելու համար այդ հահագործութիւնները: Մեր ապագա վարչութիւնը պետք է մտածի, վոր գոնե մյուս տեղանին նման պայմաններ չը կնքվեն մասնավոր անհատների հետ, այլ կնքվեն միայն Գյուղատնտեսական կոոպերատիվների հետ:

Շրջայնացման խնդիրը.— Ինչ միտք ունի Աշտարակում ունենալ թե Այգեգործական և թե Վարկային ընկերութիւն, մինչդեռ կան գյուղեր, վոր նրանցից փոչ մեկն էլ չունեն: Այգեգործական ընկերութիւնը պետք է լինի միայն այն գյուղում, ուր այգեգործութիւնն ուժեղ է. այգակց վարկայինը չպիտի լինի, իսկ այնտեղ ուր կա վարկային ընկերութիւն, այգեգործականը չպիտի լինի, վարկայինը կարող է ժամանակավոր կերպով նրան փոխարինել:

Ընկերութիւնների սոցիալական կազմը.— Թեև մեր մի շարք ընկերութիւնների մեջ, ինչպես որինակ կաթնատնտեսականի մեջ, 2 տոկոսով միայն կուլակային տարրեր մտաք են գտել, այնու

ամենայնիվ նրանց ել հարկավոր պակ, այլապես նրանք կարող են վարակել մեր բնկերությանները, վորովհետեւ այստեղ վորուցիկ նշանակության ունի ե վոչ քանակը: Վարկերը ստանում են որոշ կուրակները ե շահագործում մյուսներին:

**ՍԱՀՍԿՅԱՆ.**—Գյուղկոտակներունի գործունեությունը բնկերության ե մի ուղղությամբ, ինչպես ցույց տվեց զեկուցողը ե ինչպէս պարզվեց մտքերի փոխանակությանից: Այդ գործունեությունը չի գլխավորապես կազմակերպչական աշխատանք ե յեղել: Գյուղկոտակներունի կազմակերպել ե արտեսներ. բայց զբանով հարցնել չի յուժվում. կարենոր հարցերից մեկը զեկապարության հարցնել, այլապես տեղերի կոտակրատիվների գործունեությունը յով առջի գյուղնք չի տալ: Այդ տեսակետից Գյուղկոտակներունի գործունեությունը պակասավոր ե, ցանկալի չե, վոր ապագա կենտրոնական վարչությունը իր աշակերտությունը պարձնի նաե զեկապարության վրա:

Մեր կոտակրատիվ կազմակերպությանները յերկու հիմնական ճյուղի յեն բաժանվում—արտեսներ ե վարկային բնկերությաններ: Գործը տարվել ե գլխավորապես տեղական ուժերի միջոցով: Յեթե տեղերում յեղել են գիտակից տարրեր, գործը յով բնթացեալ ե ունեցել, հակառակ դեպքում գործը քայքայվել ե. որինակ Լուսնում արտեսները ավելի յով են կազմակերպված. ինչու, վորովհետեւ տեղերում կան յով բնկերներ, մինչդեռ Ղարաքիլիսայում գործը վիժել ե, վորովհետեւ կենտրոնից հարկ յեղած զեկապարությունը ե ցուցմունքները չեն յեղել. ծայել են վորոշ թյուրիմացություններ, վորոնց չքամարարվելով պատճառ են յեղել գործի քայքայման: Գամանք ավելի հեռավոր վայրերին—նոր Բույրագեղին: Այնտեղ գոյություն ե ունեցել միայն մի արտել, վորոշ նույնպես փակվել ե:

Վարկային կազմակերպության մասին այստեղ շատ խոսակցութայց ե այնպես հարցը մնաց անորոշ: Գյուղատնտեսական վարկային բնկերությունը ե Գյուղատնտեսական Բանկը տարրեր հասկացությաններ են. զրանց չափաի խառնել իրար հետ. զբանով մենք կը ձեռախոսենք նրանց ե տարրեր իմաստ կտանք նրանց: Գյուղացիներնայում ե վարկային բնկերության իրրե մի «Բանկի» վոր միայն փող ե տալիս: Սակայնամբանի Վարկային բնկերության, ճակատին փակցել են «Վարկային Բանկ» անունը: Այստեղ ել նկատվում ե յով զեկապարության պակասը: Գյուղկոտակներունի կարծել ե թե արտեսների թիվն ե նշանակալից. նա մասնագետներին

ըին կարենոր տեղ չի տվել: Հաճախ մասնագետներից զիմումներ են յեղել ե չեն բավարարվել: Համազումարը պիտի նկատի ունենա, վոր գործի կազմակերպության հետ մեկ տեղ նույնքան անհրաժեշտ ե ե մասնագետների հետագա հրահանգները:

Կոտակրատիվների սոցիալական կազմը.—Թեև մեր միության մեջ առանձնապես կուրակ տարրեր չկան, բայց տրված վիճակագրական թվերը չեն պարզում այդ հարցը: Մի բնկերության մեջ կարող են լինել տասը ունեվոր ե իննսուն չունեոր, բայց բաեյության այդ քիչը կարող ե խոչոր դեր կատարել, վերապահելով իրեն վարկի մեծ մասը: Վիճակագրությունը ցույց ե տալիս, վոր տաս կով ե տվելին ունեցող անգամների թիվը բնկանուր կովերի թվի տասյերեք տոկոսն ե կազմում, իսկ 5-ից բարձր կով ունեցողների թիվը հիսուն տոկոսն ե կազմում: Ահա այս տեսակետից պիտի մտանայ ինդրին: Խորհրդային իշխանության վարկերը փոխանակ չքամար գյուղացիության զնայու՝ զնում են ունեոր գյուղացուն, վորոնք անգամների փոքրամասնությունն են կազմում: Այդպես ե որինակ կաթնատնտեսական բնկերության մեջ: Նույնը պիտի լինի նաե մյուս բնկերությանների մեջ:

**ԽՈՒԴՈՅԱՆ.**— («Չանցի» բնկերության ներկայացուցիչ) Ընկերներ, յես խոսելու յեմ տնտեսական Գյուղկոտակներունի գործունեության մասին, մի շարք բնկերներ չեն մտանում նրան այնպես, ինչպես հարկն ե, որինակ, չի կարելի նրան մեղադրել մի շարք խնդիրների մեջ, վորոնք նրան չեն վերաբերում: Գյուղկոտակներունը միայն կազմակերպող ե զեկապարող սրգան ե յեղել. այդ տեսակետից նա նույնիսկ իր ուժերից վեր գործ ե կատարել. զրանից ավելին չի կարելի պահանջել: Նա իր ձեռքի տակ զբամ չունե, վոր կարողանար վարկեր տալ, չունե գործիքներ հարկ յեղած բնկերությաններին բաշխելու համար: Մենք այդ պահանջները կանենք յեկող տարի, յերբ միջոցներ կը տրամադրենք նրան: Ուրեմն միայն կազմակերպչական տեսակետից պիտի մտանանք ե քնենք Գյուղկոտակներունի գործունեությունը: Այս հարցում յես գտնում եմ մի խոչոր թերություն: Մեր ավագ բնկերը, վորը յեկել ե Համամիութենական կոտակրատիվ մեծ փորձառություն ունեցող կազմակերպչական կենդրոնից. նա յել ստաց, վոր չի կարելի կոտակրատիվ գործունեությունը ջլատել: Վերջին ժամանակները մի շարք վայրերում նոր բնկերությաններ են առաջ յեկել, որինակ, Աշտարակում ինչու հիմնել Այգեղսրճական բնկերություն, յերբ այնտեղ կատարվեն վարկային բնկերու-

թյուն: Յեթե Այգեգործական ընկերությունը չունենա վարկ  
ինչո՞ւ պիտի գործի, իսկ յեթե նա հարկադրված է վարկի  
գիմել, այդ դեպքում նա կը գտնա վարկային ընկերություն:

Ահա Գյուղկոտակենարնի խոշոր թերությունը, նա գործնա-  
կան տեսակետով չի մտաեցել Գյուղատնտեսական կոոպերատիվ-  
ների կազմակերպությանը: Պետք է նախապես ունենալ կոոպերա-  
տիվ ցանց, թե վորտեղ ինչպիսի կոոպերատիվ կարելի չէ կազ-  
մակերպել:

Պատասխանելով ընկ. Գաբրիելյանին կասեմ, վոր վարկային  
ընկերությունները մեր հնագույն կոոպերատիվներից են: Գյուղ-  
կոոպկենարոնք նախկին այդ խնայողական ընկերություններից  
վերակազմեց այժմյան վարկային ընկերությունները, գաելով  
և ուղղություն տալով նրանց: Դա մեծ գործ է Գյուղկոտակենա-  
րոնի համար: Այդ վարկային ընկերությունները, վոչ միայն Բան-  
կային գործ են կատարում, այլ և նրանք կոոպերատիվ միություն-  
ներ են, իրենց անդամների համար: Այստեղ յես պետք  
է ասեմ, վոր անհրաժեշտ չէ վարկը տալ անպատճառ դրա-  
մով, ընդհակառակը յավագույն և գյուղացուն վարկավորել  
ինվենտարով, մթերքով, փող պիտի տալ դիսկոնթոպետ քանվո-  
րական ձևերի վարձատրության համար, վորպեսզի գյուղացին  
իրբե վարկ ստացած այդ փողը գործ չածի ուրիշ պետքերի համար:

Կա նույնպես վաճառահանման հարցը: Մեզպարում են Գյուղ-  
կոոպկենարոնին, վոր նա այդ վաճառահանումը չի կազմակերպել:  
Սխալ է յենթագրել, թե մի արտադրական ընկերություն չի կա-  
րող սպասողական Փունկցիաներ կատարել: Յեթե որինակ, մի  
պանրի արտել փոխանակում է պանիրը ցորենով և տալիս է փր  
անդամներին՝ միթե՞ գա անթույլտրելի չէ: Մի այլ որինակ  
մեր Յերեանի Ընկ. Գյուղատնտեսական գործիքների վաճառման  
գործը. այնտեղ կան թե շինարարական և թե սպասողական նյու-  
թեր, որինակ շաքար, մեզր, գութան, մեխ և այլն, կարելի չէ  
նրանց իրարից գատել, վորովհետև այդ բոլորն էլ պետք են գա-  
լիս գյուղատնտեսության մեջ: Յեթե մի կոոպերատիվ կարողա-  
նում է և՛ մեկ և մյուս գործը կազմակերպել, պետք է քաջալերել  
նրան՝ գգուչացնելով նրան միայն հիվանդագին յերեութիւններից:

Գյուղկոտակենարոնք իր վեցամսյա գործունեությունից հե-  
տ, այսօր լիկվիդացիայի չէ յենթարկվում. մենք մեր գնահա-  
տական խոսքերը պիտի ասենք նրան. գոնե յես իմ և մեր վարկային  
բնկերությունների կազմից գալիս եմ իմ շնորհակալությունը

հայտնելու Գյուղկոտակենարոնին, վոր հնարավոր աշխատանք չի  
խնայել՝ կազմակերպելու և վերակենդանացնելու գյուղատնտե-  
սական կոոպերատիվները (ծափեր):

**ՁԱԼՅԱՆ.**—Ընկերներ այստեղ 13 հոգի բառ ելության խո-  
սեցին գյուղատնտեսական վարկի մասին. սակայն գյուղացու դը-  
րության մասին վոչ վոք չխոսեց: Յես իրբե գյուղացի հարկադր-  
ված եմ այդ հարցը բարձրացնելու: Վոչ վոք չի ասում, թե յերբ է  
վարկը բաց թողնվում: «Արարատ» գործարանը հայտարարում է,  
վոր յերեք դեպքտին խաղող ունեցողը գա և պայման կնքի իր  
հետ: Գյուղացին ստիպված է իր խաղողը ծախել, վորովհետև  
նա պետք է բավարարի հարկաթղթերը: Գյուղկոտակենարոնք  
վարկ է բաց թողնում վոչ ժամանակին. այգեգործներին նա  
պետք է բաց թողնի խաղողի հավաքման ժամանակ, յերկրագործ-  
ներին՝ հունձի ժամանակ և այլն: Տեղական վարկային ընկերու-  
թյուններին պահպանման համար պետք է Գյուղկոտակենարոնք  
միջոցներ մտածի: Յերբ մենք ունեցանք մեր ընկերության ընդ-  
հանուր ժողով ընկ. Մանուկը ասաց, վոր Գյուղկոտակենարոնք  
պետք է 10 տոկոսով վարկ ստանա և 12-ով բաց թողնի: Ասացեք  
խնդրեմ այդ վարկից ստացված 2 տոկոսի հավելումով միթե կա-  
րելի չէ Գյուղական վարկային ընկերությունը պահպանել: Դրա-  
նով հագրիվ մի հաշվապահ կարելի չէ պահել:

**ՆԱԽԱԳԱՀ.**—Ընկերներ, ժամը 2-ն է արդեն: Մենք պիտի ա-  
վարտենք մեր աշխատանքները: Ընկեր Մելիքի վերջին խոսքը կը  
լսենք յերեկոյան նիստին: Այժմ մի քանի հայտարարություններ:  
Յերեկոյան ժամի 7-ին բոլոր սեկցիաները միաժամանակ նիս-  
տեր պիտի ունենան (յուրաքանչյուրի համար նշանակվում են հա-  
մապատասխան ժողովատեղեր):

**Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ.**—Միևնույն ժամին սեկցիաների աշխա-  
տանքն աննորմալ եմ համարում. այնպես պիտի անել, վոր պատ-  
գամավորներից շատերը միաժամանակ կարողանան մի քանի  
սեկցիաների մասնակցել:

**ՆԱԽԱԳԱՀ.**—Ճիշտ է ընկերոջ խոսքը. նախագահությունը  
նկատի չէ ունեցել սակայն այն հանդամները, վոր վաղը յերե-  
կոյան պետք է վերջացնել համագումարը. յեթե պատգամավոր-  
ները ցանկանան համագումարը հետաձգել, այն ժամանակ կարելի  
չէ սեկցիաների ժամերի համար էլ փոփոխություններ կատարել:

**ԴԱՆԵԼՅԱՆ.**—Առաջարկում եմ սեկցիաների նիստերը գոնե  
մի ժամով տարբերել, վորպեսզի հնարավոր լինի ցանկացողների  
համար մասնակցել և մեկին և մյուսին:

Ս. ՄԵԼՔՈՆՅԱՆ.—Ձի կարելի ալժմից փորձել համազու-  
մարի ժամանակամիջոցը:

ՍԱՖՐԱԶԵԿՅԱՆ.—Առաջարկում եմ մի նիստ չկայացնել  
և հասկացնել սեկցիոն աշխատանքներին, փորպեսզի հնարավոր  
լինի ինդիքները պարզել:

ՉԱՅՆ.—Առաջարկում եմ վաղը յերեկոյան նիստ չունենայ:

ՄԱՆՈՒԿ.—Վորովհետև հարկավոր է նախապես լսել Հոգ-  
ժողովի և Գյուղբանկի զեկուցումները և ապա սեկցիաների աշ-  
խատանքը կատարել, յես առաջարկում եմ համազումարը վեր-  
ջացնել վոչ թե վաղը յերեկո, ալլ հետեվյալ ստափոսյան:

ՆԱԽԱԳԱՀ.—Հայանված գանազան կարծիքներից հետո պետք  
է նախ պարզել, թե վաղը յերեկո համազումարը պետք է վեր-  
ջացնել թե վոչ: Գյուղացի պատգամավորները հնարավորութեան  
չունին ավելի սպասելու յես քվեարկում եմ այս հարցը: Ընդուն-  
վում է համազումարի նիստը հետաձգել մյուս օրվան:

Ալլ առաջարկ.—Յե՞րբ չունենայ նիստ, այս յերեկո թե վաղը  
յերեկո:

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ.—Յես նպատակահարմար եմ գտնում այս  
յերեկո նիստ չունենայ:

ՍԱԼԳՍՅԱՆ.—Պետք է նախ լսել զեկուցումները, փորպես-  
զի սեկցիաները հնարավորութեան ունենան ավելի լայնորեն  
զբաղվելու այդ հարցերով:

ՆԱԽԱԳԱՀ.—Քվեարկում եմ յեղած առաջարկները:—Վորով-  
ժում է վաղը յերեկո նիստ չունենայ:

ՆԱԽԱԳԱՀ.—Նախագահութեանը հարկ է համարում հայտա-  
րարելու, փոր կատարութեանը վոչ մի ժամանակ զինու գներ  
չի հայտարարել և բնկ. Գարբելյանի հայտարարութեանը այդ  
ստիժով սուկ մի պրովակացիա յեր: Համազումարի նիստը համա-  
րում եմ փակված: Բոլոր պատգամավորները հրավիրվում են այ-  
ցելի կոնսերվի գործարանը:

(Նիստը փակվում է ցերեկվա ժամը 2 անց 20 րոպե):

ՅԵՐՈՐԳ ՆԻՍ

(1924 թ. սեպտեմբերի 22-ի կիրակի յերեկո)

Նիստը բացվում է յերեկոյան ժամի 4 և կեսին, նախագահում  
է բնկ. Ս. Շաղունցը:

ՆԱԽԱԳԱՀ.—Պատասխանի համար խոսք ունի բնկ. Մելիքը:

ՄԵԼՔ.—Ընկերներ, պետք է հայանեմ, փոր ինձ առարկոյ-  
ները բոլորովին կանց շատան կարեօր այն հարցի վրա, թե Գյուղ-  
կոտակենտարանն ինչպես է ստրկի իր աշխատանքն իր վեցամսյա  
գործունեյութեան բնթացքում, և ճիշտ է՞ արդյոք նրա գծած կաց-  
մակերպչական սարուկատուրան Հայաստանի Գյուղատնտեսական  
կոտակերպչայի գորգացման նկատմամբ: Հակաձառուց բնկերները  
չատ զեպքում պերագնահատում են Գյուղկոտակենտարանի իրա-  
վունքները, փոմանք էլ նայում են նրան, փորպես միութեան, և  
այստեղից էլ հետևում է նրանց սխալ դիտարութեանները: Թույլ  
տվեք պատասխանել լսա խոսողների կարգի. առաջինը մեր բնկեր  
Սարգսյանը հարց բարձրացրեց, փոր Գյուղկոտակենտարանը պետք  
է ունենա մասնագետ ինտարուկտորներ, այսինքն, փոր այդ ինս-  
տարուկտորը, յերբ գնում է կոտակերպիչ բնկեր, ուսումնասի-  
բելու, կարողանա միաժամանակ խորհարդներ տալ նաև այդ  
արտադրութեան վերամշակման ձևերի, մեթոդների և գործիքնե-  
րի մասին. յես միանգամայն համաձայն եմ այս տեսակետին և  
իմ զեկուցման մեջ յես շեշտեցի, փոր մենք չենք ունեցել այդպիսի  
ինտարուկտորներ և փոր պիտի ունենանք. տարակարճ էր չկա այս-  
տեղ: Այնուհետև բնկ. Սարգսյանը բարձրացրեց մի կարեօր  
հարց—Այդպիսի արձական և վարկային բնկերութեաններին փոխհա-  
րարելութեան ինդիքը, փորն բոս ամենայնի շիտիթեան մեջ է  
ձգում շատ բնկերների և ստաջին հերթին բնկ. Սարգսյանին:  
Թույլ տվեք այդ մասին մի րիչ յերկար կանց ասնել: Վարկային  
բնկերութեանները գյուղատնտեսական ունիվերսալ այն կարգա-  
կերպութեաններն են, փորանք պետք է վարկավորվեն սնտեսու-  
թեաններին գանազան ճյուղեր, կարգակերպեն այդ սնտեսութեան-  
ների տարբեր ճյուղերի արտադրչայի արտահանութեանը և  
փամասքը և բնկհանրապես վարկավորեն իրենց ազգեցութեան  
չբջանում գանվուց գյուղական շրափորութեան. մինչդեռ այդե-  
գործական բնկերութեանը արտադրական մի ճյուղի և փորոչ  
անտեսութեաններին (իր անդամներին) շուրջն և ծափալում իր աշխա-  
տանքները: Այն ժամանակ յերբ օրինակ—Աշտարակի վարկային  
բնկերութեանը պարտավոր էր վարկավորելու ամբողջ Արարանի  
չբջանի շրափոր գյուղացիութեան կարիքները՝ այդ բնկերութեան-  
նը դեռ ևս 23 թվականից սկսած իր վարկի խոշոր մասը գանազան  
սպասողական ապրանքներով տվել է միմիայն Աշտարակի այդե-  
գործներին: Այս սխալը մենք իր ժամանակին նկատել ենք և այ-  
նուհետև կանգնացրել այդ ձևի վարկավորումը: Սխալ է յեղել և

այն, վոր միևնույն այդ վարկավորված անդամներին հետագայում կազմակերպված Այգեգործական ընկերությունը ստիպված է լինել վարկավորել՝ փրկելու նրանց անտեսությունը քայքայվելու վտանգից: Անկասկած է, վոր հետագայում այս գրությունը անգի չպետք է ունենա և հետագա միությունն է վերապահվում գիճերենցիացիացի լենթարկելու այդ ընկերությունների գործունեության սահմանները: Յերբեք այգեգործական ընկերությունը չի խանդարի վարկային կազմակերպության և ընդհակառակը: Յերբորդ հարցը, վոր ընկեր Սարգսյանը բարձրացրեց, դա «Արարա» գործարանի կողմից մասնավոր մարդկանց հետ տարվորանակցությունները և նրանց գերադասության հարցն է: Պիտի հայտնեմ այստեղ, վոր «Արարա» գործարանը վորպես պետական տեսարան հիմնարկություն պիտի աշխատի հայթհայթման գործն ամբողջովին տանել կոոպերացիայի միջոցով: Սակայն կարելի ստիպել տեսարան հիմնարկությանը, վորպեսզի նա իր տեսարան շահերը գոհի մեզ. այն ժամանակ, յերբ էր ապարատի միջոցով կամ մասնավոր մարդկանց միջոցով ափելի էժան ձևով կարող է նա իր գործը կատարել: Պիտի մենք ձգանք վոր կոոպերացիայի ցանցն ափելի էժան և լավ կարողանա հայթհայթման գործը կատարել, վորպեսզի պետական տեսարան հիմնարկությունն իր ամբողջ աշխատանքը հանձնի կոոպերացիային: Այնուհետև ընկ. Մարտիկյան և Բուչնեվը այստեղ միանգամայն սխալ ձևով գրեցին հարցը թե իրը յես տեսի եմ, վոր մենք ուզում ենք լիկվիդացիայի լենթարկել «Սիր-Սոյուզը». դա չափազանց և անթույլատրելի սխալ է, մանավանդ իմ կողմից այդպիսի հարց չեր գրվի, քանի վոր յես ինքս եմ առավելապես աջակցել այդ միության զարգացման: Այստեղ հետագա սարուկաուրացի մասին յես ասացի, վոր Գյուգամնտեսական Կոոպերացիայի մասնագիտական ճյուղերը պիտի ունենան իրենց համահայաստանյան կենտրոնը, այսինքն, վոր բոլոր կաթնատնտեսական արտեյներն որինակ. — պիտի անմիջապես մտնեն համահայաստանյան իրենց միության մեջ. այսինքն կաթնատնտեսական կոոպերացիայի կենտրոնի և ապա Հայկյուղմիության: Այնուհետև յես և, ինձնից հետո ընկեր Ղազարյանը, ափելի պարզեցինք այդ միտքը, վոր ներկայումս գոյություն ունեցող «Սիր-Սոյուզը» կամ Մեզ-վարուձական միությունը կը լինեն այդ ճյուղերի համահայաստանյան կենտրոնների կազմակերպման նախաձեռնողները: Կողմի յերկու խոսքով ընդդժամ լինել նաև այն թյուր տեսակետը, վոր ունի կազմակերպչական սարուկաուրացի մասին կոոպերա-

ցիայի յերբեմնի աշխատակից Աթանասյանը: Նրա անորոշ լենթարկան մտածողության մենք հակադրում ենք մեր սխալմբ. մենք ուզում ենք ճանապարհը դարձնել կարճ, ապարատավոր քան կարելի յե ձևուն և միաժամանակ վոչ թե յետատիճանյան, այլ յերկատիճանյան դարձնել: Ինչ վերաբերում է ընկ. Դանելյանին, վորն ասում է թե ուժեր չկան, հարմարություններ չկան և «Նոր Մեղրի» ընկերությունը ժամանակավոր է հիմնված և վտակման է յենթակա. դա հայտնաբերում է մի փաստ, վոր Նոր-Մեղրի ընկերության գրությունն ինքնին պարզում է Դանելյանի ճասի ամբողջ խախուտությունը, այդ ճասից պարզվում է նաև, վոր այդ ընկերության մեջ նստած են մարդիկ, վորոնք գիտուն մարդկանց հաշակ ունեն, բայց վորոնք ամբողջ ժամանակ կոոպերացիայի ասպարեզում ագիտություն են հայտնաբերել: Այդ ճասն ինքնին պատասխան է այն գրության, վորի մեջ գտնվում է այդ ընկերությունը շուրջիվ իրեն՝ Դանելյանի: Ընկեր Փանոսովազն այստեղ բարձրացնում է մի քանի հարցեր, նա ասում է, վոր պետք է անգի պայմաններին հարմարվող գործիքներ բերել առ: Ընկերներ, մենք վոչ մի գործիք չենք բերել, վոչ Բերլինից և վոչ Ամերիկայից, մենք իրավունք չունեցինք բերելու, վորովհետև մենք միայն կազմակերպչական կենտրոն ենք յեղել և զուրկ ձեր լիազորությունից ու միջոցներից. այս հանգամանքը բավական էր, վոր մենք զգույշ լինեցինք աշխատանքի ընթացքում: Ընկեր Փանոսովազը շատ լավ գիտե, վոր մենք ինվենտար չենք մատակարարել. ուրեմն նա փաստել չեր լինի. կասկածից դուրս է, վոր մատակարարման գործը մեր միության աստիճանակարգ հարցերից մեկն է, վորի վրա ասանձնապես կանգ առա իմ զեկուցման ընթացքում: Ինչ վերաբերում է կոոպերատիվներին յիստաա վարկ բացելու խնդրին յես պետք է ասեմ հետևյալը. յեթե ձեր ցանկությունն իրազործվեր, ապա մեզ անհրաժեշտ կը լիներ յերկու միլիոն վարկ, ասացեք խնդրեմ, վոր կազմակերպությունը կարող է յերկու միլիոն վարկ բաց անել: Մեր կոոպերացիան դեռ ևս իր սեփական միջոցները չունի, նա գրան պիտի ձգտի նախ և առաջ: Կոոպերատիվ ընկերության նպատակն է ստեղծել կոոպերատիվ Փոնդ: Դուք ընկեր Փանոսովազ, վորքան էք հավաքել: Յես չեմ ժխտում, վոր պետք է ձեզ վարկավորել, ողնել, վորպեսզի վտարի կանգնեք:

Ընկեր Ստամբուլյանին քիչ բան ունեմ ասելու. ինչ վերաբերում է մայիսի 20-ի զեկրեաին, յես ասացի, վոր մեր համագու-

մարբ չե, փոր աշտար ինանգրացիայի մասին պիտի խոսի: Մա-  
 յիսի 20-ի գեղընամ սպասողական կոտորացիան կարող է նաև  
 բեայիդացիայի յենթարկել գյուղաբնակչիան: Ի՞նչու մե և խնդր-  
 րը. սա ինանգրացիա չե բնկ. Մամբրոյցյան. գյուղն իր անու-  
 սական կյանքն աշխարհ մեծ պահանջ ունի, փոր թե Գյուղամանու-  
 սական և թե՛ Սպասողական կոտորացիան չեն կարող բախարսել  
 ներկայումս նրա կարիքները: Կոտորացիայի նպատակն և գյուղի  
 անասությանն ազատել մասնավոր առևտրականներ ի ազդեցու-  
 թյանից: Վաչ Գյուղամանական և փոչ Սպասողական կոտոր-  
 ացիան ասանձին-ասանձին պատասխանատու թյուն չեր կարող  
 վերցնել և ապա շկատարել այն. ներկայումս նրանք միասնաբար  
 ուժերով պիտի ոգնեն գյուղացուն միմեքք արտահանելու մեջ:

Ընկեր Մանուկը, աշտար հարց և հարուցում Փոխադրումների  
 և Գյուղկոտորացիայի միջև սերտ կապ ստեղծելու մասին: Յեւ  
 պետք է ասեմ, փոր փակերը գեւ ևս փորոչ կազմակերպչական հու-  
 նի մեջ չեն մտել. մենք գեմ չենք ի հարկե. փակերի համարքմակ-  
 ցությանը: Յեւ կարծամ Լմ, փոր արտադրող-գյուղացու գտնա-  
 կարգային կազմակերպությանը փոչ թե Փոխադրումն և, այլ Գյու-  
 դամանական կոտորատիվը. մեր նպատակն և Գյուղամանու-  
 սական կոտորացիան փորոչ ձևակերպում կազմակերպության  
 գործնել գյուղում: Յեթե այս գեպում փոխադրումներն ել կը-  
 դան մեզ սգնության՝ ավելի լավ: Ընկեր Նազարովը Վարկային  
 կոտորացիայի մասին խոսելիս փորոչ սխալների մեջ բնկավ. նա  
 ծանոթ չե մեր կազմակերպչական սխեմային: Մեր Վարկային բն-  
 կերությաններն ունիվերսալ, գյուղամանական կազմակեր-  
 պությաններ են: Չուս փարկային բնկերությաններ Հայաստանում  
 չկան և մենք գեմ ենք նրանց կազմակերպման: Ընկ. Նազարովն  
 ասաց, փոր սոցարնակչությանը քիչ և կոտորացման յենթարկ-  
 վել: Մենք ել ենք գտնում, փոր 6, 8 տկոսը չափազանց քիչ և  
 ապագայում մենք կը խոսենք փոչ թե գյուղական աղաքնակչու-  
 թյան փեց ասկոսի, այլ 16 տկոսի մասին: Ամեն բան, աստի-  
 յապեւ կոտորացումը գյուղությամբ չի լինում. մենք աստիճա-  
 նաբար հարթում ենք գծավորությանները մեր ճանապարհի վրա-  
 չից գեպի կոտորատիվ հասարակարգը, գեպի սոցիալիզմ: Ընկ.  
 Մելքոնյանն աշտար հարց բարձրացրեց, փոր վարքան կարելի  
 չե, մենք բանակով չգրողվենք՝ այլ փորակով. չլիանեմ ո՞վ ասաց,  
 փոր մենք բանակով ենք գրողվել: Մեր նպատակն և ամեն կերպ  
 ուժեղացնել մեր փորքի կոտորատիվ կազմակերպությանները,

խոկ յեթե գտնան մասին և նրա խոսքը, ապա այդ գտնումը պետք  
 է ասանին հերթին Եջմիածնի շրջանում (ծիծաղ, ճայնեք-գտու-  
 մը յեղել և): Չավածին կրկին գտել Եջմիածնում՝ սուրբ գործ և  
 կոտորացիայի նկատմամբ: Աշտար սպասում բնկ. Մահակյանը  
 ի՞նչ ասաց-յեւ սպասում եյի, փոր նա կոսի թե ի՞նչ ուղղու-  
 թյամբ մենք կարող ենք հեղաշրջել մեր նահապետական անասու-  
 թյունը: Մակայն բանից գուրս և գալիս, փոր ամեն ինչ կարելի  
 չեր անել, ամեն հնարավորության կար, բայց մենք փոչինչ չենք  
 արել: Նա որինակ բերեց, փոր արտեյների գոյությանը վիճելի  
 չե, փորովհետեւ կազմակերպչական գեկավարության իբրե թե  
 չի յեղել: Յեւ իմ գեկուցման մեջ արդեն ասացի, փոր մեր ցավը  
 գյուղամանական վարկի և ինվենտարի բացակայության  
 խնդիրն է: Այսպիսի գրության ասան մենք կանգնել ենք Նոր-Բա-  
 յաղեալի, Չանգեպուրի և Ղարաքիլիսայի շրջաններում, ուր ին-  
 վենտար, սեպարատոր շունենալու պատճառով փակվել են ար-  
 տեյները: Կազմակերպչական գեկավարության մասին հարկ չկա  
 գեմսոցիա անել: Աշտար կան բնկերներ, փորոնք կարող են վկա-  
 յել թե մենք մեր գործունեյության բնթացքում կազմակերպչա-  
 կան ի՞նչ գեկավարության ենք ունեցել: Այնուհետեւ բնկ. Մա-  
 հակյանն ասաց, փոր պետք է սոփորեցնել գյուղացիներին, իսկ  
 յեւ նրա ամբողջ ճասից յեկա այն յեպրակացության, փոր հար-  
 կավոր և սոփորեցնել նաև իրեն, բնկ. Մահակյանին: Գեկավարել  
 չի նշանակում ամբողջ գործն իր ձեռքն անել, և հրամաններ ար-  
 ձակել. կոտորացիան կամավոր, հասարակական, մասսայական  
 կազմակերպության է: Այն հարցին, փոր մեր ինտարուկտըների  
 շարքում չկան գյուղամաններ, չկան հասուկ սպեցներ, և փոր  
 նա մի այնպիսի թեկնածու յե մասնանշել և մենք չենք բնգունել,  
 դա իրողության և, սակայն նրա մասնանշամ սպեցից գուր ավե-  
 լի շատ բան գիտեք, յերեի. մենք անգործ և անպետք մարդիկ  
 չենք վերցնում աշխատանքի: Մենք բանիցս գիմել ենք Հոգժող-  
 կամին թե ավել մեզ ազրոնումներ, բայց ինչ արամ, փոր Հոգժող-  
 կամն ել ազրոնումներ և հրավիրում Թիֆլիսից:

Ընկ. Սուրյանի ճասի մասին յեւ չեմ խոսի, փորովհետեւ  
 Վարկային բնկերությանների մասին յեւ խոսել Լմ արդեն: Այժմ  
 Գաննանք բնկ. Գարբելյանին. նա ասում է, փոր ապրանքափոխա-  
 նակության չի կատարվել մեր կազմից: Նա յերկու խնդիր չի  
 տարբերում թե արդյոք մենք «Միության ենք, թե կազմակերպ-  
 չական կենտրոն»: Մենք ամեն բան արել ենք նկատի ունենալով

կոտպերացիայի ընդհանուր շահերը: Այնուհետև ասում է, թե կենտրոնը չի մտածել արտաքին շահանքում մեր պրոտուկցիան բեալիզացիայի յենթարկել: Յես գարմանում եմ, թե այս խրնդրում ի՞նչպես կարելի չէ մեղադրել մեզ, քանի վոր դեռ այդ պրոպուկցիան չկա, չենք տեսել: Նա ասում է, վոր մենք չենք ունեցել նաև ինվենտար, այսինքն՝ այն, ինչ յես սկզբում ձեզ զեկուցեցի. անտեղի կրկնություն է անում: Ասում է վոր վարկային ընկերությունը ժխտում է այդեղործական ընկերության գոյությունը: Գուք արդեն գիտեք, վոր դա թյուրիմացություն է: Այնուհետև նա ասում է, վոր պետք է բոլոր տեսակի կոտպերաաիվ ընկերությունները դաժավտանգավար: Յես չեմ իմանում թե ընկ. Գարբելյանն ինչպես է պահանջարկում դա, բայց «նրա մեծ ընկերները» արդեն պատկեցիա չլինի, այլ այն, վոր տվյալ պայմաններում՝ նա հնարավոր չէ և աննպատակահարմար է: Այնուհետև նա ասում է, թե ինչու գործակալները մասնավոր մարդկանց հայանում են, — ընկ. Շատասում է, վոր այստեղ հավաքվել են «ինչ վոր փորձումներ» հասմասին: «Միայն մենք ենք, վոր պիտի փորձենք» և այլն. բացությունը հեռապնդում է գյուղական անտեսության զարգացման: Յես այստեղ պարզ ասացի, վոր Գյուղատնտեսական կոտպերացիային կյանքի հրավիրողը, սուսջ քաշողը, աջակցողը յեղել է կոմունիստական կուսակցությունը:

Հայաստանի գյուղատնտեսության բարձրացման խնդիրները և նրանց կարևորությունը կոմունիստական կուսակցությունն ավելի լավ գիտե՞ քան թե «Գարբելյանները», վորոնք մեր նախորդների են յեղած այս յերկրում, և բացի ավերածությունից թարանից փոշինչ լավ բան չեն արել աշխատավոր գյուղացիության համար, սա գիտեն բոլոր այստեղ ներկա յեղողները:

Այստեղ ասում են նաև, վոր գյուղերում նստողները փիլիսոփաներ չեն, վոր ամեն ինչ ըմբռնեն: Յես ցավում եմ, վոր գյուղերում դեռ ևս կան այնպիսի «փիլիսոփաներ», ինչպիսին Գարբելյանն է և նրանց ներկայությամբ վտանգավոր է մեր ժողովրդը:

դական շահերի տեսակետից: Համագումարն այսօր լիկվիդացիայի կյենթարկի Գյուղկոտպիկենտրոնը և կրնարի մի նոր վարչություն գործերը տանելու համար: Յես կարծում եմ, վոր կոտպերացիայի գործը մենք սարել ենք ուղիղ գծով: Համագումարը, անշուշտ, կասի իր խոսքը, իսկ մտնել մեր հոգու խորքերը, քրքրել այն դա վաչ Գարբելյանի և վոչ նրա նմանների գործն է:

ՆԱԽԱԳԱՀ.—Անձնական բացատրության համար խոսք է արվում ընկ. Գանիյելյանին:

ԳԱՆԵԼՅԱՆ.—Ընկերներ, յես ներողություն յեմ խնդրում, վոր ձեր թանգակին ժամերից խլում յեմ Յրուպե: Դա նրա համար է, վոր Գյուղկոտպիկենտրոնի նախագահն իր պատասխանների մեջ շատ հետուն գնաց: Այստեղ ընկերներ, արդյոք դուք նկատեցիք վորեւ անձնական մոտիվ, դուք նկատեցի՞ք վորեւ գիտում. յես վորպես համագումարի անդամ, պարտականություն եյի համարում ինձ նկատված բացերի մասին խոսել. համագումարը պահանջում է աշխատանք իր ընտրած մարմիններից և սակայն այդ մարմիններ վոչ մի կոպեկ չեն ունեցել աշխատանք տանել: Յես այժմ տեսնում եմ, վոր այն ինչ վոր ընկ. Մելիքը մասնանշում է՝ այդ մասին մենք կը խոսենք ուրիշ տեղ և վոչ թե այստեղ: Այժմ թույլ տվեք անցնեմ կենտրոնի մասին:

ՆԱԽԱԳԱՀ.—Գուք խոսք ուղեցիք միայն անձնական հայաստանության համար այժմ ձեր ժամանակը լրացել է: Սուքը արբվում է անձնական բացատրության համար ընկ. Գարբելյանին:

ԳԱԲՐԵԼՅԱՆ.—Այստեղ ընկ. նախագահը իր պատասխանի մեջ հայտնեց, վոր յես ինչ վոր ասանձին նկատատումներով եմ մոտենում չոչափված խնդիրներին: Յես միայն ասացի, վոր այստեղ Համագումարում պետք է նկատի առնվեն գավառից յեկամ ընկերների կարծիքը և բոս այն աշխատանք մեր քայքայված գյուղացիության կարիքները լսել, վորպեսզի մենք կարողանանք արտահայտիչ լինել այդ կարիքներին: Ահա այն սկզբունքային խնդիրը, վոր յես դրի այստեղ:

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկ. Գարբելյանի արտահայտությունների վերաբերմամբ այն թե այստեղ ինչ փորձումներ վոր լինեն պետք է բղխեն մեր կողմից այս մասին պետք է ասել, վոր ամենավատ բանը այն է, վոր ընկ. Գարբելյանը չի կարող իր խոսքերի վրա կանգնած մնալ: Այն վորոչ ուղղությամբ, վորը գծված է մեր կուսակցության 13-րդ Համագումարի կողմից—այդ գիծը մեկ կտանեմ անշեղ: Կոմունիստական կուսակցությունը շատ վա-

դուց դառել ե մեր ժողովրդի ուղիւ-կայանը: Դեմոգոգիայով  
զբաղվելու կարիք չկա պետք ե շատ մտածել և լուրջ զբաղվել:  
Յես շատ ուրախ եմ, վոր բնկեր Գաբրելյանը զգաց իր սխալը և  
ուղղվեց վորոշ չափով: Ընկերներ, բնկ. Մելիքի գեկուցման առ-  
թիվ բանաձև կընդունենք վերջում: Կարծիր բանակայինները  
վարչությունը խնդրում և ձեզ ներկա լինել յերեկոյան ժամը 8-ին  
Կինոյում:

ՄԱԼԱՖԵՅԵՎ.—Ընկերներ, Գյուղատնտեսության նախագահ  
բնկ. Մելիքի գեկուցումից և զբամական հաշվապետությունից յես  
յեկա այն յեզրակացության, վոր Գյուղատնտեսությունը 6 ամսվա  
ընթացքում շատ բան և արել, յես մեր շրջանի կողմից շնորհա-  
կարություն ևմ հայանում նրա գործունեության համար:

ՆԱԽԱԳԱՀ.—Այս աստիճանությունը կը կցվի բանաձևին:

Նիստը փակվում և ժամը 6 և կեսին:

ԶՈՐՐՈՐԳ ՆԻՍՏ

Նախագահում ե բնկ. Մելիքի:

ՆԱԽԱԳԱՀ.—Ձեկուցման համար խոսքը պատկանում և հոգ-  
ժողկոմի տեղակալ բնկ. Ս. Շադունցին:

ԸՆԿԵՐՆԵՐ, Գյուղատնտեսական Կոոպերատիվ Կենտրոնի  
վարչության աստիճանությամբ՝ յես ձեզ պիտի գեկուցեմ գյու-  
ղատնտեսության ասպարիզում Հայաստանի Հոգժողկոմատի հեր-  
թական անկյիքների մասին:

Հարցն ինքնին բովանդատին մեծ և ու բնդարձակ և մի ժամվա  
գեկուցման ընթացքում փոշ մի կերպ չի կարելի այն սպասել: Յես  
կաշխատեմ, սակայն բնդ հանուր գծերով, ձեզ ծանոթացնել գյու-  
ղատնտեսական քաղաքականության ասպարիզում մեր ունենալիք  
հերթական խնդիրների հետ:

Մեր գյուղատնտեսական քաղաքականությանը վերաբերող  
յերկու հարցերի վրա կանց կատենն արիչ յերկու գեկուցողներ:  
Այդ հարցերից մեկը՝ մեր վարկային քաղաքականության հար-  
ցրն և:

Ձեզ անհայտ չե, ավելի շուտ ձեզ՝ քան փորեկ մեկին բով  
հայանի յե, փոր ահա կես ասարի յե, ինչ մեզ մոտ գոյություն ունի  
և գործում և Գյուղատնտեսական Բանկ, փորի միջոցով և Հայաս-  
տանի Հոգժողկոմատը վարում և իր վարկային քաղաքականու-  
թյանը:

Հայաստանի Հոգժողկոմատի վարկային քաղաքականության  
հիմնական նպատակն և հանդիսանում վերականգնել գյուղատնտե-  
սության այն ճյուղերը, փորոնք իմպերիալիստական, աղգամիջ-  
յան ու քաղաքացիական պատերազմների ժամանակ անհամեմատ  
ավելի յեն տուժել: Մեր քաղաքականության ընթացքն ուղղված և  
գեպի գյուղական տնտեսության հիմնական կապիտալի վերա-  
կանգնումը, փորպիտիք աստիճին հերթին հանդիսանում են լծկան  
անասունները, գյուղատնտեսական մեքենաներն ու գործիքները,  
սերմացուն և այլն: Միննայն ժամանակ մեր այդ քաղաքականու-  
թյանը խրախուսիչ—գործավիզ և հանդիսանում հում նյութերի  
արդյունաբերական մշակման, մասնավորապես պանրագործու-  
թյան, պահածունների արտադրության, գրենայի գործին, գինե-  
գործության և այլն: Մանրամասնությունները դուք կը լսեք մեր  
վարկային քաղաքականության առթիվ լինելիք գեկուցումից:

Մյուս հարցը, փոր ըստ ինքյան ամենահետաքրքրական ու յե-  
րախառնորդ պիտի լինի,—դա Հոգժողկոմատի կոոպերատիվ քա-  
ղաքականության յնունն և: Այդ խնդրում հոգժողկոմատն իր քաղաքա-  
կանությունը վարել և Գյուղատնտեսական Կոոպերատիվ Կենտրո-  
նի միջոցով, փորի հիմնական նպատակը հանդիսանում եր.—

1.—Մեր գյուղացիությանն արտեյները, տաննձին բնկերու-  
թյանները, կամ մունաները մեջ համախմբելը, 2.—Գյուղատնտե-  
սության բարձրացումն ու արանից բղիտղ գյուղացիական տնտե-  
սության միջերջների պնունն ու սպասումը: Այս հարցի վրա ար-  
գեն կանց ասով Գյուղատնտեսական Կոոպերատիվ Կենտրոնի գոր-  
ծունեյության գեկուցողը, ըստ փորում յես այլևս ձեզ ու շաղբու-  
թյունն այդ խնդրով չեմ ծանրարենի:

Յես պիտի կանց ասնեմ այն միջոցների վրա, փոր Հոգժողկո-  
մատն անհրաժեշտ և համարում գյուղատնտեսության բարձրաց-  
ման համար, հենց այս տարիանից ձեռնարկել անմիջականպես իր  
անդարտաների միջոցով: Այս հարցը,—գյուղատնտեսության  
բարձրացման խնդիրը, հասկապես մեր ու շաղբությունն և գրա-  
վում փոշ միայն նրա համար, փոր նրանից և կախված մեր Հանրա-  
պետության գյուղացիության նյութական ու կուլտուրական կյան-  
քի պայմանների բարելավումը, այլ նաև նրա համար, փոր գյու-  
ղատնտեսության բարձրացման և նրա ինտենսիվ զարգացման հետ  
սերտ կերպով կապված և հում նյութերի յեվ արդյունաբերական  
բազանների ստեղծելը, փոր իր հերթին խիտնելու յե քաղաքային  
արդյունաբերության և փոխադրական միջոցների (транспорты) վե-

րականգնմանն ու զարգացմանը: Այս մասին ձեզ ասում է Հայաստանում մեր կառավարութեան կատարած աշխատանքը: Մենք պարզ գիտակցում եյինք, վոր մեր քայքայված յերկրում, վորպիսին հանգիստանում է մերը, գլխավոր, իսկ սուսը շրջանում՝ նույնիսկ բացառիկ ու շագրութուն պիտի դարձվեր գյուղատնտեսութեան վերականգնման, ցանքերի տարածութեան բնոյալմանն ու մեծացման վրա: Յեթե Հայաստանում 1914 թ. ցանքերի տարածութունը 237, 153 դեա. էր, — ապա իմպերիալիստական պատերազմը, վոր Հայաստանի նկատմամբ ավելի քան անողորհ հանդիսացավ, իսկ նրան հետևող ու դաշնակցական կուսակցութեան կողմից շարունակ ստեղծվող ու հրահրվող ազգամիջյան ու քաղաքացիական կռիվները ցանքերի այդ տարածութունը կրճատեցին ու 1919 թ. հասցրին մինչև 60, 718 դեա.:

Գյուղատնտեսութեան այսպիսի բնկած ու անմխիթար դրութեան ժամանակ խոսել Հայաստանում Փարբիկաների և գործարանների կասուցման մասին, — կը լինի անմտութուն և անհեթեթութուն: Գյուղատնտեսութեան ասպարիզում մեր յետամյա կատարած աշխատանքները վորոշ հետևանքներ ավել են: Յեւ միայն նրանից հետո, յերբ մեր փոքրերի տակի հոգն ամուր ու կայուն զգացինք, յերբ ամբողջովեց մեր գյուղը, միայն այն ժամանակ մենք սկսեցինք յուրջ կերպով մտածել նաև բողոքի արգյունարերութեան վերականգնման մասին: Գյուղատնտեսութեան զարգացումը բարձրացնում է գյուղացիութեան գնադական բնոյանակութունը, վորն իր հերթին նպաստում է բարձր ու գյուղի միջեւ լինելիք ապրանքափոխանակութեան, հետևապես նաև արդյունարերութեան զարգացման: Եւ բարձրացնում է գյուղացու վնասուհակութունը, այսինքն՝ նպաստում է գյուղատնտեսութեան վերջապես գյուղատնտեսութեան զարգացումը ստեղծում է նյութական-կուլտուրական միճակի բարեխափում բանվորութեան և առավել ևս՝ գյուղացիութեան համար: Ահա թե ինչո՞ւ մենք գյուղատնտեսութեան վերականգնման հարցը՝ մեր բոլոր աշխատանքների հիմնաքարն ենք համարում:

Մեր հեղափոխութեանն ամենից ասաջ մեզ ասածագրեց հողի մասնավոր սեփականութեան յուժարքի հարցը: Յեւ չե՞ խոսում հողերի բնագրայման մասին, վոր շատ նշանակալից է այն յերկրների համար, վորտեղ խոշոր մասնատիրական կարվածներ կան, ինչպես Ազրբեջանն իր բեզականն ու խանական խոշոր հողամասերով, ինչպես Վաստատանն իր իշխանների կուլտուրականն ու մեծ

կարվածներով և կամ վերջապես Ռ. Ս. Ֆ. Հ., վորը խորհրդայնացումից հետո 40 միլլիոն (սոսնց Սիբիրի) դեա. կարվածատիրական հողեր գյուղացիութեանը հանձնեց: Հայ մեղիքները, դժբախտարար, նման վոչ մի ժառանգութուն չեն թողել մեզ, իսկ մեր ազգայնացրած հայ, նույնիսկ վոչ տոհմիկ ծագում ունեցող, հարուստներին պատկանող մի քանի կարվածներն և Եջմիածնի վանքի հողերը՝ մեր ձեռքն անցան ամենամխիթար միճակի մեջ: Չնայելով սրան, այնուամենայնիվ հողային հարցի լուծումը մեզնից ուժերի մեծ լարումն էր պահանջում: Դաշնակցական կուսակցութեան՝ «Հայաստանը միայն հայերի համար» քաղաքականութեանը հանգել էր նրան, վոր համարյա բոլոր թուրքական գյուղերի հողերն իրենց բնակիչներին մաքրելուց հետո դրավում եյին հայ գյուղացիները: Լեռնային շրջանների վատ հողեր ունեցող հայ գյուղացիներն անմիջապես տեղավորվում եյին յերբեմն թուրքերին պատկանող լավ հողեր ունեցող գյուղերում: Մյուս կողմից էլ կոտորված կամ Հայաստանի սահմաններից փախած թուրք գյուղացիների հողերը դրավում եյին դաշնակցական Հայաստանը յեկած գաղթական հայերը, չնայելով, վոր դրանցից շատ շատերն սպավելով դաշնակցութեան վարած ալան-թալանի քաղաքականութեանից՝ բնավ չեյին էլ մտածում հողի հետ կապվել, և մինչև Հայաստանի խորհրդայնացումը՝ ապրում եյին բացառապես հափրչտակութեամբ:

Այս խնդրում մեր հերթական հոգսը պիտի լիներ ասանց հապաղելու ձեռնարկել հողային սեփորմին, խուսափելով նրա մեխանիքական հավասարեցումից և ազգայնական տարածայնութուններից:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ էր հողի հետ կապել յեկած ու մինչև որս էլ թյուրքիայից յեկող գաղթականներին, դրանց թվում նաև հարևան հանրապետութուններում դաշնակցականներին տիրապետութեան որոք ապաստան գտած և այժմ Հայաստան վերադարձող թուրք փախստականներին:

Հանրապետութեան ազգային փոքրամասնութունները միանգամայն բավարարված են հողով: Ըստ իմ ունեցած տեղեկութունների, մեր հողբաժնի տվյալների համաձայն, մինչև այս տարվա հողաշինարարական աշխատանքների սկսելը՝ բավարարված եյին. —

Սրանցից .—

Գավառներ	Գյուղ. թիվը	Ազգաբնակ քանակը	Հողային նորման.		Ծանոթութիւն
			Դաշտ. գոտում	Լեռն. գոտում	
Յերևանի	108	21.773	1 1/2 - 1/4 դ.	1 1/2 դ.	Ձանգեղուրի մասին տեղեկութիւններ միտնողամայն բացակայում են, վորովհետև այնտեղ հողաշինարարական աշխատանք սկսվել են կատարվել միայն այս տարվանից, իսկ Լեռնականի տեղեկութիւնները վերաբերում են միայն 7 գավառամասին:
Եջմիածնի	41	9 787	1 1/2 »	1 »	
Ն. Բայազետի	25	10.700	»	1-1/2 »	
Լոռի-Փամբակի	36	22.510	»	1-3 »	
Դիլիջանի	26	21.700	1 1/2 »	1 »	
Դարալագյազի	11	4.775	»	1 »	
Մեղրիի	7	983	800 ք. ս.	1 »	
Լեռնականի	14	6.010	—	1 1/2 - 2	
<b>Ընդամենը՝</b>	<b>268</b>	<b>98.238</b>			

Ազգութիւն	Թիվը	Ծանոթութիւն
Թուրքեր	71.029	Այստեղ չեն մտնում Ձանգեղուրի և Լեռնականի գավառները:
Ռուս և մալակ	18.125	
Յեզդիներ	6.210	
Ասորիներ	2.036	
Հույներ	670	Եջմիածնի գավառում:
Հրեաներ	168	
<b>Ընդամենը՝</b>	<b>98.238</b>	

Բացի սրանցից ամբողջ Հայաստանում հոգով բավարարված են՝ 677,225 գյուղացիներ

Հողով բավարարված ազգաբնակչության թիվը հորհրդային Հայաստանում ըստ գավառների

(Կլոր թվերով)

1. Լոռի-Փամբակ . . . . . 130,000
2. Լեռնական . . . . . 115,000
3. Եջմիածին . . . . . 110,000
4. Յերևան . . . . . 110,000
5. Ն.-Բայազետ . . . . . 105,000
6. Դարալագյազ . . . . . 35,000
7. Դիլիջան . . . . . 75,000
8. Ձանգեղուր-Մեղրի . . . . . 95,000

Ընդամենը . . . . . 775,000 հոգի

Յեւ այս մեծ գործի ու աշխատանքի իրականացման ժամանակ մեր հողաշինարարութիւնը հիմնական սկզբունքները, — հողացրվա-

ծութիւնի վռնջացումը, գյուղական հողաբաժինների մանրացումն և այլն, — ըստ հնարավորին պահպանված են:

Ճիշտ է, այդ ասպարիզում մեր կատարած աշխատանքների համար դաշնակցականները մեզ հայտնում են և լաց ու կոծ բարձրացնում՝ մեզ մոտ յեկած հայ գաղթականների տեղավորման խնդրի շուրջը: Մեզ մեղադրում են, վոր իբր թե յեկած գաղթականներին մենք հող չենք տալիս և հարկադրում ենք վերադառնալ: Անորինակ սուտ վորովհետև նախքան գաղթականներին Հայաստանի սահմաններից ներս բնդունելը, մենք նրանց հատկացնում ենք վորոչ չըջաններ կամ հողամասեր ու ապա միայն մեր համաձայնութիւնը տալիս նրանց տեղափոխութիւնն առթիվ: Հողով մենք աղքատ ենք, սակայն մեզ մոտ յեկող հողի աշխատավորն առանց հողի չի մնա:

Մեր նպատակն է այս տարի ամբողջ Հայաստանում ավարտել հողային ռեֆորմը, վորովհետև այս աշխատանքն ավարտելուց հետո միայն գյուղացիութիւնը հնարավորութիւն կունենա կանոնավոր հող-ոգտագործման յեղանակներին անցնել: Հողային ռեֆորմի կանոնավոր կիրառումից կախված է և գյուղատնտեսութիւնը բարձրացման խնդիրը:

Այս խնդրի հետ սերտորեն կապված է նաև մեր արտատեղիների հարցը: Այս հարցը վաղուց է խորհրդակցութիւնների քըննութիւնն առարկա դարձել, սակայն նա իր վերջնական և սկզբունքային լուծումն ստացավ Անդրկենտրոնում կամի մոտ ժամանակներս տեղի ունեցած նստաչըջանի վորոչմամբ, վորով և ղեկավարվելու յե Հայաստանի Հողօրհրմամբ:

Հետագայում այդ քաղաքականութիւնը հանդիւր յե հետեյալին. —

1. Արտատեղիներին հարցը քննութիւնն առնել ինչպես հողային ընդհանուր հարցի — անասնապահութիւնն և հողագործութիւնն, այնպես էլ մեր եկոնոմիկայի յերկու հիմնական ճյուղերի դարգացման հետանկարներին հետ շողկապված:

2. Հրաժարվել մինչ հոկտեմբեր գոյութիւնն ունեցող անասնապահութիւնն հին կառուցված քր վերականգնելուց և նրա վերականգնակերպութիւնը տանել յերկրի բնական — աշխարհաբանական պայմաններին, ժամանակակից կուլտուր — տեխնիքական պահանջներին ու մեր սոցիալիստական իդյալների համաձայն:

3. Նպատակ ղնել քոչվորական և կիսաքոչվորական անասնապահութիւնից անցնելու կուլտուրական հողագործութիւնն՝ ձմե-

լային արտատեղիներում, և ալպյան տնտեսութեան՝ ամառային արտատեղիներում, ընդ միևնույն ազգաբնակչութեանը տնտեսական այգ նոր ձևերին անցնելուն՝ ցույց տալ ամենամեծ աջակցութեամբ:

4. Հանձնարարել Ա. Ս. Ֆ. Խ. Հ. Պետպլանին կազմելու քոչ-վորական և կիսաքոչվորական անասնապահութեանից հողագործութեան և ալպյան տնտեսութեաններին անցնելու ծրագիր՝ գյուղատնտեսութեան շրջանացման հիմունքներով, վոստոկում և ջրամատակարարում՝ հարթավայրերում, խոտացանութեան և ցեղային անասունների բուծում՝ ալպյան տնտեսութեաններում:

Անդրկենտրոնի նստաշրջանն այսպես և ձևակերպել իր տեսակետն այգ խնդրի նկատմամբ: Այսպես էր նաև ու այսպես էլ կը մնա մեր տեսակետը: Այս հարցում մենք կրկնակի շափով զգուշ կը լինենք և վոչ մի շաղկապակալութեան հրապարակ չենք բերի, ինչպես այգ պահանջվում էր՝ Անդրկենտրոնի նստաշրջանի միջոցին այգ հարցի քննութեան ժամանակ՝ մամուլում լույս տեսած մի քանի հոդվածներով, հոդվածներ, վորոնք ավելի շուտ սողորված էին ազգայնական հոգեբանութեամբ, քան այգ հարցի լուծման համար կոնկրետ առաջարկներ անելու ցանկութեամբ: Մենք զգուշ կը լինենք մինչև այն սասիճան, վոր վոչ մի գյուղական տնտեսութեան չենք զոհարել:

Արտատեղիների հարցի լուծման հետ մենք հարակցում ենք նաև մեր անտառների կառուցի թշնամու՝ Բաբայանցի խնդիրը: Անտառների նկատմամբ այս յերև տարիների ընթացքում մեր կատարած աշխատանքը խոշոր շափերով յեղել և նրանց պաշտպանութեան գործը: Հայաստանի անտառուտը 5 տոկոսից չի անցնում, մինչդեռ մեր հարևան հանրապետութեան մեջ՝ Վրաստանում նա 27 տոկոսի յե հավասար: Այն ժամանակ, յերբ Վրաստանի անտառների տարածութեանը 2,000,000 դես. և (կոյր թվերով), Հայաստանինը՝ մոտավորապես 220,000 դես. է: Յեզ աստիճան արչալանքներն ու գաշնակցականների ժամանակ տեղի ունեցած հայ-վրացական-ազրբեյջանական կռիւներն ամենից առաջ անդրադարձել են մեր անտառների վրա: Նրանք կտրատվում, վոչնչացվում էին: Մեր նպատակն է ձեզ հետ, մեր գյուղացիութեան հետ միասին, — քանի վոր այս դեպքում առանց ձեր սգնութեան վոչինչ չի կարելի անել, — լարել մեր բոլոր ուժերը, գործադրել բոլոր միջոցները, վոր անտառներից մի ավելորդ փայտի կտոր անգամ գորս չտարվի: Ձեր աչքի լույսի պես պահեցեք

անտառները, հետեցեք մեր անտառապահներին, վոր նրանք վաճառքի չհանեն այն, վորովհետև վերջ ի վերջո անտառները պահպանվում են ձեզ համար:

Ոգտվելով մեր անտառային պահակների թուլութեանից, — թեև արդարութեանը պահանջում է տեղ, վոր ներկայումս նրանք ուժեղացել են, — և կաշառելով ցարական հին պահակներին՝ անասնապահները անտառներում հիմնել են իրենց ձմեռանոցները:

Մեզ մոտ ձմեռանոցներ գոյութեան ունին շատ վաղուց, սակայն կան և բոլորովին նորերը: Ինչ գնով ուզում է թող լինի, Բաբայանցից մեկ ալուամենայնիվ պիտի ազատվենք. մեկ այն պիտի լուծարվի յեթարկեմք: Այս խնդիրը մեզ համար հարվածային նշանակութեան ունի: Յեզ վորպեսզի այն լուծարքի յենթարկենք, դրա համար անհրաժեշտ է, վոր լուծարքի յենթարկված ձմեռանոցների տերերին բավարարելու համար, նրանց մեր արտատեղիների Ֆոնդից վորոչ հողամասեր հատկացնենք: Արտատեղիների հարցում մեր հերթական անելիքն է — ստուգել իրապես մեր ունեցած արտատեղիները, նրանց՝ ինչպես մեր անասնապահների, նույնպես և յեկվոր քոչվորների մեջ ճշտութեամբ և հավասարապես բաշխելու համար: Այդպիսի աշխատանք արդեն կատարվում է Դիլիջանի գաղտնու և ամենայն հավանականութեամբ այս տարի կավարտվի, իսկ մյուս գաղտնեւում նման աշխատանքների մենք կձեռնարկենք յեկող տարվանից:

Հողաչինարարական աշխատանքները ցույց տվին, վոր Հայաստանում մենք ունենք 144—150 հազար տնտեսութեան և, ըստ կենտրոնի միջոցով տվյալների, 204.000 դես. ցանքսերի տարածութեամբ: Միայն համառ ու տոկոսն աշխատանքով մեր գյուղացիութեանը հաջողվել է մինչև այգ շափի ընդարձակել իր ցանքսերի տարածութեանը: Այստեղ անպայման կառավարութեան սգնութեան կարիք է զգացվել և այգ սգնութեանը նրան ցույց տրվել է:

44 հազար տնտեսութեաններից ուղի յերև հինգերորդականը ինվենտարից գուրկ են յեղել:

Ինվենտարագուրկ տնտեսութեաններն ըստ գաղտնեւների. —

1. Յերևանի	գաղտնու	. . .	19,074 տնտես.
2. Եջմիածնի	»	. . .	18,822 »

3. Լեւինականի	»	16,657	»
4. Լոռի-Փամբակի	»	11,119	»
5. Նոր-Քաջազգի	»	10,231	»
6. Դիլիջանի	»	6,542	»
7. Դարալագյազի	»	4,076	»
8. Զանգեզուրի	»	4,036	»
9. Մեղրիի	»	600	»

Ընդամենը՝ 91,237 տնտես:

Յեւ վախ 1923 թ., ախինքն այն ժամանակ, յերբ 1922 թ. միայն Հողթողկոմատն ազգաբնակչությանը բաժանել էր 1553 գյուխ անասուն, իսկ բացի Հողթողկոմատնից այդ գործու գյուղավել է նաև Հայկեստանը: Միայն 1923 թ. «Գոսխտր» լծկան անասուններ գնելու համար բաց է թողել 100.000 ուրլի, վորպիսի գումարի յել անասուններ գնվել ու ազգաբնակչությանը բաշխվել է: Իհարկե այդ անասուններն առաջին հերթին բաշխվել են դաշտային շրջանի ազգաբնակչությանը:

Պիտի խոտտուվանել, վոր մենք մեծ չափերով ոգնություն հասցրել ենք դաշտային շրջանի ազգաբնակչության: Այստեղ մենք հետապնդում էլինք յերկու նպատակի.—նախ՝ մեծացնել ցանքսերի տարածությունը, և ապա՝ անցնելու ավելի բարձր կուլտուրաների՝ գլխավորապես բամբակագործության ընդլայնման: Յեւ մեր այդ նպատակին մենք հասանք: Ճիշտ է, սակայն, մինչև պատերազմյան նորմաներին չթեակոխեցինք: Ըստ Կենտրոնավարի ավյալների մենք ունենք.—

Տարիներ	1914	1919	1922	1923	1924
Ցանքսերի տարածություն	237153	60786	82403	153694	204000

Այս ուղղությամբ մենք դեռ ելի պիտի աշխատենք:

Այդ քանակությունից բամբակի ցանքսերի տակ ներկա տարում մենք ունենք 15.301 դես.: Իսկ անասության այս ճյուղը մեզ մոտ համարվում է ամենապահանջավածը: Այդ տեսակետից հետաքրքրական է բամբակագործության մշակությամբ պրազվող գյուղացիության լծկան անասուններով ապահովված լինելու տեղեկությունները.—

Հայաստանում յեղած 113.866 գյուխ լծկան անասուններից 8.151 գյուխը պատկանում է հացահատիկների մշակությամբ պրազվող գյուղացիության: Այս տեղեկությունները Կենտրոնավարի ավյալներն են, վորոնց, ավելի կամ պակաս չափով, ճշմար-

տության մոտ պիտի համարել: Միևնույն ժամանակ այդ տեղեկությունները պերճախոս ապացույց են, վոր մեր այսպես թե այնպես ապահովված անասության մի բնագավառը՝ բամբակագործությունը ծայր աստիճանի կարիք է դգում լծկան անասունների: Այստեղ յուրաքանչյուր անասությանը կես գյուխ անասունից մի քիչ ավելի յե գալիս: Մեր անասության մնացած ճյուղերն էլ անասուններով ապահովված չեն: Մենք նպատակ ենք դրել այս տարի Գյուղատնտեսական Բանկի միջոցով գյուղացիությանը բաժանել 500 գյուխ անասուն:

Մեր գյուղացիության ունեցած մեռյալ ինվեստարի մասին ստանձնապես հարկ էլ չկա խոսելու: Մեր յերկիրն այդ տեսակետից ավելի քան ազբատ է: Հետևյալ աղյուսյակը պրա ավելի քան ցայտուն ապացույցն է:

Շրջաններն	Բամբակագործությամբ պրազվող անասության թիվը	Ընտանիքի աւղաժ. թիվը			Լծկոն անաս.		Լծկան անասուն. ապահովված գյուղացիության 0-ը
		Տղամարդ	Կին	Ընդամենը	Բանակը	նրանցից բեռնակիր	
Արագղայանի	2270	4346	4502	8848	1043	155	0,46
Ղամաբլուի	2557	5053	4872	9925	1237	151	0,48
Վեդի-Բասարի	1989	2 25	2346	4871	1054	58	0,97
Յերեան քաղաքի	88	199	203	402	72	20	0,80
Սամոզարի	1688	3430	3424	6854	896	75	0,53
Աշտարակի	32	101	92	193	18	13	0,56
Ղուրղուզուլու	4510	8944	8647	1759	2301	301	0,51
Զանգիբասարի	2062	4196	3947	8143	1250	315	0,60
Եջմիածին քաղաքի	596	1508	1798	3306	280	26	0,49
Ընդամենը	14.866	30.302	28.831	60.133	8.151	614	0,55

Հայաստանի յերեք գավառների նկատմամբ գյուղատնտեսական գործիքների պակասը 1924 թ. համեմատությամբ՝ հետևյալ տեղեկանքներով է արտահայտվում.—

	1919 թ.	իսկ՝	1923 թ.
Գութան	81,9	տոկոս	08,8 տոկոս
Արոր	76,6	»	72,8 »
Գերանդի	89,1	»	82,5 »

Սրանից Հողթողկոմատը 1922 թ. բաշխել է 3888 ուրլու: 1923-24 թ. գյուղատնտեսական ինվեստար ստացվել է 140.570 ո. 96 կոպ.: Իսկ այս տարի Գյուղատնտեսական Բանկի միջոցով

յենթադրվում է գյուղացիութեանը բաց թողնել 400.000 ուրբլու:

Սրա վրա ավելացրեք և այն հանրահայտ հանգամանքը, վոր գաշնակցական կառավարութեանը մեզ թողել էր միանգամայն ավերված ու քայքայված մի յերկիր առանց մի հատիկ սերբացուի, — ապա միանգամայն պարզ կլինի, վոր հերոսական ճիգեր եյին հարկավոր մեր գյուղատնտեսութեանը վերականգնելու համար:

ԳԱՎԱՌՆԵՐ	1914 թ.			1919 թ.			1923 թ.		
	Գութ.	Արոր.	գերդի	Գութ.	Արոր.	գերդի	Գութ.	Արոր	գերդի
Յերևանի . . . . .	2772	11.223	30.336	948	3442	4726	1392	5031	5036
Լենինականի . . . . .	4832	37.380	54.500	381	4291	2910	1119	7976	6342
Ղարաքիլիսայի . . . . .	2130	8090	15.070	525	2746	3275	521	2546	6095
Ընդամենը . . . . .	9734	57.193	99.906	1854	10.479	10.911	3031	15.558	17.473

Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ սրից պահանջ զգացվեց սերմացու ներմուծել: Այդ ոգնութեանը մեզ ցույց տվեց Խորհրդային Ռուսաստանը:

Հողօգտագործար 1922 թ. սերմացու բաժանել է. —

- 1. Յերևանի գավառում . . . . . 47,637 փութ
- 2. Եջմիածնի » . . . . . 43,000 »
- 3. Լենինականի » . . . . . 73,518 »
- 4. Ղարաքիլիսայի » . . . . . 14,524 »
- 5. Լոռու » . . . . . 22,068 »
- 6. Իջևանի » . . . . . 35,683 »
- 7. Նոր-Ֆաջաղեղի » . . . . . 19,021 »
- 8. Դարալագյաղի » . . . . . 4,646 »
- 9. Չանգեզուրի » . . . . . 2,950 »
- 10. Մեղրիի » . . . . . 1,600 »

Ընդամենը՝ 264,647 փութ

Նույնը մենք արել ենք նաև 1923 և 1924 թ. թ.: Վերոհիշյալ սերմանման կամ պանիրների ժամանակ մենք Հայպետրանկի միջոցով ազգաբնակչությանը բաժանել ենք 226,589 փութ սերմացու: Գյուղական տնտեսութեան ամբողջական զուգընթաց նվազեց նաև սերմավարի պահանջը, սակայն նա, — այդ պահանջը, — տակավին կա: Յեւ այս տարի, մենք Գյուղբանկի միջոցով դարձյալ ազգաբնակչությանը պիտի բաժանենք 200.000 փութ սերմացու:

Ինչպես տեսնում եք, այս բոլորը համարյա արված է միայն

գաշտային շրջանների համար: Լեռնային շրջանը շատ քիչ է արժանացել մեր ուշադրութեան:

Գյուղատնտեսական քաղաքականութեան ասպարիզում այս տարի սակայն, մեր լողունգն է լինելու՝ «ավելի մեծ ուշադրութեամբ մեր լեռնային շրջաններին»: Առաջիկա տարին մեր աշխատանքը պիտի ընթանա այս լողունգով: Կասկածից դուրս է, վոր մենք անուշադրութեան չենք մատնի նաև յերկրագործութեանը, վորը մինչև այժմ մնում է մեր գյուղատնտեսութեան հիմական ճյուղը: Այգեգործութեանը, մանավանդ գինեգործութեանը, վորը մեր կողմից նույնպես հարկավոր չափով ուշադրութեան չի արժանացել: Բամբակագործութեան մասին յես արդեն չեմ խոսում, վորովհետև նա ավելի ուժեղ թափով պիտի զարգանա, քան այդ յեղել է մինչև այժմ: Դրա համար մեկխորատիվ աշխատանքները, ինչպես մինչև այժմ, պիտի տարվեն մեծ յեռանդով ու թափով: Մեր սպասարկութեամբ, անցյալի անկայուն վալյուտայով անգամ, մենք այդ ասպարիզում մեծ աշխատանք ենք կատարել: Ավելորդ չենք համարում այստեղ հայտնել, վորովհետև գաշնակցականներն իրենց մամուլում այդ առթիվ ազմկում են, իսկ միամիտ ու գործին անտեղյակ մարդիկ կարող են դրան հավատալ, — վոր մեր այդ մեծ գործում մեզ ոգնել է միմիայն Ս.Խ.Հ.Մ.: Մինչդեռ ամեն տեսակի բարեգործական կոմիտեների խոստումները՝ մնում են միմիայն խոստումներ: Նրանց այդ առթիվ ցույց տված ոգնութեանն այնքան չնչին է ու աննշան, վոր հազիվ թե այդ մասին հարկ զգացվի խոսել: Այնքան ազմուկ հանած Մոսկվայի «Հոկ»-ի բաժանմունքը, վորը պարտավորվել էր իր վրա վերցնել Եվջիլյարի ջրանցքի կառուցման ծախսերը, միայն այժմ մեզ հայտնում է, վոր ամսական կարող է տալ բնդամենը 1000 ուրբլի, այսինքն՝ ջրանցքի կառուցման ծախսերի մնացորդը նա կարող է տալ 1 և կեսից 2 տարվա ընթացքում:

Այսպես է առհասարակ նրանց ցույց տված ոգնութեանը: Ու չնայելով այդ ամենին, մենք այժմ ունենք Եջմիածնի, Եվջիլյարի, Շահումյանի անվան և վերջապես Լենինի (Շիրակի) ջրանցքը, վորը մինչև այժմ մեզ նստել է 600.000 ուրբլի: Այս տարի մենք ձեռնարկում ենք մեր յերկրի և առաջին հերթին Դավալուի ճահիճների հետազոտման ու ցամաքեցման աշխատանքներին ու կարճեանի ջրանցքի կառուցման, մի ջրանցքի, վոր վոր

ուղեւոր յե միմիայն և բնդամենը 600 դես. տարածութիւն, վորը սակայն կենսական անհրաժեշտութիւն և մի այնպիսի սակավահող շրջանի համար, վորպիսին հանդիսանում և Մեղրիի շրջանը:

Հողային սեփորմի հետեանքով, ինչպես գյուղում, նույնպես և գյուղերի միջև փոխակել են նաև հողային փոխհարաբերութիւնները: Այս նոր փոխհարաբերութիւնները մեզնից պահանջում են ջրառդատագործման և ջրամատակարարման գործում կատարել համապատասխան փոփոխութիւններ: Այս հարցում դժբախտաբար մենք մինչև արժ մել կառավարվում ենք սարգարների ժամանակներից մնացած կարգերով: Այս տարի այդ հարցը մենք իր ամբողջ ծավալով պիտի ուսումնասիրենք, և մեր հողային նոր փոխհարաբերութիւններին համապատասխան՝ ջրամատակարարման նոր կանոններ սահմանենք:

Յեթե չհաշվենք կաթնամթերքների մշակման գործը, — ապա մեր յերկրում Գյուղատնտեսական կուպերացիան մեծ ուշադրութիւն պիտի դարձնի մեխիորատիվ աշխատանքների վրա: Մեխիորատիվ բնկերութիւններ մեզ մոտ չեն յեղել և այժմ ել չկան. այդպիսիք պիտի ստեղծել և հմուտ կերպով ղեկավարել: Մշակված և արդեն ժողկոմխորհին և ներկայացրված համապատասխան վորոշման նախագիծ, վորի հաստատվելուց հետո՝ Հայգյուղկոտպի հետ միասին համերաշխորեն մենք ձեռնարկելու յենք այդ աշխատանքին:

Յեվ չնայելով այդ բոլորին, այնուամենայնիվ մեր ուշադրութիւն 65—70 տակտը նվիրել ենք մեր լեռնային շրջաններին: Անասնապահութիւնը դարգացում, — ահա թե ինչին պիտի ձգտենք: Այստեղ հսկայական պահանջ և զգացվում ցուցադրական կերակրումների, պահպանութիւն համապատասխան ցուցմունքների, լավագույն տեսակների պարզեատրման, բուծարանների և բեղմնավորման կայանների միջոցով տեղական անասունների տեսակների մասսայական աղնվացման: Դիլիջանում մենք ունենք մի բուծարան, սակայն նա տակավին շատ քիչ և նմանվում բուծարանի: Յերկրորդ բուծարանը պիտի հիմնել մեր պետական Ֆիրմային կից՝ Լոսի-Փամբակ գավառում, մեր անասնաձրահական ամենամեծ շրջանում: Այդ բուծարանների հիմնական նպատակն և յինելու — բարելավել տեղական անասունների տեսակները: Մեր նպատակն և զարկ տալ անասնապահութիւնը դարգացմանը, հիմնել պետական մի քանի պանրագործարաններ ու յուղագործարաններ այն շրջաններում, վորտեղ տակավին կոտպե-

րացիան մուտք չե գործել և այդպիսի գործարաններ չկան: Ամենահամառ կերպով պայքար ենք մղելու անասունների կերակրման և պահպանութիւն պայմանների բարելավման համար:

Միևնույն ժամանակ կատարել կոիվ ենք մղելու ամեն տեսակի հիվանդութիւնների, մանավանդ մեր յերկրից անբաժան ժանգախտի համաճարակի դեմ, վորոնց ուսումնասիրելու համար Հողժողկոմատար յենթադրում և բանալ բակտերիոյոգիական ինստիտուտ: Ի պատիվ մեր գավառական անասնաբուժների ու բուժակների, պիտի ասել, վոր չնայելով բոլոր գիտութիւններին, այդ աշխատանքը նրանք տարել են փառավոր կերպով: 1923 թվին ժանտախտի համաճարակի բնթացքի մասին բերածս թվական տվյալները, միայն իմ առածներն են հաստատում:

Գ.Ա.Գ.Ա.Ռ.Ն.Ե.Ր	Կորակված վայր. թիւը	Ցուցակագրված անասունների քանակը	Մինչև սրսկումները			Սրսկված անասունների քանակը			Պայանվածների քանակը
			Հիվանդ	կոտորված	%	կոտորված	0/0		
Լենինականի	5	4.104	123	86	69.9	2077	13	0.62	3
Գորակապաղ	12	5.733	458	324	70.7	5707	41	0.71	9
Գիլիջ. ն.	22	19.831	1101	840	75.2	15.945	209	1.31	16
Եջմիածին	15	11.248	737	377	51.1	10.088	135	1.33	14
Յերևան	42	29.676	2356	1682	71.3	30.984	259	0.82	20
Ն. Քայազնի	46	48.557	4525	2931	64.7	45.976	301	0.65	33
Լ. Փամբակի	21	20.801	1568	915	58.3	18.334	322	1.80	16
Ընդամենը	163	140.950	10.868	7.145	85.7%	129.128	1.290	1.01%	111

Այս աղյուսակը սարգ կերպով ապացուցում և, վոր շատ գյուղեր համաճարակի ժամանակ անասնաբուժ հրավիրելու խնդրում մեծ անտարբերութիւն են ցուցադրել: Այնտեղ, վորտեղ անասնաբուժն աշխատել և՛ սատկումների տակտը շատ չնչին և, — ահա թե ինչ և ասումվերոհիշյալ մեր աղյուսակը: Առաջիկա տարում մեր գյուղացիութիւն այդ անտարբերութիւնը պիտի լուծարքի յենթարկել: Պիտի ուսումնասիրել անասունների հիվանդութիւնները և նրանց սաղկումները մինիմումի հասցնել: Սրանք են յինելու մեր անասնաբուժական բաժնի հերթական անելիքները:

Մանր անասունների բարելավման գործում այս տարի մեր հիմնական նպատակը՝ նրան ուսումնասիրելն և յինելու: Մեզնում մանր անասունները բնավ ուսումնասիրված չեն և այդ մեր ամենամեծ պակասութիւնն և: Այս և առաջիկա տարիներում այդ

բացը մենք կը վերացնենք: Այս տարի մենք կստեղծենք 3—5 հազար գլուխ տեղական տեսակի վոչխարներ չոտ:

Առանձին ուշադրութիւն ենք դարձնելու ձիաբուծութեան և ջորիբուծութեան վրա: Շատ ընկերների թվում է, թէ այս հարցում մեր ձիաբուծարանն ուղիղ ընթացք չի բռնել: Այս տեսակետը ճիշտ է: Ճիշտ է, վոր բեղմնավորման կամպանիային մենք ուշ ձեռնարկեցինք: մենք այն սկսեցինք միայն այս տարվանից և յերեք գավառներում մոտավորապես 300 գլուղական ձի բեղմնավորեցինք: Ավելին մեր ձիաբուծարանն անել չեր կարող և չպիտի յել աներ: Մեր յերկրի ձիերի տեսակներն ու վորակը մեզ բոլորովին անծանոթ էյին, և այս ասպարիզում մենք հարկադրված էյինք ատանց ծրագրի և վորոշ սխտեմի աշխատելու: Իսկ բեղմնավորման կամպանիային ուշ ձեռնարկեցինք, վորովհետեւ ձիաբուծարանն այս յերեք տարվա ընթացքում հարկադրված եր ինքն յուրովի աշխատել: Վոչ մի տեղից վորեւէ ոգնութիւն չստանալով, Հողօրդկոման ստիպված եր պահել միայն գոյութիւն ունեցող ձիաբուծարանը, ատանց հնարավորութիւն ունենալու ընդարձակել այն: Մեր ունեցած ձիերը պահանջում էյին ընարութիւն, խնամք և այլն: Անհրաժեշտ եր մեր պայմանների պահանջներին համապատասխան ձիեր ստեղծելու հարցն ուսումնասիրել: Այժմ այդ հարցն ըստ ամենայնի ուսումնասիրված է: Ձիաբուծարանին հանձնարարված և ազնվացնել տեղական (Ղազախի, Ղարաբաղի և այլն) ձիերի տեսակները, ստեղծել տեղական լծկան ձիերի տեսակներ, և առաջիկա տարին բեղմնավորման կամպանիայի անցնել այնպիսի լայն ծրագրով, վորպիսի առնվազն հնարավոր լինի պարիսկել մեր 5—6 գավառները: Սրան դուզընթաց ձիաբուծարանը պիտի մտածի բռնակիր անասուններ ստեղծելու մասին: Մեր ճանապարհները վատ են և մեծ մասամբ լեռնային նեղ ու անձուկ արահետներ: Այստեղ հարկավոր է ուժեղ և դիմացկուն կենդանի, իսկ այդպիսին հանդիսանում է ջորին: Այս տարի մեր ձիաբուծարանը ձեռնամուխ և լինելու ջորիաբուծութեան զարգացման:

Մեր լեռնային շրջանների ազգաբնակչութիւնը վերջ ի վերջո պիտի համոզվի և համաձայնի, վոր արյւյան մարգագետիններ ստեղծելը, խոտացանութիւնն ու անասնապահութիւնն են հանդիսանալու նրա հիմնական գրազմունքը: Նրանք հաց կուսնան: Դաշտային շրջանները նրանց կտան և լավ հաց կտան, վորովհետեւ նրանց համար բացվելու յեն սերմագտիչ կայաններ և

ստեղծվելու յեն շարժական սերմագտիչ սայլաչարք: Մանուֆակտուրա յել կտան, վորովհետեւ բամբակագործութեան զարգացման վրա մեծ ուշադրութիւն և դարձվում, մինչև իսկ «չոտի» դեմ պարտադիր կերպով պայքար հայտարարելը: Մեր լեռնային շրջաններն աստիճաբար, սակայն վճռական ու վերջնական կերպով պիտի հրաժարվեն հացաբույսերի մշակույթից: Այս դեպքում արդեն մեր յերկրի շրջանացման հարցն է ծագում: Վերջին ժամանակներս այդ խնդրի մասին գրելուց դադարել են, մինչդեռ վոչ այնքան հետո անցյալում ամենքը, ով չեր ծուլանում, դրա մասին գրում և բղավում եր:

Այդ շրջանացմանը մենք կանցնենք այս տարվանից և կը կիրարկենք աստիճանաբար, սակայն վճռականորեն և գլուղական տնտեսութիւններին առանց վորեւէ փնաս պատճառելու:

Ահա ընդհանուր գծերով այն միջոցները, վորոնք գալու յեն վերականգնելու մեր գլուղատնտեսութեան հիմնական ճյուղերը: Վերահիշյալներից բացի՝ մենք ունենք նաև ոժանդակ ճյուղեր, վորպիսիք են՝ շերամապահութիւնն ու մեղվաբուծութիւնը:

Իժբաղտաբար, բացի Զանգեզուրի գավառից, մեր գլուղացիութիւնը քիչ է զբաղվում շերամապահութեամբ, վորով հրաշալիորեն կարելի յեր զբաղվել մեր յերկրում: Այս ասպարիզում մեր հերթական անելիքներն են լինելու. — ընդարձակել թթաստանները Յերևանի մեր շերամապահական կայանն և ուժեղացնել Մեղրիի գրենիորների արտելը: Այս տարի մեր կայանները պատրաստել են 10.000 տուփ գրենա: Յեկող տարի պիտի պատրաստենք առնվազն 15.000 տուփ:

Մեղվաբուծութեան զարգացման համար մենք ամենախիստ կերպով կյանքում պիտի կիրառենք փոտախտի դեմ պայքարելու առթիվ կառավարութեան հրատարակած դեկրետը, տարածենք «ղաղան-բյաղի» տեսակի փեթակներ, սակայն ավելի էժան գնով, քանայդ յեղել և այս տարի: Պիտի միանգամայն ընդ միշտ հրաժարվել ամեն տեսակի փեթակներից, վորոնցից քիչ չկան մեր գավառներում:

Իմ գեկուցումը յրիվ չի լինի, յեթէ յես մի քանի խոսքով կանց չառնեմ նաև յերկու խնդրի—մեր՝ անտառային հարցի նկատմամբ ունեցած քաղաքականութեան և խորիքային տնտեսութիւնների վրա:

Անտառների տեսակետից մեր գրութիւնն ավելի քան կատարողի է: Վոչ մի տեղ անտառներն այնպես անխնա կերպով

չեն կոտորվել, ինչպես մեզանում: Աշխարհում վոչ մի յերկիր անառններով այնքան աղքատ չէ, ինչպես մերը: Յեթե վերցնենք յեվրոպական պետությունների անառններն,—ապա հետևյալ (բոս պրոֆ. Գեխտմանի) աստիճանավորումը կստանանք:

Սերբիա . . . . .	48	տոկոս
Ֆրանսիա . . . . .	17	»
Գերմանիա . . . . .	25	»
Ավստրո-Հունգարիա . . . . .	29	»
Շվեդ-Նորվեգիա . . . . .	34	»

Մինչդեռ Հայաստանի անառնուտը հավասար է ընդամենը 5—6 տոկոսի, իսկ Ն. Գ. Գենկեյի տվյալները համաձայն (Անդրը-կովկասում) ընդհանուր տարածության յուրաքանչյուր քառակուսի վերստին անառն ընկնում է.—

Սեծովյան նահանգում . . . . .	58	տոկոս
Քուիթայիսի » . . . . .	49	»
Չաքաթայի շրջանում . . . . .	40	»
Թիֆլիսի նահանգում . . . . .	31	»
Գանձակի » . . . . .	22	»
Բաղվի » . . . . .	13	»
Իսկ Յերևանի » ընդամ. . . . .	3.4	»

Այս թվերը պարզորեն մեզ ասում են, վոր այս հարցում մենք անառնաձեն լինել չենք կարող: Մեր անառնները 220,000 գես. վոզորմելի մնացորդը մենք՝ միայն մեր անառնային վարչակազմով չէ՛, վոր պիտի պաշտպանենք: Յուրաքանչյուր գյուղացի պիտի խորր գիտակցի, վոր անառնների պահպանության համար կոտավարության գործ զբաժնում ըստ ջանքերն արվում են միայն և միայն իրեն՝ գյուղացու համար, վոր նա անառնի յուրաքանչյուր թուփը պիտի իր աչքի յույսի պես պահի: Մեզ մոտ տեղական նշանակութուն ունեցող անառններ, ինչպես Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. մեջչկան, վորտեղ գյուղը կարող է ունենալ իր անառնարածիները: Մինչդեռ մեր Հանրապետության մեջ ախրապետող սակավահոգության պայմանները հարկադրում են ցանքատեղեր ստեղծել, նպատակով հսկայական տարածություններ անառններից մաքրել, չգիտակցելով, վոր անասոր նույնքան, յեթե վոչ ավելի՛ կարեն վոր է ու անհրաժեշտ, ինչպես և ցանքսերը: Գեպի անառնները չափազանց խնայուն և եկոնոմիկ վերարերմունքն ու նրանց պահպանությունն,—ասա այդ հարցում մեր ունենալիք քաղաքակառուցյունը: Անառններում արածացվող անասունների վրա մեր կողմից զբաղված մեծ հարկերը, մեծ կոճղավճարը, ձմերանոցների

անխնա վոչնչացումը հանդում են մի նպատակի,—անառնների անպայման պահպանության, և այս խնդրում մեր գյուղացիությունը պարտավոր է մեզ ոչնչել:

Ինչ վերաբերում է խորհրդային անառնություններին,—ապա սրանցով էլ մենք առանձնապես հարուստ չենք: Նրանք բոլորն էլ համարյա գուտ վորձնական-ցուցադրական նպատակ ունեն: Նախկին կոտավարություններից մենք ցուցադրական բնույթի միայն մի այդի յենք ստացել, մնացած այդիները, վորոնք այժմ մեր խորհրդային անառնություններն են հանդիսանում, կազմված են նախկին կալվածատերերի հողերից և նրանց շուրջն ընկած մասնատրական այգիներից: Կուլտուրականացնել նրանց, դարձնել վորձնական-ցուցադրական,—ասա մեր հիմնական նպատակը: Այստեղից պիտի տարածվեն բոլոր նորությունները (նոր գութանների, արակտորների և առհասարակ բոլոր նորագույն գործիքների ու մեքենաների կիրարկումն և այլն): Այստեղից պիտի գյուղացիությունը մատակարարվեն նոր ծառատունիկեր, նոր սերմեր, այստեղ նա պիտի սովորի վնասատուների դեմ պայքարելու յեղանակներն, և այլն, և այլն: Յեվ այսոր մենք կարող ենք ստել ու հաստատել, վոր մեր այդ հիմնական նպատակին մենք աստիճանաբար հասնում ենք: Մեր խորհրդային անառնությանը գյուղացին արդեն սովորել է: Նա այլևս, ինչպես հին ժամանակն էր, չի սարսափում մեր կալվածքից, ընդհակառակն նա խորհուրդներ ստանալու համար ազատ կերպով հաճախում է այնտեղ: Մեր յերկրորդ խորհրդային անառնությունը, վորտեղ մենք դարկ ենք սայլիս ծխախոտագործության, այս տարի իր հարեան գյուղացիներին ձրիարար բաժանել է մեկ միլիոն ծխախոտի շիթիներ: Մնացած խորհրդային անառնություններն ունեն այլ կոչում: Այսպես, մեր առաջին անառնությունն ունի պաղատու «մայր» այգի, ամերիկական խոզողի վաղերի, պողատու ծառերի անկարան և այլն: Ունենք գուտ արդյունարերական ախլի մեկ խորհրդային անառնություն—այդ յերկրորդ անառնությունն է, վոր իր ուժերով ու միջոցներով բժրկել է իր չքնապատի գյուղացիների այգիները: Այս անառնության գրազմանքի գլխավոր ճյուղերն են՝ այգեգործությունն ու բամբակապործությունը: Մակայն բամբակապործությունն աստիճանաբար պիտի կրճատվի և այս անառնությունը բացառապես պիտի գրազվի այգեգործությամբ:

Ժամանակի սղության պատճառով յես շատ խնդիրներ չոչափելի չկարողացա: Ստեղծված մեր անառնության յուրաքանչյուր

ճյուղի նկատմամբ մեր ունեցած քաղաքականութեան հիմնական խնդիրները պարզաբանված են: Մենք հավատում ենք, վոր մեր բնձեռնած միջոցներն անպայման կը փոխեն գյուղատնտեսութեան աշխարհի կառուցվածքը, վոր նա աստիճանաբար հետաձնաց ձեւերից կանցնի նոր, արդյունավետ ու ինտենսիվ ձեւերի: Յեւ այս նոր սխառեմը պիտի գա բավարարելու մի պահանջի—ժողովրդական տնտեսութեան միասնականութեան, այսինքն՝ քաղաքային արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան սերտ կապի: Մեր քաղաքային խոշոր արդյունաբերութեանն ազգայնացրված և նա կառուցված և սոցիալիստական հիմունքներով: Սոցիալիստական հիմունքներով զարգացող արդյունաբերութեանը պահանջում և և նույնանման հիմունքներով զարգացող գյուղատնտեսութեան: Անհատական հիմունքներով գոյութեան ունեցող գյուղական տնտեսութեանը չի կարող բավարարել սոցիալիստական արդյունաբերութեան պահանջներին, վորովհետև անհատական տնտեսութեանն իր բնույթով հարատև չէ:

Այսոր գյուղացին ցանում և բամբակ, վազր ցորեն և այլն, իսկ այս տատանումները, յեթե չստենք կործանարար, գեթ բացասար են անդրադասում մեր արդյունաբերութեան վրա: Վերջինս պիտի լավ իմանա և խորապես համոզված լինի, թե ինքը գյուղացին ի՞նչ և վո՞րքան քանակութեամբ և ստանալու: Իսկ այդ հնարավոր և անել միայն այն ժամանակ, յերբ գյուղական առանձին տնտեսութեանների միացած կազմակերպութեան կը լինի: Այդ կազմակերպութեանը կը լինի վերանորոգող, կազմվող միութեանը, վորի աշխատանքների հիմնական մեթոդը պիտի լինի— իրեն՝ գյուղական ազգաբնակչության ինֆիագործունեության բոլորանվեր զարգացումը: Հենց գյուղացու իրեն մասնակցութեանից, նրա՝ դեպի գյուղատնտեսութեան վերականգնումը հայանաբերած շահագրգռութեանից և կախված և և՛ մեր գյուղատնտեսական կոսպեքացիայի և՛ մեր գյուղատնտեսութեան գրութեանը: Թեքս մի առ ժամանակ և՛ մենք հարկադրված կը լինենք գյուղատնտեսութեան մեջ այս կամ այն նորամուծումներն անելու համար պարտադիր միջոցները դիմել, իսկ խաղողն ու բամբակը բժշկելու համար՝ մենք անպատճառ այդ միջոցին դիմելու չենք: Դեռ յերկար ժամանակ գրավոր ու բանավոր պրոպագանդ ենք մղելու: Սակայն գյուղատնտեսութեան վերականգնման համար հարկավոր և գյուղական մասսայի իր իսկ ախարհութեանն ու ինքնագործունեութեանը:

Ավելի մեծ ուշադրութեան յեռնային շրջաններին, գյուղական մասսաների կողմից ավելի մեծ թափով ինքնագործունեութեան և ախարհութեան, յիսկատար աջակցութեան և հովանավորութեան դաշտային մշակութեաններին, առանձնապես արդյունաբերական կուլտուրաներին,—ահա գյուղատնտեսութեան ասպարիզում մեր ունենալիք քաղաքականութեանը:

ՉՈՐՐՈՐԴ ԵՒՍՏ.  
ՆԱԽԱԳԱՀՈՒՄ Ե ԸՆԿ. ՄԵԼԻՔԸ.

(Նիստը բացվում և առավոտյան Ժ. 8 և կիսին, սեպտ. 22-ին).  
ՆԱԽԱԳԱՀ.—Ստացած գրավոր հարցերին գեկուցող բնկ. Շաղունցն այժմ կը պատասխանի:

ՇԱԴՈՒՆՅ.—Ընկերներ, յես ժամանակ չունեցա ստացածս գրավոր հարցերը սխառեմատիզացիայի յենթարկել և այդ պատճառով կը պատասխանեմ ստացաման կարգով.

Ինձ հարց են տալիս «հարկերի մասին և ասում են թե ինչու բոլոր շրջաններում հարկերը լրիվ չենք գանձում»: Ճիշտ և, վոր որինակ Չանգեզուրի գավառում հարկերը լրիվ չենք գանձում և այդ ունի իր պատճառը: Չանգեզուրի գավառը Հայաստանի այլ գավառների շարքում ամենից շատ և տուժելի թե քաղաքացիական և թե իմպերիալիստական պատերազմներից: Այդ գավառը, Հայաստանում խորհրդային իշխանութեան գոյութեան առաջին 3 տարիների ընթացքում չեք կարողացել վերականգնել իր տնտեսութեանը: Չմոռանամ, վոր Չանգեզուրի գավառն ամենից շատ ու յերկարատև յեղել և դաշնակցականների իշխանութեան ներքո. այնտեղ իրենց կամայականութեանները սանձարձակ կերպով կատարել են Մելիք-Յուլչյանի, Համադասպի և Անդրանիկի նման, ներեցեք արտահայտութեանս, սրիկաները: Նրանք ամբողջ գավառը թալանել ու կողոպտել յայն և գյուղացու տնտեսութեան մեջ գորութեան չեյին թողել: Ի հարկե, այսպիսի գավառի նրկատմամբ, ամենից առաջ մենք պետք և ուշադիր վերաբերմունք ունենայինք և մի առ ժամանակ ապատելով հարկից, նպաստելինք տնտեսութեան վերականգնման: Այս տարվանից թե՛ Չանգեզուրում և թե՛ այլուր, մանավանդ Նոր-Բայազետի գավառում մենք հարկեր կը գանձենք լրիվ:

Ճիշտ և, նաև այն, վոր մենք անցյալ տարի շահագրգռման նրկատմումներով հարկատվութեանից ազատեցինք բամբակա-

գործներին և մեղվարույծներին. վորոչ գյուրություններ ստեղծեցինք խոտարուծությամբ զբաղվողների համար: Կառավարության վորոչմամբ հարկատվությունից հինգ տարով միանգամայն ազատված են ծխախոտագործությամբ զբաղվողները, նպատակ ունենալով նրա զարգացման համար նպաստավոր պայմաններ ըստեղծել: Հարկերից ազատվել են նաև վերաբնակվողները՝ յերեք տարի ժամանակով, դրա իմաստը նույնպես ձեզ համար հասկանալի յե:

Հետաքրքրվում են իմանալ, թե՛ «ի՞նչու է արտահայտվել Հոգժողկոմի դերը Գյուղատնտեսական Կոոպերացիայի ասպարիզում»: Ուշագրությամբ լսողները արդեն իմացած կը լինեն, բնկ. Մեղիքի խոսքն այն մասին, վոր նրանք աշխատել են Հոգժողկոմի հովանու տակ: Դա ճիշտ է և բավական է բնորոշած լինելու համար մեր դերը Գյուղատնտեսական Կոոպերացիայի ասպարիզում: Ավելացնելու վոչինչ չունեմ:

Հետաքրքրվում են իմանալ, թե՛ «ի՞նչ միջոցներ են ձեռք առնում լեռնային շրջաններում կարկտահարության դեմ կռվելու համար»: Դրա դեմ կռվելու միջոցներ կան, բայց մեզանից դրանք շատ հեռու յեն և մեզ համար առ այժմ անմատչելի: Ճիշտն ասած՝ մի կողմից լավ է, վոր լեռնային մասերում հացահատիկի մշակությամբ չզբաղվեն, քանի վոր կարկտահարության և յենթարկվում և դրա փոխարեն անցնեն անասնապահության:

Հարց են տալիս. «գուքանների մասին և հետաքրքրվում իմանալ, թե մի՞թե հորհրդային Ռուսաստանի ծանր ինդուստրիան վերականգնել է»: Ամենից ասաջ ասել, վոր Խորհրդային Ռուսաստանից գութաններ ու մանգաղներ ստանալու համար անպատճապեաք չե, վորպեսզի ծանր ինդուստրիան վերականգնած լինի, յերկրորդ՝ վոր յեթե մինչև անգամ վերականգնած չլինի, համենայն դեպս, Ռուսաստանում դրանց պաշարները մնացել էլին և յերրորդ՝ ասացեք ինդրեմ, ի՞նչից գիտեք, վոր գութաններն ու մանգաղները չենք ստանում արտասահմանից:

Հարց են տալիս. «Արդյո՞ք համարում եմք մեմք հողաշինարարական աշխատանքները նոր-Բայագեդի գավառում արդեն ավարտված»: Այո, բայց յեղած վորոչ թերությունները վերացնելու համար, բնդհանրապես բոլոր գավառներում մենք ունենալու յենք հողաշահիներ, վորոնք կատարված աշխատանքի թերությունները վերացնելով կզբաղվեն, սակայն առանց նորից սկսելու:

Այստեղ հարց են տալիս, թե՛ «ի՞նչու մեմք չենք թույլա-

տրում անտառներից ոգտվել փայտահատման նպատակներով»: Դա ճիշտ չե այն չափով, ինչ չափով, վոր խոսքը վերաբերում է «Կողբ» արտելին: Ցավը նրանումն է, վոր այս արտելը միշտ ուղում է ճանաչվել իբրև չքավոր. բնկերներ, միք մոռանա, վոր «Կողբ»-ն արդեն յերեք տարի յե գոյություն ունի և թույլ տվեք, վոր նա չքավոր լինելուց դադարի և դարձած լինի գոնե միջակ: Մերժում ենք նաև այն դեպքերում, յերբ մի առանձին անհատ, խորհրդային աշխատավոր դիմում է մեզ և խնդրում փայտահատման իրավունք ստանալու: Մենք այդ դեպքերում մերժում ենք և կը մերժենք ապագայումն էլ, կը բավարարենք միայն այն ժամանակ, յերբ կողկետիվ կերպով համապատասխան Գործկոմների միջոցով կը դիմեն մեզ տներ կառուցելու համար փայտահատման համար իրավունք խնդրելով:

«Ջրայլին հարցի մասին» հետաքրքրվողներին այժմ յես չեմ պատասխանի. հետաքրքրվողները թող անցնեն Հոգժողկոմատ և այնտեղ անհրաժեշտ պատասխաններ կստանան:

Հարց են տալիս. «Չալթուկի մասին»: Կարճ կասեմ, վոր մեր նպատակն է չալթուկի ցանքսերն իսպառ վերացնել:

Մի ընկեր ուզում է իմանալ, թե՛ «ի՞նչ միջոցներ ձեռք պիտի առնեն հողացրվածությունը հարթավայրերում վերացնելու համար»: Պետք է ասեմ, վոր այդ նպատակով վոչ այս և վոչ էլ հետեվյալ տարի նոր հողաբաժանության մենք չենք ձեռնարկի:

Հարց են տալիս, թե՛ «ի՞նչ քաղաքականություն ենք վարելու բամբակի մշակության նկատմամբ»: Մեր նպատակն է հետեյալ տարի բամբակի մշակությունը Հայաստանում հասցնել առնվազն 18-ից մինչ 20 հազար դեսյատինի: Սակայն, սրա իրագործումը կապված է մեր Ֆինանսական ոեսուրսներից: Ավելացնեմ, վոր մեր պետական բյուդջեն այժմ Համամիութենական կարգով քննվում է Մոսկվայում և նրա հաստատումից հետո ամեն ինչ կը պարզվի:

Ինձ հարց են տալիս, «թե արդյո՞ք Հոգժողկոմատն ունի փորձնական բամբակի դաշտեր»: Վոչ, Հոգժողկոմատն այդպիսիք չունի, այդ ունի «Գոախտը» և գտնվում է Յերեանին շատ մոտիկ, այնպես, վոր յեթե համագումարի նախագահությունը ժամանակի տեսակետից դյուրություններ ստեղծի, այն ժամանակ մենք կարող ենք գնալ և այդ ցուցադաշտին մոտից ծանոթանալ: Նրան շատ մոտիկ գտնվում է նաև բամբակագործ գործարանը, վոր նույնպես կարող ենք տեսնել:

Ընկ. Սարգսյանն ուզում է իմանալ. «Թե պատերազմից առաջ Հայաստանի ներկա տերիտորիայի վրա ինչ չափով է յեղել բուսականի մշակութունը»: Ճիշտ տեղեկություններ չկան և յես պետք է քննարկել Վարչութիւնը կը հայտարարեմ մեր կենտրոնական Վիճակագրական Վարչութիւն մեզ աված տեղեկությունը: Նրանց տեղեկութիւնը համաձայն այդ թիվը արտահայտուիմ է 14.000 դեղատիւով, դա է հարկէ ճիշտ չէ:

Մյուս հարցը վոր ինձ ավել են հետևյալն է. հետաքրքրվում ե իմանալ «թե չի լինի արդյոք, վոր մեր արտատեղիներ մեզ մնան, իսկ մեր հարևաններինը՝ վրաստանինն ու Ադրբեյջանինը իրանց»: Ընկերներ, վերջ է վերջն դա այդպես էլ լինելու չէ, ինչպես, ընդունել է Անդրկովկասյան կենտրոնական Գործադիր կոմիտեն, և վոր միանգամից, այլ աստիճանաբար: Մի ընկեր ուզում է իմանալ «թե ինչու այս տարի բամբակացանները չեն ազատվում հարկատվութիւնից: Ընկերներ, այդպիսի հարց տալը ամոթ է նույնպես և պատասխանալը, բայց համենայն դեպս թույլ ավելք միմիայն յերկու խոսք ասալ մասին: Ասացեք խնդրեմ արդյոք բամբակացանք մի դեսյատիւնից չի ստանում առնվազն 50 փութ բամբակ. ի հարկէ ստանում է. ապա ինչպես է, վոր նույն բամբակացանի կողքին հասցատիկների մշակութիւնը գրազվող գյուղացուն, վորը մի դեսյատիւնից ստանում է ընդամենը 25 փութ հացահատիկ, մենք նրանից պիտի ստանանք հարկ, իսկ բամբակացանից վոր:

Ինձ հարց են տալիս. «Թե ինչու ամենալավ հողերը տրվում են անտառացման համար»: Թույլ ավելք այս ամոթի պատճառով, վոր մեր գյուղացիք վերջին տարիների ընթացքում անթույլտարելի կերպով, անխնահ կոտորել են մեր անտառները: Պետք է ասեմ վոր անտառների պաշտպանութիւնը գործը մեր ուշադրութիւնը կենտրոնն է կազմում և մենք սրանից հետո չպիտի թույլ տանք վորպեսզի մի թիւ անգամ տարածութիւն անտառից անցնի այլ նպատակների: Ցանքների համար մենք ունինք բավականաչափ հող և սրանից հետո ինչ գնով էլ վոր լինի չպետք է թույլ տալ, վոր անտառներն այլևս վորչնչանան:

Ընկ. Մալաֆեեր հարց է տալիս. «Թե ինչու հարկերն ավելացան»: Թող ինքն ընկերն ասի թե անտեսութիւնը բարձրացումը յեղել է վերջերս թե վոր. այս անտեսութիւնը բարձրացել է և մենք դրա համեմատ բարձրացրել ենք և հարկերը: Առաջին տարին մենք քիչ էլինք հարկ նշանակել այն նպատակով, վոր գյուղացի-

ցիութիւն համար ծանր չլինէր և վորպեսզի նա հնարավորութիւն ունենար զարգանալու:

Ինձ հարց են տալիս՝ «Թե ինչ միջոցներ են ձեռք առնված հավերի ժանդարտի դեմ»: Այս մասին չեմ պատասխանի, հետաքրքրվողները մանրամասն կարող են տեղեկություններ ստանալ Հողօրհկոմատի գյուղատնտեսական բաժնում:

Մի ընկեր հետաքրքրվում է՝ «Շիրակի ջրանցքի կառուցման աշխատանքներով»: Կառուցման աշխատանքների 2 յերրորդ մասն արդեն պատրաստ է, մնում է միայն աշխատանքները շարունակել յերրորդ մասում: Այս աշխատանքների ավարտման համար պետք կը լինի դիմել մեր գյուղացոց ոժանդակութիւն: Փորձական կերպով ջուրը ջրանցքում այժմ էլ կարող ենք բաց թողնել:

Եջմիածնեցի ընկերներից մեկն ուզում է իմանալ՝ «Թե ինչու ջուրը չի բավականացնում հատկապես Սամաղարի շրջանում»: Ընկեր Սարգսյանն ինքը դրա պատճառներն ավելի լավ գիտէ: Գործը նրանումն է, վոր թույլատրված է յեղել ցանել 450 դեսյատին, իսկ նրանք ցանել են 600 դեսյատին: Հասկանալի չէ, վոր 450 դեսյատին տարածութիւնը վորոգելու համար հատկացված ջուրը չէր կարող բավականացնել 600 դեսյատինի և այդ պատճառով յեղել է այն, վոր բոլոր ցանքսերին ջուր չի հասել: Նույնը յեղել է նաև Վեդիբասարում:

Մյուս հարցը վերաբերում է ծխախոտագործութիւն. ընկ. Կլորիկյանն ուզում է իմանալ՝ «Թե ինչու խոշոր վարկ չի տրվում»: Ընկ. Կլորիկյանն արդեն գիտի, վոր ծխախոտագործութիւնը պետութիւն կողմից հովանավորվում է և վոր նրա զարգացմանը նպաստելու համար գյուղատնտեսութիւն այդ ճյուղը հինգ տարի ժամանակով ազատված է ամեն տեսակի տուրքերից: Դուք գիտեք նաև, վոր միևնույն այդ նպատակների համար «Չաֆ» խորհրդային տնտեսութիւնն ամբողջովին հատկացված է այդ գործին, և այդ տեղից է, վոր նա տարածվում է մեր գյուղացիութիւն մեջ: «Անասնաբուժական պերսոնալի» մասին պետք է ասեմ, վոր դրանց թիվը ի՞նչու չի մարտնչում Ռուսաստանումն էլ շատ սակավաթիվ է: Մեզանում էս նրա կազմը շատ աննշան է: Այս յերեք տարվա ընթացքում չի յեղել Հայաստանում մեկը, վոր ցանկանար գնալ Ռուսաստան և համապատասխան բարձրագույն դպրոցներում սովորեր անասնաբուժութիւն: Միայն չգիտեմ թե ինչպես էր, վոր այս տարի յերկու հոգի համաձայնվեցին անասնաբուժութիւն սովորել:

Ընկերներից մեկը հետաքրքրվում է իմանալ՝ «Թե արդյո՞ք այս տարի կավարտվի հողաշինարարական աշխատանքը Լեհիսկանի գավառում»: Այդ գավառից ընկ. Ավդալբեկյանը նոր է վերադարձել, ես նրա յերեսի վրա կարդում եմ, վոր այս տարի աշխատանքը կավարտվի: (Ավդալբեկյան). (տեղից կավարտվի այս տարի):

Մի ուրիշ ընկեր ուզում է իմանալ՝ «Թե արդյո՞ք կապալով տրված արոտատեղիները միևնույն կապալառուի ձեռքում մնալու յեն մի քանի տարի շարունակ, թե նրանցից առնվելու և ուրիշներին է տրվելու»: Ընկերներ, սա շատ գործնական հարց է և մենք պետք է աշխատենք, վորպեսզի հնարավորության չափով յերկար ժամանակ մնան ներկա կապալառուների ձեռքում: «Սերմացուի մասին» ընկ. Սաֆրազբեկյանն իր գեկուցման մեջ մամաման կանգ կառնի: Յեթե Գյուղբանկը չկարողացավ բավարարել, մենք մեր հայացքը կուղղենք նաև այդ կողմի վրա:

Հարց են տալիս «Ջուլֆա-Բագու յերկաթուղագծի մասին»: Յես կասեմ, վոր մենք նրա կառուցման աշխատանքներին վոչ մի մասնակցություն չունինք, յեթե մեր ձեռքում լիներ մենք արդեն անցելինք կացրել: Այնուհետև յես ստացել եմ մի շարք գործնական խնդիրներ շոչափող հարցեր, վորոնց յես այժմ չեմ պատասխանի. հետաքրքրվողները կարող են անցնել Հողժողովոմատ ուր և կստանան անհրաժեշտ տեղեկությունները:

«Մեդրու շրջանի հողաշինարարական աշխատանքների մասին» կասեմ, վոր այդ աշխատանքները փաստորեն դեռևս չեն սկսված, դրա համար անհրաժեշտ աշխատակիցներ արդեն մեկնել են և աշխատանքները շուտով կսկսեն:

Հարց են տալիս «Թե ինչու Ստեփանավանում կտրված քնտիր հողամասերը միացվում են պետական ֆոնդին»: Պետք է ասեմ, վոր նման յերևույթ տեղի չի ունեցել: «Գյուղերի հատակագծման մասին» կասեմ, վոր մեր ձեռքում չի. այդ աշխատանքների ղեկավարությունը մեր ձեռքից առնված և հանձնված է ժողովրդական կոմիտեաների խորհրդին կից Գերագույն տեխնիկական խորհրդին:

Հետաքրքրվում են իմանալ «բամբակի գների մասին»: Պետք է ասեմ, վոր այդ գները փաստորեն արդեն վորոշված են Գրախտին կից հատուկ հանձնաժողովում: Ընտիր տեսակի բամբակը գնահատված է հինգ ուրլի փութը, իսկ առաջի տեսակինը 4 ո. 50 կ. այս գները իրենց ուժի մեջ կը մտնեն Տնտեսական նորհրդակցության հաստատումից հետո:

Մի ընկեր ուզում է իմանալ «թե արդյո՞ք վորևէ ֆադաֆացի իրավունք ունի յերկու հանրապետության մեջ, կամ միևնույն հանրապետության մեջ յերկու հողամաս ունենալ» վոչ, իրավունք չունի, ամեն մի տնտես մի հանրապետության, միայն մի տեղում հողամաս ունենալ կարող է:

Ուզում են իմանալ թե «արդյո՞ք հնարավոր է Հողժողովոմատի մի ջոցով գնել ազնվացնել անասուններ»: Խնդրեմ, մենք այդ գործում մեր տնտեսներին հնարավոր աջակցությունը ցույց կտանք: Յես վերջացրի իմ պատասխանը (ծափեր):

ՆԱԽԱԳԱՀ.—Ձեկուցման առթիվ ըստ ելության արտահայտվել ցանկացողները թող ցուցակագրվեն:

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐԱՄ.—Յես կարծում եմ, վոր Հողժողովոմատի գեկուցման առթիվ վիճարանություններ չպետք է բաց անել, վորովհետև այդ գեկուցումը ինֆորմացիոն է և ներկա համագումարում Հողժողովոմատի գործունեությունը քննության առարկա լինել չի կարող:

ՏԵՂԻՑ.—Առաջարկում եմ խոսք չը բաց անել, վորովհետև Հողժողովոմատի գործունեությունից կարող ենք միայն շնորհակալ լինել:

ՄԱՆՈՒԿ.—Յեղած առաջարկները ընկեր Շադունցի գեկուցման առթիվ վիճարանություններ չը բացանելու մասին ճիշտ են. միայն պետք է մի բանաձևով բնորոշել Հողժողովոմատի դերը Գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման հանդեպ:

ՆԱԽԱԳԱՀ.—Ուրիշ առաջարկներ չկան, ուրեմն գեկուցումն առնենք ի գիտություն:

ՍԱՐԳՍՅԱՆ.—Ձեկուցումն ի գիտություն առնել չենք կարող վորովհետև համագումարը արդեն վճիռ ունի այն մասին, վոր բոլոր գեկուցումների մասին պետք է բանաձևեր հանենք: Ընկեր Մանուկի ասածը հիմք ընդունելով՝ պետք է բանաձև կազմել:

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկերներ, ընկեր Սարգսյանի առաջարկը ընդունելի՞ յե ձեզ համար (ձայներ տեղերից «այո-այո»): Այժմ նիստը ընդհատենք հինգ րոպեյով, վորից հետո Հայաստանի Գյուղատնտեսական Բանկի գործունեության մասին կը վեկուցի նրա վարիչը:

ՆԱԽԱԳԱՀ.—Համագումարի 4-րդ նիստը շարունակում ենք. խոսքը գեկուցման համար պատկանում է ընկ. Սաֆրազբեկյանին:

ՍԱՅՐԱԶԲԵԳՅԱՆ.—Ընկերներ, առաջին տարին է յերբ պլանաչափ կերպով Գյուղատնտեսական վարկավորման գործին ենք անց-

նում: Վերջին տարիները ընթացքում մենք ապրում եյինք փաստորեն բնական տնտեսութեան շրջան, թողնելով դրամը, դրամական շրջանառութեանը անցել եյինք ապրանքափոխանակութեան: Պետք է վերադառնալ նախկին դրամական շրջանառութեան սխառեմին վորպեսզի Գյուղատնտեսական վարկավորման գործը կազմակերպվեր:

Բնական մթերքների շրջանառութեան պայմաններում վարկավորումը յեղել է հատկապես և առաջին հերթին սոված ազգաբնակչութեան համար: Սրանց առաջին հերթին պետք է տալ սերմ վարկ և ահա այդ սերմվարկով է արտահայտվել մինչև այս տարվա վարկը: Այս ձևն էր վոր խոշորագույն միջոցներ ավելց թե իր և թե մեր յերկրի տնտեսութեան վերականգնման համար: Տրված սերմվարկը ցորենով հասնում է մի քանի հարյուր հազար ուրբլու արժողութեան:

Այժմ յերբ Խորհրդային պետութեանը արդեն անցել է դրամական սխառեմին, սրա հետ պետք է փոխվեր նաև Գյուղատնտեսական վարկավորման գործը և շարունակվեր ավելի լայն մասը տարով: Ստեղծված դրութեան գյուղատնտեսութեան վորոշ ճյուղեր պետք է առանձնահատուկ հովանավորութեան գտնելին պետական որդանների կողմից: Յեթե աչքից անցկացնենք այն պայմանները, վորոնց մեջ մենք գործել ենք կտեսնենք: Առաջին գյուղատնտեսական վարկը տալու համար սկզբում մենք չունեյինք անհրաժեշտ պայմանները, վորոնց վրա հիմնվելով զարգացնելինք մեր գործունեութեանը: Մեր իրականութեան մեջ փաստն այն էր, վոր կային մի շարք գավառներ ուր դրամական շրջանառութեանը վոչ միայն թույլ է յեղել, այլ գիտենք գավառներ ուր դա բոլորովին բացակայել է: Այս յերեուցթը այժմ մեզմե է: Յերկրորդ քանի դեռ չեյինք անցել վարկավորման իսկական աշխատանքին՝ մենք չգիտեյինք թե գավառներում ինչպիսի ընկերութեաններ կան և ինչ վարկունակութեամբ: Միայն վարկավորման պրոցեսում, իսկ դա ունի միայն վեց ամսվա պատմութեան, ծանոթացանք այն որչեկաններին, վորոնց կարող ենք վարկավորել: Գործը նրանում չի, վոր վարկ տաս, այլ նրանում, վոր վարկը իր նպատակին ծառայի և սպա հետ ստանաս, մենք Գյուղկոոպկենարոնի միջոցով և նրա աջակցութեամբ պարզեցինք վարկունակ ընկերութեանների կարիքները և ունակութեան չափը:

Ընկերներ, աշխատանքը առանձնապես դժվար էր այն պատ-

ճառով, վոր գյուղացիութեանը վարկավորող հիմնարկները նոր եյին կազմակերպվել և դեռ ևս չունեյին կենսական անհրաժեշտ փորձը, լինելով կազմակերպված միայն այս տարի. նրանք դեռ իրենք կարող են ուժեղացման: Միայն փորձառութեամբ և տեղական որդանների ցուցմունքներով մենք կր կարողանանք մեր գործը աստիճանաբար լավացնել: Մենք դեռ վորոնումների նորանոր շփումների մեջ ենք մտնում այս կամ այն որդանների հետ:

Մեր վարկավորման գործին անցնելով՝ պետք է ընդգծենք մի հիմնական հանգամանք ևս. մեր գյուղը իր շրջապատից միանգամայն կտրված չէ և չի էլ կարող լինել այդպիսին: Նա իր հիմնական կետերով հենված է յերկրի տնտեսական պայմանների վրա. վարկավորման գործը կազմակերպվել է Հողժողկոմի հետ վրած ընդհանուր քաղաքականութեան համաձայն: Վարկավորումը պիտի ընթանա այն ճանապարհով, վոր գծում է մեր ընդհանուր քաղաքականութեանը: Յեղած ծրագրերի իրագործումը ի հարկե կախված է յեղել Բանկի միջոցներից, Բանկի Ֆինանսական հնարավորութեաններից, դա բոլորիս համար պարզ է, մշակված ծրագրերները ինչ չափով. վոր կիրառվել են՝ կատարվել են մասամբ մեր Բանկի դրամով, իսկ մյուս մասով պետական բյուջեյից կամ այլ աղբյուրներից: Այս հանգամանքի վրա շեշտում են, վորպեսզի Բանկի գործունեութեանը քննադատելիս թյուրիմացութեան չառաջանա:

Յես կանգ կառնեմ ևս յերկու կարևոր հանգամանքների վրա, վորոնք կարևոր դեր են խաղում մեր գործունեութեան մեջ: Մեր գյուղատնտեսութեանը, ըստ իր աշխարհագրական դիրքի, պարզ և վորոշակի գծերով բաժանվում է 2 մասի և դրա հետևանքով մենք ունինք 2 հիմնական ճյուղ. 1. Լեռնային շրջանների տընտեսութեան և 2-րդ Դաշտային շրջանների տնտեսութեան: Դաշտային շրջանում բոլորովին այլ պայմաններ են տիրում քան լեռնայինում: Դաշտային շրջանում վարկավորման աշխատանք և կատարվել նաև առաջներում: Դաշտային շրջաններում տնտեսութեանը հասել է վորոշ աստիճանի, մինչդեռ լեռնային շրջանները այս տեսակետից միանգամայն հետ են մնացել: Մինչդեռ դաշտային շրջաններում ունինք այնպիսի գնահատելի կուլտուրա վորպիսին է բամբակի մշակութեանը, նա բունում է տասն հինգ հազար դեսյատին տարածութեան, ունինք նաև այգեգործութեան, խաղողագործութեան, վորի այգիները քիչ բացառութեամբ արդեն ժամանակ և հնարավորութեան են ունցել վորաքի

կանգնելու: Վարկային և այգեգործական կոոպերացիան վորոչ չափով դաշտային շրջանում արդեն հիմք դրել է, սրանք յեղել են և առաջներում: Ահա այս հանգամանքը դաշտային շրջանում համեմատորեն տնտեսապես ավելի գորեղ և դարձել քան լեռնային շրջաններում: Միք մոռանալ, վոր բամբակն ու խաղողը արդյունարեբական կուլտուրաններ են, վոր նրանք դեպի իրենց են քաջում գրամական միջոցներ: Այս յերկուսի վրա պետք է ավելացնել նաև ծխախոտագործությունը, վորը նոր է սկսել զարգանալ: Միանգամայն այլ պայմաններ են տիրում լեռնային շրջաններում: Այս շրջանի թերությունը նրանում է կայանում, վոր հացահատիկների մշակությունը փնասակար է և մենք անհրաժեշտություն ենք ձգում, վորպիսի Հայաստանի լեռնային շրջանները թողնեն հացարուսերի մշակությունը և անցնեն ալպիսկական տնտեսության սխտեմին: Մեր նպատակն է վորպեսզի մեր լեռնային շրջաններում յայն կերպով տարածվի անասնապահությունը: Դրան յանդարող հանգամանքը այն է, վոր նրանից ստացված կաթնատնտեսական մթերքները կարող են վերամշակության: Դրա համար անհրաժեշտ է մորելիլգացիայի յենթարկել մեր բոլոր հնարավորությունները: Նույն այս լեռնային շրջաններում խոշոր ապագա ունի խոտաբուծությունը: Այս բոլորը խոշոր հարստության աղբյուր կարող են լինել մեր գյուղացիության համար, փաստորեն մենք տեսնում ենք, վոր լեռնային շրջանների նպատակավոր պայմանները այս տեսակետից ոգավում են միմիայն, Լոռի-Փամբակի գավառում, իսկ մյուս գավառներում վոչ: Այս տեսակետից մեր վարկավորման հետագա աշխատանքների մեջ ուշադրության ամենագլխավոր կենտրոնը պետք է լինի անասնապահության վրա. այդ պետք է լինի վոչ միայն այս կամ հետևյալ տարվա ծրագիր, այլ ապագայի մի քանի տարիների ծրագիր: Կրկնում եմ, վոր մեր վարկավորման աշխատանքների կենտրոնում կանգնած են անասնապահությունն ու նրան կապված ճյուղերը: Այս տարի մենք հնարավոր չափով ուշադրություն չենք կարողացել դարձնել գրա վրա և այդ նրա պատճառով, վոր վոչ ժամանակ ենք ունեցել և վոչ էլ անհրաժեշտ նյութական միջոցներ: Միք մոռանա, վոր մեր Բանկը ապրում է իր գործունեության վեցյերորդ ամիսը, նա գործել սկսել է ներկա տարվա ապրիլ ամսից: Մեր վարկավորման աշխատանքները մյուս կողմից կախված են յեղել վարկավորվող ցանցի գրությունից: Կազմակերպված միություններ չեն յեղել, իսկ տասնձին բջիջների հետ վար-

կավորման փոխհարաբերությունների մեջ մտնել դժվար է և վտանգավոր, և չեր կարող տալ անհրաժեշտ եֆեկտը, վոր մեզ համար հարկավոր էր: Մեր վարկից գլխավորապես ոգավել են կաթնատնտեսական արտելները, վորոնք գործում են Լոռի-Փամբակի գավառում: Նրանց վարկ տրվել է մեր հնարավորությունների սահմաններում:

Խոտաբուծությունը մեր պայմաններում կարևոր դեր ունի կատարելու և մենք գրա վրա պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնենք՝ սակայն վորոչ զգուշությամբ մոտենալով նրան: Այս տարի մենք միայն դրադվել ենք փորձեր կատարելով, վորոչելու համար նրա կարիքները: Դա մենք արինք Հողօղկոմի համաձայնությամբ և ոժանդակությամբ Շահի տեսակետից սա յեղել է չափազանց փնասակար, բայց կրկնում եմ, դա մենք արել ենք գիտակցորեն, ինչպես ասացի փորձի համար, վորպեսզի հետևյալ տարի ավելի յայն և պլանամեր աշխատանք վարենք գյուղատնտեսության այս ճյուղում:

Ապագայում տարածելով խոտաբուծությունը մի կողմից և հիմնվելով մյուս կողմից արտելների վրա՝ մենք պետք է անցնենք լեռնային շրջանների տնտեսությունների յերկարատև վարկավորման գործին, նպատակ ունենալով զարգացնել անասնապահությունը և կաթնատնտեսական մթերքների վերամշակման գործը կազմակերպել: Այս է հարկե ամենից առաջ կախված է անասունների ցեղի ազնվացման հետ: Այս ուղությամբ մենք պիտի հետևենք Հողօղկոմատի ցուցմունքներին:

Բացի այս յերկու գյուղատնտեսական ճյուղերից լեռնային շրջաններում տնտեսական կարևոր դեր է վերապահված, իբրև ոժանդակ ճյուղերի՝ մեղվաբուծության և շերամապահության:

Այժմ յես ասեմ, յեթե դա ձեզ կը հետաքրքրի, թե ի՞նչ չափերով մենք վարկավորել ենք Գյուղատնտեսության զանազան ճյուղերը. ահա այդ թվերը խոտաբուծության վեցից յոթ հար ուրբի, կաթնատնտեսության 80—90.000 ուրբ., շերամապահության 8.000 և մեղվաբուծության 2—3.000 ուրբի: Այս թվերը ցույց են տալիս թե մենք ինչ չափով ենք վարկավորել մեր գործունեության առաջին վեց ամսվա ընթացքում: Պարզ է, վոր այսպիսի թվերով մենք չենք կարող բավակամանալ և հետևյալ տարվանից մենք նույնը պիտի անենք ավելի բնդարձակ չափերով և ավելի խոշոր ուշադրությամբ:

Դաշտային շրջանների նկատմամբ կը ցանկանայի ասել նաև

հետեյալը: Ինչպես ասացի այս շրջանի գյուղացիութեան գրադմունքի կարևոր ճյուղն է բամբակագործութիւնը. նա վարկավորում է դրա համար գրյութիւն ունեցող հատուկ կազմակերպութեան կողմից: Այս տարի Գյուղատնտեսութեան այս ճյուղի վրա մենք ուշադրութիւն չենք դարձրել, վորովհետև փաստորեն անկարող ելինք, բայց հետեյալ տարիներից դա կարվի: Գաշտային շրջանի յերկրորդ կարևոր ճյուղը՝ այգեծործութիւնն է. նա նույնպես գրավում է մեր ուշադրութիւնը: Պետք է ավելացնել, վոր մինչև սեպտեմբերի 1-ը այգեգործութեան զարգացման համար մենք ավել ենք 80.000 ուրլի վարկ և այդ միջոցներով մեր գյուղացիութիւնը հնարավորութիւն ունեցավ վերամշակել այն այգիները, վորոնք այս վերջին տարիների ընթացքում իսպառ վոջնչացել ելին:

Մեր աշխատանքների մեջ կարևոր տեղ պետք է բռնի Հող-ժողկոմատի հետ միասին Գյուղկոոպերացիայի ոգնութեամբ նոր այգիներ գցելու, և նրանց մշակման պայմանները բարելավելու վրա: Մյուս կարևոր գործը դաշտային շրջանում դա մելիորացիայի վարկավորման գործն է. մենք մեր ուշադրութիւնը պետք է դարձնենք գյուղացիութեանն ոգնելու այն փոքրիկ ջրանցքների, առուների, կառուցման և պահպանման վրա, վորոնք կապահովեն գյուղացու սամեհահետաձգող դաշտերի վոոգման գործը:

Ընկերներ, գյուղացիութեան վարկավորումը մի աստիճանի վրա կանգ առնել չի կարող: Նրան պետք է տալ վորոշ չափով ինվենտար, կատարել այնուհետև անհրաժեշտ աշխատանքները և կատարել նաև գյուղմթերքների բեալիցացիայի գործը, թե սրանք ինչ ճանապարհով պիտի կատարվեն դա չափազանց պրակտիկ հարց է, յես դրա վրա կանգ չեմ առնի, այլ կտեսմ մի հիմնական խնդիր, վոր մենք պետք է վարկավորումը շարունակենք իր առաջին աստիճանից մինչև նրա ապրանքների վաճառքը կամ բեալիցացիան: Ահա յեթե հարցը այսպես դնենք մեր առաջ կը ծագի նաև մի այլ հարց, թե արդյո՞ք Գյուղատնտեսական Բանկը ինչպես պետք է մոտենա վարկավորման այդ բոլոր ստադիաներին: Յես մի քանի խոսքով կանց կտանեմ այդ աստիճանների վրա առանձին-առանձին:

Առաջին ամենգլխավոր և եիմնական հարցը, վոր կանգնում է մեր առաջ, դա այն է, վոր գյուղացին վորոշ աշխատանք կատարելու համար ամենից առաջ կարիք և զգում ինվենտարի: Ուրեմն պետք է գյուղացու համար ստեղծել իր աշխատանքի այն բոլոր

նախապայմանները, վորոնք անհրաժեշտ են նրա գործի հետագա շարունակման և գյուղատնտեսութեան բարձրացման համար: Ուրեմն առաջին հերթին հարց է բարձրանում գյուղացուն հայթայթել աշխատավոր անասուններ և մեռյալ ինվենտար, ինչպես որինակ գութան և այլն, վորոնք անհրաժեշտ են նրա աշխատանքների համար: Այդ մասին հոգ է տանում նաև Գյուղատնտեսական կոոպերացիայի կենդրոնը: Անցյալ տարի մենք հողի վարողացանք ձեռք բերել այդ ինվենտարը և համարյա մի սեզոն կորցրինք, բայց այս տարի մենք արդեն նախապես մշակում յենք յեկող տարվա աշխատանքի ծրագիրը: Այսքանը ինվենտարի մասին:

Ինչ վերաբերում է, մեր բանվոր անասուններին, մենք կանցնած ենք այն տեսակետի վրա, վոր այս հարցը չպետք է աչքաթող անել: Այս ուղղութեամբ վորոշ աշխատանքներ կատարված են, վորոնք իհարկէ մեր անասունների հսկայական պահասի համեմատութեամբ շատ չնչին են: Ընդհանուր առմամբ անասունների 50 տոկոսը բացակայում է բամբակագործական շրջաններում, նույնիսկ 90 տոկոս մեր գյուղացիութիւնը լծկաններ չունի: Այսպես ուրեմն մենք առաջին հերթին դնում ենք նաև գյուղական տնտեսութիւններին անասուններով վարկավորելու հարցը: Այս տարի մենք կարողացել ենք հաղիվ 200 գլուխ անասուն գնել և բաշխել ընկերութիւններին, իսկ այս տարի աշնանը տալու ենք մոտ 500 գլուխ, վորը չնայած ամբողջովին չի բավարարի, բայց ապագայում անշուշտ ավելի պրակտիկ արդյունքներ կտա:

Մթերքների վաճառքի հարցը: Ինչպես ենք մենք մոտենում դրան, վորպեսզի թյուրիմացութեան մեջ չընկնենք. յես հայտարարում եմ, վոր այս հարցին մենք մոտենում ենք այսպես՝ վարկավորելով այդ գործողութիւնը մենք լրացնում ենք կոոպերատիվ կենտրոնի գործը: Յեկող տարվանից մենք կը ձեռնարկենք նաև գրավական վարկի գործարքին, վորը հնարավորութիւն պիտի տա գյուղացիներին արդյունքները անմիջապես չը ծախել այլ պահել մինչև այն ժամանակ, յերբ չուկան բարեհաջող և ոգտակար գներ կունենա տնտեսութեան համար: Յես կուզեյի կանց առնել այն հարցի վրա «բե՞ արդյո՞ք Գյուղատնտեսական Բանկը կամ վարկային կենդրոնական օրգանն ո՞ւմ միջոցով է աշխատանքներ կատարում և ումը պիտի վարկ տա» Այդ հարցի շուրջը վորոշ շիտթութիւններ կան: Որինակ մի տե-

սակեա կա վոր Գյուղատնտեսական Բանկը ներկայացնում է միայն վորպես մի կոոպերատիվ բանկ և վոր միայն կոոպերացիան է վոր պետք է ստանա գյուղատնտեսութեան բոլոր բնասուբաները: Մենք կարծում ենք, վոր մենք վարկ պետք է տանք գյուղացիական հիմնարկներին այն չափով, վոր չափ վոր նրանք կը գնան դեպի կոոպերացիայի զարգացումը: Այդ տեսակետից մենք առաջին տեղը տալիս ենք կոոպերացիային: Մենք մինչև այժմ կասենք, վոր վարկը բաշխվելու չե՞նք միջոցով և կոոպերացիան այդ խոշոր գործը պիտի կատարի: Դրա համար միաժամանակ ավերանում է նաև ձեր հիմնարկների վարկը և բացի այդ գյուղացին ավելի նպատակահարմար և կազմակերպված ձևով ստանում է իր դրամը: Բայց այժմ առանձին տնտեսութեանները վարկավորմանը մենք ձեռնարկել չենք կարող, այլ խուսափում ենք դրանից, վորովհետև մեր տնտեսութեանների միայն 6 տոկոսն է կոոպերացված և կարիքավոր գյուղացիութեանը դեռ ամբողջովին չի կապված կոոպերացիային, նա նոր է կապվում կոոպերացիային, ուստի վարկավորումն մենք պետք է թողնենք կոոպերատիվ ընկերութեանների ձեռքում:

Յերկրորդ հարցն այն է. թե վարկը ինչ ձևով պետք է տանք գյուղացիներին: Այս հարցում Գյուղատնտեսական Բանկի ուղղութեանը հետևյալն է. կապվել տեղերի հետ փոքրիկ ըջիջների միջոցով, վորոնք աշխատում են գյուղում, վորպեսզի հնարավոր լինի վարկը դարձնել եժան և մատչելի գյուղացուն:

Յես, ընկերներ, կանգ կառնեմ և մի այլ աշխատանքի վրա, վոր մեզ համար խոշոր նշանակութեան ունի: Դա այն է, թե արդյոք մենք աշխատելով գյուղում, վոր կազմակերպութեաններն ենք դարձնում մեր Փինանսական բազան: Յես այստեղ կանգ չեմ առնելու կազմակերպչական ձևերի վրա, վորովհետև դա ուրիշ հարց է, այլ հարցի մյուս կողմի վրա: Մենք կոոպերատիվ կազմակերպութեաններին վարկ ենք տալիս առանձին ճյուղերն ի նկատի առնելով, ինչպես որինակ. այգեգործութեանը, մեղվարուծութեանը և այլն: Մի ուրիշ հանգամանք ևս պետք է աչքի առաջ ունենալ այդ այն է, վոր մի շարք գյուղացիական տնտեսութեաններ, վորոնք այս կամ այն տնտեսական ճյուղերին կցել չի կարելի, ինչպես պետք է վարվել դրանց հետ: Յեթե Գյուղատնտեսական Բանկը ներկայացնում է իրանից մի ակցիոնիերական ընկերութեան, վորի մեջ բազմաթիվ գյուղացիական փայեր կան, այդ փայերը 1000 ր. սահմաններում պետք է կազմվեն գյուղ-

ղացիական փոքրիկ փայերից՝ մորիլիպացիայի յենթարկելով գյուղացիական կապիտալը: Հենվելով գյուղատնտեսական կոոպերատիվ ցանցի վրա՝ Գյուղ-Բանկը վորոչ քաղաքականութեան է տանում և գյուղացիական ավանդները կարողանում են ստանալ և վերաբաժանել գյուղացիներին:

Պետք է շեշտել, վոր մինչև այժմ մենք կանոնավոր ուշադրութեան վարկի տեսակետից գյուղում չենք դարձրել գյուղացիական Փոխադարձ Ոգնութեան կոմիտեերի վրա, վորոնք մեր գործում առաջնակարգ տեղ պիտի բռնեն գյուղում և հնարավորութեան տան գյուղացուն, վոր նա կապվի դրանց միջոցով կոոպերացիայի հետ: Մեր վարկավորման և այլ աշխատանքների մասին ահա այն բոլորը, ինչ վոր կարող եյի ասել:

Այժմ թույլ ավելք մի քանի խոսքով կանգ առնել մեր վարկի կարնառուութեան և յերկարառուութեան վրա: Դա մեր վարկային որգանների և կոոպերատիվ ընկերութեանների համար շատ հետաքրքիր է: Մեր քաղաքականութեանը տանելով ազատ և միջակ գյուղացուն վարկավորելու ուղղութեամբ, այդ այդպես է, վորովհետև մենք հարուստներին վարկ չենք տալիս, պարզ է, վոր մեր յերկարատև վարկն էլ պետք է հնարավորութեան տա ազատ տնտեսութեանների բարձրացմանը, տալով նրանց գութան, տավար, կով և այլն: Պարզ է, վոր մի ազատ գյուղական տնտեսութեան մեծ դժվարութեանների կը հանդիպի մի տարվա ընթացքում վարկը վերադարձնելու համար, այդ պատճառով վարկը պիտի լինի յերկարատև: Սա յես կրկնում եմ մի թերութեան է, վորը հայտարարում ենք պարզ կերպով: Դուք պետք է իմանաք, վոր մենք էլ մեր վարկավորման գործում շատ անկանոն վիճակի մեջ ենք: Մեր վարկավորումը մի կանոնավոր սխտեմ չունի և բացի այդ ստանում ենք անասուններ գնելու և վարկավորման նման աշխատանքների համար: Կարճատև վարկը իր թերութեաններն ունի և մենք պետք է աշխատենք ամեն կերպ ոգտագործել յերկարատև վարկը, վորի համար պետք է իմանանք նաև տեղերի կարծիքը:

Տոկոսների մասին պետք է ասեմ, իրողութեան է, վոր մենք աշխատում ենք ամեն կերպ իջեցնել տոկոսները մինչև 10-ի: Այս քանակը շատ քիչ է, ամենամիմիմայ չափն է տոկոսների և նույնիսկ մենք ավելի շատ տոկոս ենք տալիս մեր ստացած դրամների համար քան թե դուք եք տալիս: Այժմ վարկային ընկերութեանների ստացած դրամի փոխարեն արվելիք 12 տոկոսը,





կորցնել իր հեղինակութունը: Այսոր մենք պետք է ձեռակերպենք մեր հիմնական գրամագլուխը: Բաժնեվճարը արժուժ է վոչ միանվագ այլ վորոչ ժամանակամիջոցում: Առաջարկվում է յուրաքանչյուր միավոր վճարի իր բաժնեկրամագլխի 20 ասկոսը, վոր հանգիստնում է մեր Միության Ֆինանսական Փունդամենտը: Այնուհետև պետք է վորոչենք «պատասխանատու թիշյան շափր»: Սանչանակում է վորոչել Միության վարկանակության շափր: Սանչանակում է, վոր մեր Միությանը հնարավորության կունենա աշտմյանից զծել իր գործնեության հետանկարներ: Յեթե դուք ստեղծեք Միության համար խոչոր գրամագլուխ, այդ գեպում մենք հնարավորության կունենանք ծափալի կոտպերացիան: Արեմն կա առաջարկ բաժնեվկարքը բնդունել անդամի բնկերաւքյունների բաժնեվկարների 20 ասկոսը: Այնուհետև պատասխանատուության ինդրի նկատմամբ 17-րդ կետում սոված է, «Հաստատանի գլուխանակական կոտպերատիվ Միության անդամները մնանների համար պատասխանատու չեն իրենց վաշերով և բացի այդ, Հայգյուղմիության պարտավորությանները համար կրում են յրացուցիչ պատասխանատուության իրենց վաշերի 5-ապատակի շափով»: Ապա ծանոթության մեջ մասնանշված է հետևյալը. Հայգյուղմիության անդամագրված կազմակերպությանները պատասխանատու չեն Հայգյուղմիության այն պարտավորությանները համար, վոր ծագել են Հայգյուղմիության նրանց անդամագրելուց ստաջ»: Այստեղ ինչպես տեսանք, մասնանշված է վաշերի 5-ակատիկ շափով անդամի պատասխանատուությանը: Յեթե բնդունենք այս ձևը միաստեակ սխտեմով տաղած կլինենք մեր գործը: Բաժնեվճարի գանձումը Լիազորական ժողովը կը վորոչի մեկ տարվա ընթացում: Կարևոր ինդիքներից 4-րդ մասի 29-րդ հոդվածում սոված է, «Հայգյուղմիության գործերը վարում են Լիազորների ժողովը: Խորհուրդը և ապա Լիազորների ժողովն է: Այդ ժողովը կազմում են Հայգյուղմիության անդամակցող կազմակերպությաններից ժողովի մասնակցելու լիազորության ստացած անձերը: Սկզբնական կոտպերատիվներից մինչև 100 անդամ ունեցողները ուղարկում են 1-ական լիազոր, 101-300 անդամ ունեցողները ուղարկում են 2-ական լիազոր, 301-600 անդամ ունեցողները ուղարկում են 3-ական լիազոր, 600-ից ավելի անդամ ունեցողները յուրաքանչյուր 300 յրացուցիչ

անդամի համար մեկական լիազոր: Միությաններից մինչև 5 լիազորական անձ կոտպերատիվներ միացնողներ ուղարկում են մեկական լիազոր: Մինչև 15 լիազորական անձ 2-ական լիազոր: Մինչև 30 լիազորական անձ 6-ական լիազոր: 30-ից ավելի լիազորական անձ 4-ական լիազոր և այլն: Ծանոթության մեջ սոված է. յուրաքանչյուր լիազոր ունի մեկ ձայն: Չայնի լիազորները վոչ վորի չի կարելի դիջել: Ապա լիազորները ընտրվում են մեկ տարի ժամանակով: Այնուհետև ծանոթության մեջ հիշված են Հայգյուղմիության, Խորհուրդի և վերատուգիչ հանձնաժողովների անդամները լիազորների ժողովներին, մասնակցում են լիազորների հետ հավատար իրախոնքներով, սակայն իրանց գործնեության վերաբերող հարցերի ընտրության ստանց վճարական ձայնի լիազորների: Այնուհետև գալիս է լիազորական ժողովի Փունդիաները, վորոնց մասին առանձնապես խոսելու պետք չկա, վորովհետև այդ Փունդիաները բղխում են մեր կոտպերացիայի հիմնական սկզբունքներից: Յերկրորդ վարչական մարմինը դա խորհուրդն է: Կանոնադրության մեջ սոված է Հայգյուղմիության Խորհուրդը բաղկացած է անվագն 5 անդամից, վորոնց ընտրում է Լիազորների խորհուրդը մի տարի ժամանակով: Խորհուրդի անդամներին լիազորները համար ընտրվում է անվագն 3 թեկնածու:

Մեր բնկերությանները, պետք է ստեյ, վոր հին ժամանակավելի կայուն գրության մեջ էլին: Խորհուրդների ընտրությանները պետք է լինեն մի տարով: Յետ այս տոթիվ թեկ վիճել եմ Աշտաբակցիները հետ, յես այս խոսքերը ստում եմ նրա համար, վոր մենք չվիճենք: Սա մեզանում որենք է:

Վարչական յերրորդ մարմինը դա մեր վարչությանն է: Այստեղ 46-րդ հոդվածում սոված է վարչությանը բաղկացած պետք է լինի անվագն 3 անդամից, վորոնց ընտրում է լիազորակապետը և լինի անվագն 3 անդամից, վորոնց մասին յես մանրազնկաներ տալ, վեկսնիներ տանել, վորոնց մասին յես մանրազնկաներ և մեր վերատուգիչ հանձնաժողովն է, վորը ընտրում է մի տարով, դրա Փունդիաների մասին առանձնապես չեչանելու կարիք չկա, վոր Փունդիաների մասին առանձնապես չեչանելու կարիք չկա, վորովհետև Չեգ բոյորից հայտնի յես: Այնուհետև 5-րդ տեղը բրովորովհետև Չեգ բոյորից հայտնի յես: Սա նույնպես նում է հաշվապահությանը: Սա նույնպես պետք է ստեյ, վոր մեր Միության բնդ հանուր որենք է. միայն պետք է ստեյ, վոր մեր Միության հաշվետու տարին պետք է լինի հսկաները 1-ր: Մեր բոյոր միա-

վորները պետք է հաշիվը սկսեն հոկտեմբեր 1-ից մինչև գալուց տարվա հոկտեմբեր 1-ը, մանավանդ, վոր գուգատիպությամբ այս տարի մեր գործերը սկսվում են հոկտեմբեր 1-ից :

Կանոնադրության 6-րորդ ակդը բռնում է «յեկամուտներ և վնասները»: Հողված 65-րդ ասվում է. անցած տարվա մաքուր յեկամուտը բաշխվում է լիազորների ժողովի վորոշումով՝ յեկամուտի առնվազն 25 տոկոս անցնում է հիմնական գրամադրիսի և առնվազն 20 տոկոս պահեստի գրամադրիսի հաշիվի, իսկ մնացած գումարը կարող է հատկացնել հատուկ կոտակերատիվ և կուլտուր-կրթական նպատակներին համար, ինչպես նաև միության անդամների դիվիդենտ վճարելու : Այստեղ ինչպես տեսնում եք գլխավոր յեկամուտը դիվիդենտն է :

7-րդ մասը Հայգյուղմիության լիկվիդացիան է : Լիկվիդացիոն կարգը ընդհանուր որոշներով է կատարվում : Մեղանում ընդհանրապես լիկվիդացիաներ չեն լինի : Խորհրդային իրավակարգում լիկվիդացիան բացառիկ յերևույթ է : Ահա ընկերներ, կանոնադրության այն կարևոր խնդիրները, վորոնց վերաբերմամբ յես պետք է Ձեր ուշադրություն հրավիրելի :

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկերներ, ընկ. Մանուկի մատնանշած պունկտերի մասին առաջարկություն կա կանոնադրությունը հողված առհողված կարգալ և ուղղումներ ու փոփոխություններ մտցնել : Բայց իմ կարծիքով յեթե կանոնադրությունը կարգանք շատ յերկար ժամանակ կը խլի մեզանից : Մենք կանոնադրությունն իր ժամանակին բաժանել ենք բոլոր պատգամավորներին, ովքեր վոր ուղղումներ ունեն կարող են այժմ անել :

ԴԱՆԵԼՅԱՆ.—Այս կանոնադրությունը կարոտ է իմբազրական և թարգմանական խոշոր փոփոխություններին. դրա մեջ սպրդել են մի շարք սխալներ, ինչպես որինակ, տարեկան հատկացումների փոխարեն գրված է տարեկան զեղջուրներ և վորովհետև նախագիծ է, և ընթերցումն էլ քիչ ժամանակ է պահանջում, յես կառավարիկ կետ առ կետ կարգալ և հաստատել : Համենայն զեպս յես առաջարկում եմ հանձնել իմբազրական կոլլեգիային կանոնավոր կերպով թարգմանելու և իմբազրելու :

ԿԼՈՐԻԿՅԱՆ.—Մեր անատության ընթացքն ի նկատի ունենալով հոկտեմբերի 1-ին հաշվապահական տարին չենք կարող ընդունել, վորովհետև մինչև այդ հնարավոր չի լինում յեղած ապրանքային շրջանառությունները վերջացնել :

ՆԱԽԱԳԱՀ.—Այստեղ խոսքը վերաբերում է միության, վորի

հաշվառու տարին հոկտեմբերի 1-ից և սկսվելու : Ուրեմն զեմ չեթեք յեթեքներ Մանուկի սկզբունքային կարևոր կետերը մեկ-մեկ կարգա և քննենք այն :

Գ. ԽՈՒԴՈՅԱՆ.—Ամենից լավն այն է, վոր ամբողջը կարգաք :

ՆԱԽԱԳԱՀ.—Ձեր առաջարկը քվեարկության եմ դնում. չի անցնում :

ՄԱՆՈՒԿ.—Կարգում է առաջին կետ. այստեղ ամենից առաջ միության անվան մասին : Մենք առաջարկում ենք Հայաստանի Գյուղատնտեսական կոտակերացիայի միություն—«Հայգյուղկոտակոտ», ուստեքն—«Արմենյուտակոտակոտ» :

ՆԱԽԱԳԱՀ.—Ովքեր միության անվան մասին խոսք ունին ինդրեմ առաջարկներ անեն :

Գ. ԽՈՒԴՈՅԱՆ.—Միության անունը թարգմանելու օրիշ յեղվով չի կարելի, պետք է բոլոր յեղունեքով կոչել «Հայգյուղկոտակոտ», վոր յեկուզ ուստեքն, Փրանսեքն, անդլիեքն և այլն (ճայներ, ճիշտ է, ճիշտ է) :

ՍՏԵՓԱՆՅԱՆ.—Միություն բառը պետք է պահել. առաջարկում եմ կոչել «Հայգյուղկոտակոտ միություն» :

ՄԱՆՈՒԿ.—Ընկերներ, մենք պրակտիկայից պետենք, վոր յերբ մեր և Հայկոտակ միջև առաջ էր գալիս հեռադիրներին վերաբերմամբ շատ թյուրիմացություններ, զրտում Հայկոտակ չեյին հատկանում, յեև այնտեղ կար «կոտակոտ» բառ. յես առաջարկում եմ պահել թարգմանությունը :

Ս. ՇԱԴՈՒՆՅ.—Յես կարծում եմ, վոր ընկեր Գեղամ Խուրոյանը ճիշտ է, մեր միությունը պետք է կոչվի «Հայգյուղկոտակ», վոր մի ուրիշ յեղվով չպիտի թարգմանել :

ՆԱԽԱԳԱՀ.—Քվեարկում եմ, ովքեր համաճայն են վոր մեր ընկերությունը անվանվի «Հայգյուղկոտակ». մեծամասնության ճայներով անցնում է առաջարկը :

ՄԱՆՈՒԿ.—Կարգում է 9-րդ կետը միության կողմի մասին :

ՆԱԼԲԱՆԳՅԱՆ.—Նախ քան այդ պետք է տեսմ, վոր ընդհանուր կանոններում ասված է միության պահեստների, գրասենյակներ և այլնի մասին : Այն ժամանակ յերբ մենք ամեն կերպ աշխատում ենք մեր գործունեությունը սեղմել և կենտրոնացում անել, տում ենք մեր գործունեությունը անհնում հիմնել մի շարք հենց այդ ժամանակ մենք նկատի յենք ունենում հիմնել մի շարք յերկրորդական պահեստներ և գրասենյակներ : Այդպիսով մենք շրջաններում կոտակերատիվներին նկատմամբ ստեղծում ենք կոտակուրենցիա :

ՆԱԽԱԳԱՀ.—Որինակ, մենք Մոսկվայում, Պետրոգրադում  
չպե՞տք ե ունենանք պահեստներ:

ՍԱՐԳՍՅԱՆ.—Այստեղ հարցերը շփոթում են. հարցը վերա-  
բերում է մեր միության գլխավոր գործակալություններին, Ազգը-  
բեջանում, Մոսկվայում, Լենինգրադում մենք պետք է միության  
գործակալությունները բաց անենք: Հի վոր ահապին Ֆունկցիաներ  
ունի միությունը:

ՄԱՆՈՒԿ.—Կարգում է Ծ-րդ կետը «Գյուղատնտեսական կոո-  
պերացիայի միության անդամագրվել կարող են այն կոոպերատիվ  
միավորները, վորոնք զբաղվում են գյուղատնտեսական միջերջներ  
արտադրելով, վերամշակելով և սպասելով ու գյուղական անտե-  
սության աջակցություն ցույց տվող այլ գործառնություններով,  
ինչպես են՝ կաթնատնտեսական և հողագործական արտեյներն ու  
կոմունաները, ինչպես նաև տնայնագործական ու արհեստագոր-  
ծական գյուղատնտեսական վարկատու կոոպերատիվ ընկերո-  
թյունները, վորոնք զբաղվում են գյուղատնտես. միջերջներ ար-  
տադրելով, վերամշակելով ու սպասելով և գյուղական անտեսու-  
թյան ցույց տվող այլ գործառնություններով»: Այստեղ յես առա-  
ջարկում եմ մտցնել բոլոր միությունները և նրանց մասնագիտա-  
կան ընկերությունները, վորոնք մոտացված են թյուրիմացաբար:

Գ. ԽՈՒԴՈՅԱՆ.—Միավորների փոխարեն պետք է միավո-  
րումներ լինի. նախնական կոոպերատիվներ և նրանց միավորում-  
ներ:

ԴԱՆԵԼՅԱՆ.—Յես կարծում եմ, վոր Ծ-րդ կետի մեջ պետք է  
մտնի այդ առաջարկը կամ բավականանալ նրանով, վոր ասվի  
միավորումներ կամ թե չե լրացում անել ինչպես կաթնատնտեսա-  
կան, տնայնագործական և այլն բոլորը մանրամասն պետք է թվել  
և կամ թե չեթե այդ կետն ամբողջովին գուրս ձգվի կառուցված-  
քին չի խանգարում:

ՆԱԽԱԳԱՀ.—Դուք ուզում եք աշխարհում ինչ վոր ձեռնարկ-  
ների անուններ կան մտցնել այստեղ: Մենք կարող ենք և այլն բա-  
ռով բավականանալ:

ԴԱՆԵԼՅԱՆ.—Յես կողմակից չեմ կանոնադրությունը ծան-  
րաբեռներու, յես այդ ուղղումները կամ հավելումները առաջար-  
կում եմ լոկ ստիլի տեսակետից, ինչպես ասացի, յես համաձայն  
եմ նույնիսկ, վոր այդ կետը բոլորովին գուրս հանվի:

ՄԱՆՈՒԿ.—Ընկերներ, մենք հավաքված չենք այստեղ վորպես-  
դի «ստիլով» զբաղվենք, յեթե մենք ստիլով հետաքրքրվենք այդ

զեղքում մեր համապումարը կը գտնա բանաստեղծական համա-  
գումար: Մենք այստեղ քննում ենք կանոնադրության վերաբերյալ  
հարցերը:

ՆԱԽԱԳԱՀ.—Ինչպես յերևում է այստեղ մենք բառերի հետե-  
վից ենք ընկել: Այս աստիլով վիճարանությունները սպասված են:  
Բվեարկում եմ.—ընդունվում է:

ՄԱՆՈՒԿ.—Այստեղ ամենահետաքրքիր կետը 12-րդ կետն  
է մուտքի վճարների մասին. «Հայ գյուղկոոպի յուրաքանչյուր ան-  
դամ մտցնում է մուտքի անվերադարձ վճար և փայ, մուտքի վճա-  
րի և փայի վճարի չափը վորոշում է լիազորների ժողովը: Լիազոր-  
ների ժողովը կարող է վորոշել, վոր անդամները մուծեն Հայ գյուղ-  
կոոպի փայական դրամապլխի լրացուցիչ վճարներ»:

ՆԱԽԱԳԱՀ.—Այս կետի շուրջն ովքեր ասելիքներ ունին:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ.—Այստեղ զբված է անվերադարձ վճար և  
փայ, ինձ թվում է, վոր խմբագրական ուղղումների կարիք կա:

ՆԱԽԱԳԱՀ.—Մուտքի վճարն անվերադարձ է, իսկ խմբագրա-  
կան ուղղումների և փոփոխությունների համար ընտրված է խոմ-  
բագրական հանձնաժողով, վորին կը հանձնվի և կանոնադրու-  
թյունը: Ընկեր Մանուկն առաջարկեց միությունների ստացած  
փայավճարի 20 տոկոս, վորպես բաժնեվճար:

ՍՏԵՓԱՆՅԱՆ.—Ընկերներ, միությունները 20 տոկոս յ'բե  
մտցնեն քիչ կը լինի, կառաջարկելի միությունների նկատմամբ յե  
առաջնորդվել միությունների միավորների փայավճարով:

ՄԱՆՈՒԿ.—Ընկերներ մենք թյուրիմացության մեջ ենք: Մեր  
միության կազմը իրավական անձերից ելին բաղկացած. իսկ միա-  
վոր կոոպերատիվ անդամները անհատ անձերից: Առանց ան-  
հատ միավորների անդամակցության՝ ընկերություն գոյություն  
ունենալ չի կարող: Մենք չենք կարող մի միություն պատկերացնել  
առանց անհատ միությունների: Յուրաքանչյուր անդամի բաժնե-  
վճարի քսան տոկոսը պիտի մտցնվի, իսկ միությունն էլ, իրը իրա-  
վական անձ, իր հերթին իր բաժնեվճարից պիտի մտցնի քսան տո-  
կոս: Վոչ մի տեղ չի տեսնված:

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկերներ, խնդիրը չափազանց պարզ է, բայց  
բոլորը կարծես բարդություն են տեսնում: Ընկերության յուրա-  
քանչյուր անդամը քսան տոկոսը պիտի վճարի բոա կանոնադրու-  
թյան: Թույլ տվեք այս հարցը քվեարկել. հետո կը ճշտենք թե վո-  
րոնք պիտի լինեն իրավական անդամները:

ԴԱՆԵԼՅԱՆ.—Յես կարծում եմ, վոր այսքան վիճարանու-  
թյուններն ավելորդ ելին: Խնդիրը պարզ է: Ընկեր Մանուկի առա-

Ջարկը ճիշտ է. կանոնադրութեան այդ կետն ուղիղ է. միայն պետք է մտցնել իմ բազրական ուղղում՝ ձեռնկերպելով այսպես՝ — Հայ-  
դ յուղկոտպին—յուրաքանչյուր անդամն իր հերթին և միութեան-  
ներն իրենց հերթին՝ մտցնում են Միութեան փայլավճար քսան տա-  
կաս և այլն:

ՆԱԽԱԳԱՀ.—Այստեղ կան յերկու աստղաբկներ. բնկեր մա-  
նուկի և բնկ. Դանելյանի աստղաբկները, վարանը բոս և յութեան  
միեկնույն աստղաբկներն են: Թող բնկեր Մանուկն իր աստղաբկը  
կրկնի:

ՄԱՆՈՒԿ.—Նախնական կոտակերտիքների և թե նրանց միութե-  
անները, մտցնում են իրենց փայլավճարների քսան տակոսը Կենա-  
րոնական Միութեան մեջ:

ՆԱԽԱԳԱՀ.—Քվեարկում եմ բնկեր Մանուկի աստղաբկը:

ՉԱՅՆԵՐ.—Պարզ չէ:

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկերներ, ամբողջ մի ժամ այս խնդրի վրա  
կանգ առանք. քանի վոր գտնում եք թե խնդիրը պարզ չէ, այս  
հարցն առայժմ թող մնա: Յանկացողները թող գրավոր աստղաբկ-  
ները ներկայացնեն նախագահութեան, համաձայնեցնելու համար:  
Անցնում ենք 13-րդ հոգվածին:

ՄԱՆՈՒԿԸ.—Կարգում է 13-րդ հոգվածը:

ՆԱԽԱԳԱՀ.—Առաջարկներ, նկատողութեաններ կամ փոփո-  
խութեաններ չկան:

ՆԱԽԱԳԱՀ.—Քվեարկում եմ. ովքեր համաձայն են 5-ապաստիկ  
չափին:—Մեծամասնութեան:—Ընդունվում է:

ՄԱՆՈՒԿ.—Կարգում է 25-րդ հոգվածը: Ընդունվում է  
նույնութեամբ: 27-րդ հոգվածը նույնպես ընդունվում է անփո-  
փոխ: 30-րդ հոգվածի առթիվ բնկ. Խուզոյանն աստղաբկում է լիա-  
գորների ժողով գումարի հունվարի 1-ին: Ընդունվում է: Ընկ.  
Մանուկը կարգում է 31-րդ հոգվածը լիազորական կազմի մասին:

ԽՈՒԳՈՅԱՆ.—Լիազորների արտակարգ ժողովի համար կա-  
նոնադրութեան 30-րդ հոգվածի 2-րդ կետը պահանջում է Միութե-  
անի անդամների 1, 5-ական մասից վոչ պակաս անդամների աստ-  
ղաբկութեամբ գումարել արտակարգ ժողով: Յես այդ թիվը գրա-  
նում եմ շատ. աստղաբկում եմ բավականանալ 1, 10-րդ տկանով:

ՄԱՆՈՒԿ.—Այնպես պետք է անենք, վոր գտնեմ մեծամասնու-  
թեան աստղաբկով գումարվի լիազորական ժողովը, փոպեսզի վոր-  
ջինս կարողանա հեղինակութեան ունենալ: Յես դես նպատակա-  
հարմար եմ գտնում նրանց թիվը 1, 3-րդ հասցնել:

ՆԱԽԱԳԱՀ.—Այս կետի առթիվ ով թեր կամ դեմ աստղաբկ  
ունի:—Վոչ վոք: Քվեարկում եմ. ով է համաձայն 30-րդ հոգվածի  
2-րդ կետը թողնել նույնութեամբ:—Ընդունվում է: Քվեարկում  
եմ նույնպես 31-րդ հոգվածը նույնութեամբ:—Ընդունվում է:

ՄԱՆՈՒԿ.—Կարգում է 67-րդ հոգվածը յեկամուսների մա-  
սին:—Ընդունվում է նույնութեամբ:

ՆԱԽԱԳԱՀ.—Կանոնադրութեան բնթերցումը վերջացրինք.  
այժմ բնդհանրապես ով վորեկ ասելիք ունի կանոնադրութեան  
մասին:

ՉԱՅՆ.—Կարծում եմ, վոր պետք է ճշտել նախագահութեան  
հարցը: Վարչութեան անդամները չպետք է համագումարների ժա-  
մանակ նախագահութեան կազմի մեջ մանեն, քանի վոր նրանց  
գործունեյութեանն է քննվում:

ՆԱԽԱԳԱՀ.—Բոլոր այն դեպքերում, յերբ վարչութեան գործ-  
նեյութեանն է քննվում, վարչութեան անդամները չեն կարող նա-  
խագահ լինել, իսկ այլ դեպքերում մենք իրավունք չունենք նրանց  
զրկելու նախագահութեանից: Այդ խնդիրը կանոնադրքի մեջ չա-  
փաված է արգեն:

ՉԱՅՆ.—Խնդրում եմ կանոնադրութեան 15-րդ կետը բացա-  
տրել:—

ՄԱՆՈՒԿ.—Կարգում է և բացադրում: Յեթե մի վորեկ բն-  
կերութեան, որինակ կամենա Մոսկվայում ճյուղ բաց անել, պետք  
է միութեան համաձայնութեանն ասնի:

ՆԱԽԱԳԱՀ.—Աստեղ ստացված են մի քանի բանաձևեր և ա-  
ռաջարկներ փայլավճարի տոկոսների մասին: Յես կը կարգամ  
(կարգում է): Ընկ. Սարգսյանի աստղաբկը հետևյալն է. 1) կես  
աստղին—բոլոր նախնական իրավարանական միավորները Հայ-  
դ յուղկոտպին մուծում են փայլավճարի 20 տակոսը: Կես 2-րդ.—  
չբջանային միութեանները նախնական արտեյների ու բնկերու-  
թեանների փայլավճարների 20 տակոսն են մուծում:

Այս բանաձևի առաջին կետի մասին, այն է՝ տոկոսի մասին ա-  
ռաջարկներ կան արդյոք: Յես ստացել եմ աստղաբկներ այդ տոկոսը  
սահմանել 5, 10 20 և 25 տոկոսի չափով. այս բոպե-  
յիս ստացա աստղաբկ նաև 15 տոկոսի չափով սահ-  
մանելու մասին: (Յուրաքանչյուրի մասին թեր ու դեմ պատ-  
մանելու մասին: Յես համագումարն անցնում է քվեարկու-  
թեան): Քվեարկումը պարզում է, վոր 5 և 10 տոկոսի մասին առա-  
ջարկները բոլորովին ձայն չեն ստանում, 15 տոկոսը ստանում է 4  
ձայն և ձայների մեծամասնութեամբ մերժվում է. 20 տոկոսն րն-

դունվում է ձայների հնչող մեծամասնությամբ. 25 տոկոսի ճառա-  
ջարկն ստանում է միայն մի ձայն:

**ՆԱԽԱԳԱՀ.**—Հայտարարում եմ, վոր համագումարի վորոշ-  
մամբ Հայգյուղկոտպին մասնակցող յուրաքանչյուր նախնական  
իրավաբանական միավորը մուծում է իր փայլավնարի 20 տոկոսը:  
Հիշեցնում եմ, վոր սա պետք է մի տարվա ընթացքում գանձել:  
Այժմ թույլ տվե՛ք անցել բանաձևի 2-րդ մասին: (Ձայների մեծա-  
մասնությունը քվեարկություն միջոցով կեանքն ունենում է ան-  
փոփոխ):

**ՏԵՂԻՑ.**—Ընկ. նախագահ, մենք մտապել ենք սահմանել  
մուտքի վճարի չափը:

**ՆԱԽԱԳԱՀ.**—Ճիշտ է: Ընկերներ, ինչ ատաջարկ ունեք այս  
մասին, յես ստացել եմ ատաջարկ մուտքի վճարը 25 բուրջի սահ-  
մանելու մասին: Ուրիշ ատաջարկներ կան արդյոք:

**ՉԱՅՆԵՐ ՏԵՂԵՐԻՑ.**—Վոչ, վոչ, չկա: Ընդունելի յե 25  
սուրջին:

**ՆԱԽԱԳԱՀ.**—Յես քվեարկում եմ: (Քվեարկությունը վորոշվում  
է մուտքի վճար սահմանել 25 սուրջի): Ընկերներ, այսպես ուրեմն  
մեր կանոնադրությունը ամբողջապես քննված է: Մնում է  
փոքրագույն համապատասխան կանոնադրությունն ամբողջու-  
թյամբ հաստատի նոր քվեարկությունը:

**ՅԵՐՈՒԿԻՆ.**—Կանոնադրություն հաստատելն իր հերթին,  
բայց մենք դեռ լուծել այն հարցը, արդյոք մեր «Միությունը»  
իրավունք ունի՞ թիվըրում կամ սի ալ տեղ բաժանումն քննելու բաց  
անել: Այդ հարցը պետք է նախ լուծել:

**ՆԱԽԱԳԱՀ.**—Ընկ. Յերուկինի խոսքը թյուրիմացություն ար-  
դյունք է, այն ինչ վոր բնկ. Յերուկինն ասում է կանոնադրու-  
թյամբ նախատեսված է զրոական իմաստով, այնպես վոր այդ  
մասին նորից խոսք լինել չի կարող:

**ՅԵՐՈՒԿԻՆ.**—Յեթե կա, ուրեմն լավ, բայց յես չեմ հիշում:

**ԿՆՈՐԻԿՅԱՆ.**—Յես ուզում եմ ասել, վոր կանոնադրություն  
այն կետը, վորով նախատեսվում է հաշվետու գեկուցումներ ա-  
միսը մեկ անգամ կազմելը, գործնական չե և անբնական յի պիտի  
համարել: Այդ այդպես է մանավանդ մեր Միություն համար, վորի  
վարչությունն անդամները չեն վարձատրվում:

**ՆԱԽԱԳԱՀ.**—Ընկ. Կյորիկյանը գա մասնավոր հարց է:

**ՏԵՂԻՑ ՄԵԿԸ.**—Յես կարծում եմ, վոր հաշվետու տարվա  
վերջը հոկտեմբեր ամսին համարելն աննպատակահարմար է:

**ՆԱԽԱԳԱՀ.**—Յես կարծում եմ, վոր ավելի լավ է թողնել այն-  
պես, ինչպես վոր կանոնադրությամբ նախատեսվում է փոփոխել  
այն գեպքում միայն, յեթե կյանքը թեթևաբեղ զրա անհրաժեշտու-  
թյունը: Ընկերներ, այժմ թույլ տվե՛ք քվեարկել կանոնադրու-  
թյունն իր ամբողջությամբ: Ովքեր գեմ են:—Վոչ վոք,—ովքեր  
ձեռնպահ են—վոչ վոք: Ովքեր բնդունում են—(բոլոր պատգամա-  
վորները ձեռք են բարձրացնում): Թույլ տվե՛ք հայտարարելու.  
վոր Միության կանոնադրությամբ ընդունվում է միաձայն (յեր-  
կարատե ծափեր):

Ընկերներ, մեր սրահարդի հերթական հարցը «Հայգյուղկոտպին»  
առաջիկա 6 ամսվա գործունեության ծրագիրն է: Բայց թույլ  
տվե՛ք, այդ հարցին անցնելուց առաջ գեկուցել մի ուրիշ հարցի մա-  
սին—գա մեր նոր կազմակերպված Հայգյուղկոտպին մասնակցու-  
թյան ինդիքն է Համամիութենական «Սեյակոսյուզին»: Յերը  
այս մասին հարց ելինք գնում, մենք վոչ մի փոխհարաբերություն  
չունեցինք նրա հետ: Մնում է մեկ հիմնվել կոոպերատիվ համերաշ-  
խություն վրա, վորոշելու մեր նրան անգամակցելու ինդիքը, վո-  
րովհետև առանց նման մի համախորհրդային մաշտաբով կազմա-  
կերպված միություն սժանգակություն մենք չենք կարող մեր  
գործն իրա արժանի բարձրություն գնել: Ընկերներ, պետք է  
ստեղծվի, վոր «Սեյակոսյուզին» իր պատասխանատու աշխատակցին  
սեղանի է մեր համապատասխան, գուր այդ պիտեք, և միևնույն  
ժամանակ «Սեյակոսյուզին» վարչություն կամունխատական ֆրոնթ-  
իան հարկ է համարել զիմել մեր համապատասխան հետևյալ նա-  
ցիան մեզ: յես կը կարգամ միայն նրա վորոշակները: (Ընկ. Մեյիքը  
կարգում է նամակի այն մասերը, վարավ «Սեյակոսյուզին» կամֆրակ-  
ցիան վողջունում է մեր համագումարը, ցանկանում աշխատանք-  
անտեսական կոոպերացիան, «Ցարմոկավչիրու» սրինակով կր  
անդամակցի Համախորհրդային «Սեյակոսյուզին»: (Համապատասխան  
նամակը բնդունում է յերկարատե և բուն ծափերով):

**ՆԱԽԱԳԱՀ.**—Ընկերներ, «Սեյակոսյուզին» մեր անգամակցելը  
մեկ տալիս է վորոշ իրավունքներ և միևնույն ժամանակ վորոշ  
պարտականություններ և գնում մեկ վրա: Յես հավասարած կա-  
րող եմ ասել, վոր մեր կազմակերպությունը կարող է հանձն առ-  
նել և կատարել գրա հետ կապված բոլոր պարտականությունները:  
Այժմ յես քվեարկում եմ մեր անգամակցություն հարցը «Սեյակո-  
սյուզին»: Ովքեր համաձայն են թող ձեռք բարձրացնեն: (Համա-  
սոյուզին):

դումարի պատգամավորները բոլորն անխափր ձեռք են բարձրացնում) : Ընկերներ. թույլ ամբիջ հայտարարել, վոր ընդունվում է միաձայնությամբ : (Յերկարատե ծափահարություն) :

Ընկերներ, հետեյալ գեկուցման անցնելուց առաջ հայտարարվում է հինգ բոպե ընդմիջում) .—

Նիստը վերակալում է նախագահությամբ ընկ. Շաղունցի :

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկերներ, «Գյուղատնտեսական կոոպերացիայի հերթական անելիքների մասին գեկուցելու համար խոսք ե տրվում ընկ. Մելիքին :

ՄԵԼԻՔ.—Ընկերներ, յես հոգնած եմ, կը աշխատեմ մի քանի բոպեյում ընդգծել այն հիմնական խնդիրները, վոր իմ կարծիքով պիտի կիրառի հետագայում Հայգյուղկոոպի վարչությունը : Յես կարծում եյի, վոր մինչև այս գեկուցումը, մեր սեկցիաների նախագահությունները կը գեկուցելին իրենց վորոշումների մասին, վորից հետո յես կը կարողանայի վորոշ նյութ քաղել և հաշվի առնել այն՝ թե ընկերներն ինչ են մտածում անտեսական այս կամ այն ճյուղի կոոպերացման մասին : Սակայն դժբախտաբար տեղեկությունները գեո չեն ստացվել : Յես կաշխատեմ իմ տեսակետները պարզել համազումարի առաջ, ապագա վարչության պերսպեկտիվային գործունեյության մասին :

Ընկերներ, Գյուղկոոպիկենտրոնի հաշվետու գեկուցման ժամանակ մենք ընդգծել ենք մի շարք թերություններ. ապեց, վոր նա միայն վորոշ ուղղությամբ է տարել իր աշխատանքները : Այլ ինքն գլխավորապես նա տարել և կազմակերպչական աշխատանքներ և միջնորդել և առանձին կոոպերատիվներին վարկ ստանալու : Պարզվեց, վոր Գյուղկոոպիկենտրոնը չի կարողացել ավելին անել, քան ինչ նա արել է, վորովհետև նա չի ունեցել Չեր հավաքական կամքը, ինչպե և անհրաժեշտ գրամական միջոցները : Ահա սրանք են այն գլխավոր պատճառները, վորոնք հարկադրել են գյուղկոոպիկենտրոնին զբաղվել բացառապես կազմակերպչական աշխատանքներով : Իսկ այժմ յերբ դուք արդեն միություն կազմակերպեցիք, ապագա նրա կենտրոնական վարչությունը, իհարկե, պիտի աշխատի իրազործել այն բոլոր պահանջները, վոր մենք պիտի ստանալը ենք այստեղ :

Վորոնք են այն հիմնական խնդիրները, վոր կատարելու յե Հայգյուղկոոպը : Նախ քան այդ հարցին անցնելը, թույլ ամբ ինձ կրկին մտանանչել մի շարք թերություններ, վոր նկատել ենք մեր այս տարվա գործունեյության ընթացքում և վորոնք պիտի վերացնել հետագայում :

1. Այն անսխառն աշխատանքի ընթացքը, վոր ունեն մեր կազմակերպությունները,—պետք է վերացնել հետագայում : Ինչուհի և կայանում այդ թերությունը : Շատ անգամ մեր կոոպերատիվները ձեռնարկում եյին այնպիսի աշխատանքներ, վորոնք խլում եյին նրանցից ահագին ժամանակ և եներգիտ, թույլ շտաբով նրանց կենտրոնացնել իրենց ուշադրությունը ավելի դրլխավոր և անհրաժեշտ աշխատանքների վրա : Վերջին հաշվով իրենց վրա վերցրած պարտականությունը չեյին կարողանում կատարել : Ներկայումս մեր մանր կոոպերատիվներն իրենց ուշադրից վեր աշխատանք են կատարում : Կան շրջաններ, վորտեղ պետական որդանները թեև հսկայական ծախսեր հանձն առնելով՝ խոշոր բեռ են դնում նոր կազմակերպված կոոպերատիվ ընկերության վրա : Բնական է, վոր կոոպերատիվը չկարողանա կատարել, կամ կատարել տասնապատիկ ավելի ծախսերով : Այսպիսի վերաբերմունք շատ անգամ և նկատված : Կարևոր եմ համարում շեշտել, վորպեսզի վարչությունը կտրուկ միջոցներ ձեռք առնի, վոր մեր տեղական կոոպերատիվները իրենց չժանրաբեռնեն անուպուս գործարքներով և կանգնեն անտեսավարական հաշվառման սկզբունքի վրա, և փոսնգի տակ չը դենն կոոպերատիվի շեշին միջոցներն ու նրա հեղինակությունը :

Յերկրորդ խնդիրը, վոր հետագա վարչությունը պետք է կիրառի, դա կոոպերատիվ միջոցների՝ փայլավնարի և մուսքի վրնարի գանձման խնդիրն է, վոր իր հերթին խոշոր նշանակություն ունի անտեսավարական և կազմակերպչական ծախսի տեսակետից : Մեր կոոպերատիվներում փայլավնարների հարցը կազում է : Ամենից առաջ կոոպերատիվները շունեն հիմնական գրամազրախ յեթե չհաշվենք աննշան ինվենտարը : Չի նկատվում փայլավնարների կանոնավոր մուծում, մինչդեռ նոմինալ ձևով հաշվում են սեփական միջոցների մեծ գումար և այդ հաշվով ել վարկեր են ստանում : Յեթե վերցնում ենք վորոշ պարտքեր, պետք է մտածենք նրանց հանցանելու մասին : Չգույշ պետք է լինենք, վոր չը բազմապատկենք մեր ծախսերը և չը ծանրաբեռնվել ավելորդ տեղ : Գյուղացին ունի մի հոգեբանություն՝ վորքան հնարավոր է և ավելի վարկ ստանալ, նա չի մտածում պարտքերը ծածկելու մասին. իսկ կոոպերատիվի վարչությունը պետք է այն հոգեբանությունը լիկվիդացիայի յենթարկի և հաշվի առնի իր հնարավորությունները : Ուրեմն յերկրորդ հիմնական հարցը մեր կոոպերատիվ ցանցի առողջացման ու զարգացման համար այն է, վոր



ներից մեկն է: Նույնը կարելի է ասել նաև Նոր-Ֆայագետի համար: Այդ հսկայական շրջանը, վոր 75-100 վերստ ասարածություն ունի, միայն Նոր-Ֆայագետում և Յելենովկայում ունի վարկափորման կենտրոն: Ընդհանրապես ուրեմն գյուղատնտեսական վարկային կոոպերատիվների ցանցը պիտի աշխատել լայնացնել: Քանիցս առաջարկներ են յեղել մեզ Նոր-Ֆայագետի և Դարալազի կողմից, այդ ուղղությամբ գործելու բայց մենք մեզնից անկախ նկատառումներով՝ չենք կարողացել գոհացնել այդ անջարկները: Վարկային կոոպերացիայի շուրջը կան չլուծված խնդիրներ, սակայն դա չի խանգարի Միության, յեթե նա ամուր հիմքերի վրա դնի վարկային գործը:

Ծխախոտագործություն.— Ծխախոտի շրջանը Յերևանի, Լենինականի, Դիլիջանի և Լոռվա շրջաններն են նկատվում գլխավորապես: Դեռ պարզ չէ, թե ծխախոտի արտադրությունը վոր շափով հնարավոր է յերկրի ներսում բնալիցացիայի յենթարկել, սպասել: Քանի վոր Հողփողկոմատը իր ծրագրի մեջ նկատի ունի նույնպես այդ ճյուղի զարգացումը, մենք պարտավոր ենք ուշադրություն դարձնել նրա կոոպերացման վրա. առանց նկատի ունենալով թե յերկրի ներսում ինչքան կարելի է սպասել: Արտահանության համար ծխախոտը յավագույն մթերքներից մեկն է, և մեր տվյալների համաձայն մեր յերկրի ծխախոտը գերազանցում է իր վորակով Սուխումի և Լագուդեխի ծխախոտներին:

Մեղվաբուծություն.— Հայաստանը լինելով լեռնային շրջան, վոր շափով հնարավորություն ունի անսնանապահություն զարգացնելու, նույն շափով էլ նա կարող է զարգացնել մեղվաբուծությունը: Մեղվաբուծությունը քայքայված է, փեթակներ չկան, խոշոր յետանդ և միջոցներ են պետք վերականգնելու այն: Այժմ մեր ցանցի մեջ մտնում են 9 մեղվաբուծական կոոպերատիվներ, սրանց մեջ չի հաշվում Դիլիջանը, վորովհետև նա գանվում է «չափերատվոր ասանձնության» մեջ: Հետագայում կարելի է մեղվաբուծությունը զարգացնել Լենինականում, Դիլիջանում, Լոռում, Զանգեզուրում, Դարալազայում և Նոր-Ֆայագետում:

Այգեգործություն.— Այս ճյուղը սահմանափակված է գլխավորապես Եջմիածնում, Յերևանում, Դարալազայում և Մեղրու շրջանում: Այժմ ունենք նման 7 կոոպերատիվներ, վորոնք աշխատում են, և 2 էլ նոր են հաստատված: Քիչ են այս միավորների թիվը և վորակով էլ թույլ. մինչդեռ գինեգործությունը խոշոր արժեք ունի մեր արդյունարեքության համար: Մեր մտանադեպ-

ների և տեղական բնկերների կարծիքները ու ցուցմունքները գալիս են ասելու, վոր 10-15 միավորներ կարող ենք ունենալ զանազան շրջաններում: Ընկ. Գրձեյանի կարծիքն այն է, վոր ավելի փոքր միավորներ կարող ենք ունենալ: Խոշոր գործ ունենք կատարելու այս ուղղությամբ: Պետք է ուժեղացնել առաջին հերթին գոյություն ունեցող բկներությունները, ապա զարգացնել ցանցը հնարավորության սահմաններում: Ղամարլիի պատգամավոր բնկերներից մեկը, ասում է, «դրամ պիտի լինի թե վոչ»: Յես ասացի, վոր պետական ոժանդությունը անվիճելի է: Կաթնատնտեսությունից հետո Միության համար խոշոր նշանակություն պիտի ունենա գինեգործությունը և պտղաբուծությունը, պահածո մրգերի գործը:

Բամբակագործության ասպարիզում գրեթե վոչինչ չենք արել: Սրա հիմնական պատճառների մեջ չեմ մտնում. բայց անհրաժեշտ է կոոպերատիվ միավորների միջոցով վարել բամբակի մշակույթը: Սրա հետ միասին ուշ պիտի դարձնել միլիորատիվ աշխատանքների վրա: Սեկցիան այս առթիվ ասել է իր խոսքը դրական իմաստով. (կարդում է...): Սրանից ավելի լավ ձևակերպություն չեր կարելի տալ: Մի քանի խոսք այդ բնկերությունների բնույթի մասին: Շատերի համար կարծես թե պարզ չէ միլիորատիվ բնկերության անհրաժեշտությունը: Նրանք կոչված են խոշորապես բարձրացնելու հողի բերրությունը և հնարավորություն տալու այս կամ այն կուլտուրան բարձրացնելու: Որինակ, յեթե կարողանանք կոոպերատիվ բնկերության միջոցով վորեւե ճահիճ շորացնել, դա կլինի մի խոշորագույն աշխատանք մեզ համար: Մի այլ որինակ. ջրի հարցը՝ մի ցավոտ խնդիր է. յեթե կոոպերացիայի միջոցով կարողանանք մի շարք անջրդի հողեր ջրել, առուններ հանել, դա նույնպես հսկայական ոգնություն կլինի գյուղացիության համար. գրանով մենք կը կարողանանք միրարների (ջրբաշխ) սխրագործությունների առաջն առնել: Համարյա մենք այս ուղղությամբ վոչինչ չենք արել, վորովհետև մեր ույթերը չեն ներել: Այդ աշխատանքները պետք էր սկսել զարնան ժամանակ, իսկ մենք այդ շրջանն անց ելինք կացրել: Այս ասպարեզում պիտի ասել, վոր վոչ պետական և վոչ էլ հասարակական հիմնարկներ չեն խնայելու իրենց ոգնությունը: Առաջին հերթին մտաւորապես 9 միլիորատիվ բկերություններից ցանց կարելի յե ունենալ Հայաստանի գաշտային շրջաններում:

Մեր ասպաղա ցանցի մեջ զբված են նաև այլ տիպի բնկերու-

թյուններ—անասնապահական, քոչնապահական, շերամապահական, արհեստագործական և այլն: Մեր հետագա վարչության անելիքներից մեկն էլ այդ ընկերությունների կազմակերպման, ձևավորման գործն է:

Յեթե շատ չյերկարացնենք, պիտի ասեմ՝ այն, վոր այս բոլորը ինչ վոր ասացին, չե թե հենց վաղն և յեթ պիտի իրագործենք, այլ վոր սրանք մեր ցանկություններն են, մեր հեռավոր ձգտումները, վորոնց հասնելու յենք հասարակական ու պետական ոժանդակությամբ կոոպերատիվների միջոցով: Ապագա կենտրոնական վարչությունն այս հեռանկարների 50 տոկոս էլ յեթե իրագործի, կր լինի մի խոշոր հաղթանակ մեզ համար:

Ընկերներ, խոսելով մեր կենտրոնական վարչության հետագա անելիքների մասին չի կարելի կանգ չառնել մեր միավորների հաշվապահության հարցի վրա, վոր ախուր վիճակի մեջ է այժմ: Ընկեր Գարբելյանն ասաց, վոր պիտի մշակել մի ընդհանուր հաշվապահական ձև: Գյուղկոոպիկներունը աշխատել է այդ ուղղությամբ, բայց այնքան էլ դյուրին չե այդ: Տեղերում չկան կարող ույթեր, վոր կարելի լինի միատեսակ ձև կիրառել: Հետագա վարչության տանելիքներից մեկը պիտի լինի գոնե հասարակ ձևով մի որինականություն մտցնել հաշվապահության մեջ: Յես մի որինակ ասեմ մեր հաշվապահությունից: Ղուրղուղուլու մեր ընկերները մեզ հաշիվ են ուղարկել, վորը յեթե փոխյինք, այս բեմը կծածկեր: Մեր ընկերները հարկադրվեցան նրանց ուղարկած տեղեկագիրը փոխել հատակի վրա, թվերը ստուգելու համար (ծիծաղ): Ստատիստիկան, հաշվապահությունը չափազանց վատ են արված մեր տեղերում: Պետք է անպայման բարելավել:

Խոշոր և դժվարին խնդիր է ինվենտարի մատակարարման գործը:

Այստեղ մեզ մեղադրում են, վոր ինվենտար չենք ունեցել և տեղերին ինվենտար չենք տվել: Հայդյուղկոոպի գլխավոր նպատակներից մեկը պիտի լինի ինվենտար մատակարարել իր անդամներին: Դա պետք է լինի տեղերի կարիքները պարզելուց հետո և նրանց ցուցմունքներով անհրաժեշտ և յերկարատե վարկ և շատ գրամ, վոր մենք չունենք: Պիտի աշխատել նույնպես ապրանքով վարկավորել մեր անդամներին: Ինվենտարի մատակարարման գործը կենտրոնացնելով Միության ձեռքում՝ միաժամանակ կր լուծենք ներկայիս ինվենտարի զանազան ցուցմունքները: Կոոպերացիան հաջողությամբ կկատարի:

Գյուղատնտեսական արդյունքների հայթայթումը, վերամշակումը և վաճառքը.—մի-մի պրոբլեմներ են, վոր միայն մեզ այլ և պետության համար: Պետք է կազմակերպել գյուղացու արդյունքների վաճառքը կոոպերացիայի կարեորագույն անելիքն է դա: Բոլոր ընկերները պիտի նկատի ունենան, վոր իրենց արդյունքները (պրոդուկցիան) վաճառահանելով Միության միջոցով ապահոված կլինեն նրա բարձր գինը և հաջող վաճառքը, միաժամանակ և արդյունաբերական միջերջների մատակարարման գործը՝ դյուրին՝ կը դյուրացնեն:

Ընդգծելով մեր Միության անելիքներն այդ ուղղությամբ, չի կարելի աչքից հեռացնել ագրիկուլտուր աշխատանքները: Ինչ աշխատանք պիտի տանենք այդ ուղղությամբ: Ընկ. Շաբունցն իր զեկուցման մեջ ասաց, վոր այդ աշխատանքների մի մասը անցել և կոոպերատիվներին, բայց մի շարք խնդիրներ զեո մնացել են Հողժողովատի վրա, վորովհետև կոոպերացիան միջոցներ չունի կատարելու այն: Միությունը պիտի միջոցներ գտնի ագրոկուլտուր աշխատանքները տանելու գյուղում և կոոպերատիվների համար:

Ամեն կողմից մոտենում ենք մի ուրիշ հիմնական խնդրի՝ դրամական միջոցների: Կանոնադրության մեջ կա մի կետ, թե ինչ հնարավորության սահմաններում կարելի է վարկ բաց անել Միության համար: Դուք պիտի այժմ վորոչևք այդ հնարավորության սահմանը: Մենք այս առիթով նախատեսել ենք մոտ 300.000 ռ. վարկ: Մենք հիմնական դրամագլուխ չունենք, բացի ձեր խոստումներից. միայն այն դեպքում գյուղատնտեսական կոոպերատիվ միությունը հնարավորություն կունենա գոնե կեսի չափ կատարելու առաջադրված աշխատանքները յեթե վարկի հետ միասին կատարվեն և ձեր խոստումները: Մեզ ոգնության պիտի համեն տեղական կազմակերպությունները, նրանք, անարխիստական տենդենցներ չպիտի յերեվան բերեն միջերջների ուսուցիչացիայի խնդրում. նրանք պիտի աշխատեն Միության կենտրոնի միջոցով կատարել իրենց գործերը: Այս հիմնական խնդիրների կիրառման դեպքում, յես վստահ եմ, վոր ապագա վարչությունը կկարողանա պայծառ դեմքով հանդես գալ մեր 2-րդ համագումարին (ծափեր):

ՆԱԽԱԳԱՀ.—Ժամը մեկն է. բոլոր լեզվամեծի նիստը պիտի վիակենք: Կա այս առթիվ առաջարկ:

Ձայն.—Սեկցիաների աշխատանքները զեո չեն զեկուցվել. նրանք յերկար կտևեն, առաջարկում եմ նիստը հետաձգել յերեկոյան:

**ՆԱԽԱԳԱՀ.**—Յեւ էլ նպատակահարմար եմ գտնում վերջինի տոաջարկը. այժմ կը թարգմանենք Մեյիքի գեկուցումը և մնացած խնդիրները կը հետաձգենք յերեկոյան նիստին: Յեթե ձեզ ցանկա- յի ե կարող ենք նիստը սկսել ժամի 3-ին: Բայց մի խնդիր կա: Առաջարկվում է ընկ. պատգամաւորներին գնալ «Չազ», անտե- սությունը տեսնելու ծխախոտի, խոտաբուծութեան, անասնա- պահութեան ազարակը, ապա յերեկոյան ժամի 5-ին սկսել նիստը, ընդունվում է: Հետո փորոշվեց գնալ «Չազ»:

**ՆԱԽԱԳԱՀ.**—Թարգմանութեան համար խոսք ե տրվում ընկ. Մեյիքին: (Մեյիքը թարգմանում է իր գեկուցումը ուսանողներին): Առաջարկ կա վիճարանութեան բաց շանել Մեյիքի գեկուցման ա- ութիթով:—Ընդունվում է:—Ուրեմն Մեյիքի գեկուցումը անվում է ի գիտութեան և ի գործադրութեան: Կարենը ե սակայն քվեարկել ընկ. Մեյիքի առաջարկած վարկի չափը: Ով համա- ձայն է 300.000 ռ. վարկին: Ընդունվում է միաձայն:

Նիստը հայտարարվում է փակված ժամի 1 և կեսին:

**ՎԵՅԵՐՈՐԴ ՆԻՍՏ**

(6-րդ նիստը կայացավ յերեքշաբթի սեպտեմբերի 23-ի յե- րեկոյան ժամը 6-ին նախագահութեամբ ընկ. Շագունցի):

**ՆԱԽԱԳԱՀ.**—Համագումարի 6-րդ նիստը հայտարարում է բացված: Որակարգի մեջ մտնում միայն յերկու հարց, բանաձե- վերի ընթերցումն ու հաստատումը և ընտրութեան ընկերներ:

(Սեկցիաների նախագահները կարդում են իրենց վորոշումները)

**ՄԵԼԻՔ.**—Գյուղատնտեսական սեկցիաների գուրս բերած բանաձեւերը, ինձ թվում է կետ առ կետ չպիտի քննու- թեան յենթարկենք, այլ տալ ապագա վարչութեանը ի ղեկավարու- թեան: (Ընդունվում է):

**ՍՍՖՐԱԶԲԵԳՅԱՆ.**—Հայտարարում է վարկային ընկերու- թեաններին մասին կազմակերպված սեկցիաների վորոշումները:

**ՆԱԽԱԳԱՀ.**—Ընկերներ, սեկցիաների բոլոր վորոշումները արդեն հայտարարեցին և ինձ թվում է թե վորեւե միտք չկա մտքե- րի փոխանակութեան կատարել: ինձ թվում է, վոր բոլոր հարցերի մասին յեղած վորոշումները պետք է հանձնել ապագա վարչութեան- նը՝ վորպէսզի նա ղեկավարվի այդ վորոշումներով: Յեթե այս մասին առարկութեաններ չկան՝ այն ժամանակ անցնենք հետեյալ հարցերին: Առարկութեաններ չկան:

**ՄԱՆՈՒԿ.**—Այստեղ անհրաժեշտ է սրարկել մի հիմնական

հարց, այդ այն է պետք է մտցնել բանաձեւի մեջ, վոր վարկային ընկերութեանները մեր գյուղատնտեսական կոոպերացիայի ան- միջական մասնիկներն են:

**ՋՍՅՆ.**—Ընկերներ ինձ թվում է, պետք է ընդունված բանա ձեւի մեջ ափեյացնել նաև խոտհարկատուների մասին:

**ՆԱԽԱԳԱՀ.**—Ճիշտ է պետք է ափեյացնել:

**ՆԱԽԱԳԱՀ.**—Ընկերներ, մեր համագումարի կազմի մասին գեկուցման խոսք ե տրվում մանդատային հանձնաժողովի անդամ ընկ. Մելիքոյանին:

**ՄԵԼԻՔՈՆՅԱՆ.**—Ընկերներ մանդատային հանձնաժողովի գեկուցումը յեթե պակասափոր լինի մեզքը մերը չէ, վորովհետե մի շարք հանգամանքներ խանգարել են մեր աշխատանքներին: Համաձայն համագումարի կազմակերպիչ բյուրոյի վորոշած նոր- մային մեր համագումարի 75 կազմակերպութեաններին պետք է ունենար 107 ներկայացուցիչ, բայց ներկա են միայն 74-ը, վո- րոնք յեկել են 67 կազմակերպութեաններին: Բացակայում են 8-ը հոգի, վորոնք հետեյալ տեղերին են. Լեւինականի մեղվարու- ծական և կաթնատնտեսական ընկերութեանից, Դիլիջանի մեղ- վարուծական ընկերութեանից և գյուղատնտեսական արտելից, Դարալագյազի վարկային ընկերութեանից, Զանգեզուրի վարկա- յին և կաթնատնտեսական ընկերութեանից և Մեղրու շերամապա- հական արտելից: Այնպես, վոր համագումարը ունի ընդամենը իր հրավիրված կազմի 69 անդամ: Այժմ տեսնենք թե, վո՞ր կազմա- կերպութեանը, ի՞նչքան ներկայացուցիչ պիտի տար և ինչքան տվել է: Այգեգործներից 6-ի փոխարեն տվել են 3 ներկայացուցիչ, Գյուղատնտեսական հյուղը 4-ի փոխարեն տվել է 3 ներկայացու- ցիչ, Մեղվարուծականը մեկի փոխարեն տվել է յերկու ներկայա- ցուցիչ, ուրեմն մեկն տվելի, Լեւինականը տվել է 4-ի փոխարեն 3 ներկայացուցիչ, Եջմիածինը 11-ի փոխարեն տվել է 9-ը ներ- կայացուցիչ, այգեգործական ընկերութեանը 3-ի փոխարեն տվել է 4 ներկայացուցիչ, Լոռու-Փամբակ դավառի արտելներին հատ- կացված է 38 տեղ, բայց ներկայացել են միայն 32 ներկայացու- ցիչ: Վարկային ընկերութեանը չորսի փոխարեն տվել է միայն յերեք ներկայացուցիչ: Մեղվարուծական ընկերութեանը չորսի փոխարեն յերեքը: Դարալագյազի մեկ ներկայացուցիչը չկա: Չանդեզուրի յերեք ներկայացուցիչները չկան, Մեղ- րու վարկային ընկերութեան յերկու ներկայացուցիչներ- րից մեկն է յեկել, շերամապահական վոչ վոր. Նոր-Բայա-

զեզի չորս ներկայացուցիչներէց յեկել են յերկուսը: Այսպէս ու-  
րեմն Յերեանի և Եջմիածնի զավատներէց ուղարկված են մեկա-  
կան ավելի ներկայացուցիչներ: Մանդատային կոմիտեան ցանկա-  
նում եր չհաստատելու դրանց մանդատները, բայց վորովհետև մի  
քանի անգերից ներկայացուցիչները պակասում են, այդ պատճա-  
ռով նա մտադիր և հաստատելու դրանց մանդատները:

Մեր համագումարին վնասական ճայնով մասնակցում են 74 հո-  
գի և խորհրդակցական 20 հոգի զանազան հիմնարկներէց, վորոն-  
ցից մասնագետները 10 հոգի. նաև հյուրեր Թիֆլիզից և Մոսկվա-  
յից:

Ըստ տարիքի մեր 74 պատգամավորները հետևյալ պատկերն  
են ներկայացնում: Մինչև 23 տարեկան-մեկ հոգի, կամ 1,3  
տոկոս, մինչև 30 տարեկանը-21 հոգի կամ 68,4 տոկոս, մինչև 40  
տարեկանը-20 հոգի կամ 39,2 տոկոս, մինչև 50 տարեկանը 16 հոգի  
կամ 21,6 տոկոս, և հիսունից բարձր տարիքով՝ 9 հոգի 9 և կես  
տոկոսով:

Համագումարի լիազորների կազմը կոուպերատիվ ստաժի տե-  
սակետից. կոուպերատիվ ստաժ-չունեցողներ 5 հոգի են կամ 6,8  
տոկոս, մինչև մեկ տարի՝ 37 հոգի կամ ուղիղ 50 տոկոս, մինչև  
յերեք տարի՝ 16 հոգի կամ 21,6 տոկոս, մինչև 5 տարին-4 հոգի  
կամ 5,4 տոկոս, մինչև տասը տարին-7 հոգի կամ 9,5 տոկոս և տասը  
տարուց բարձր ստաժ ունեցողների թիվը 5 հոգի, այսինքն 6,7  
տոկոս:

Պատգամավորների սոցիալական կազմը հետևյալն է. գյու-  
ղացիների 47 հոգի, վոր կազմում է 63,5 տոկոս, և ծառայողների  
27 հոգի կամ 26,5 տոկոս:

Կուսակցական ստաժով համագումարում կան 13 հոգի, վո-  
րոնցից յերկուսը կոմկուսակցութեան թեկնածուներ են, իսկ մնա-  
ցածները անդամներ: Պատգամավորներից մեկը 1902 թվից  
Հնչակյան Կուսակցութեան անդամ է:

Պատգամավորների կրթական ստաժը հետևյալն է. անգրա-  
դետներ բոլորովին չկան, կիսապրագետները-13 հոգի են, կամ 17,6  
տոկոս, տարրական կրթութեամբ-41 հոգի կամ 55,4 տոկոս, միջ-  
նակարգ կրթութեամբ 18 հոգի կամ 24,3 տոկոս և բարձրագույն  
կրթութեամբ 2 հոգի կամ 2 տոկոս:

Ըստ ազգութեան հայեր, 51 հոգի, վոր կազմում է 63 տոկոս,  
ուսաններ և մարականներ 19 հոգի կամ 25,7 տոկոս, և թուրքեր 4  
հոգի:

Արեւիտութեան անդամներ են 29 հոգի կամ 39,3 տոկոսը:

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկերներ, յեթե հարցեր կան ավելք:

ՄԵԼՔՈՆՅԱՆ.—Այստեղ Եջմիածնի մասին հայտարարվեց թե  
հրավիրված են 15 հոգի, վորոնցից հինգը չկա: Դա սխալ է: Հրա-  
վիրված են չորսը, վորոնք բոլորն էլ կան:

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկեր Մելքոնյան, խոսքը ամբողջ գավառին և  
վերաբերում:

Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ.—Ընկերներ, Մանդատային հանձնաժողովը  
հայանեց թե յերկու հիմնարկութեանից ավելորդ ներկայացու-  
ցիչներ են յեկել յերկուական հոգի և պետք է հաստատել, վորով-  
հետև ուրիշ անգերից ներկայացուցիչները պակասում են: Ինձ  
թվում է դա անհիմն ցանկութեան է և այս խնդիրը պետք է վերջ-  
նականապէս լուծել վորպէսզի հետագայի համար որինակ չծառ-  
յենք:

ՄԱՆՈՒԿ.—Յերեանի մեղվարուծական ընկերութեանը տրված  
է մեկ ներկայացուցիչ, բայց վորովհետև նրանք 120 անդամ ունին  
այդ պատճառով յերկու հոգի կարող են տալ: Եջմիածնի այդե-  
զործական ընկերութեանը հին անգերից յայննեքով 140 անդամ  
ունեն և մենք նրանից յերկու լիազոր ենք խնդրել:

ՆԱԽԱԳԱՀ.—Հետաքրքիր է, լիազորները յեկե՞լ են գավառից  
թե ավելորդ ներկայացուցիչներ ավել են միութեանները:

ՄԵԼՔՈՆՅԱՆ.—Ավելորդ ներկայացուցիչներ ավել են դա-  
վանները:

ՆԱԽԱԳԱՀ.—Առաջարկութեան կա հաստատել այդ ընկերու-  
թեան համար յերկու ներկայացուցիչ, վորովհետև 100 հոգուց  
ավել են:

Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ.—Յես առաջարկում եմ չհաստատել այդ  
առաջարկը, վորովհետև մանդատային հանձնաժողովը հայտա-  
բարում է թե յերկու չէ այլ մեկ է:

ՆԱԽԱԳԱՀ.—Յես քվեարկում եմ այս յերկու առաջարկները:  
Յերկու ներկայացուցիչները հաստատվում են:

ՆԱԽԱԳԱՀ.—Եջմիածնին հատկացված է յերեք անդ, նա  
ավել է չորսը: Հաստատելու դրանց թե վո՞չ:

ՏԵՂԻՑ.—Մեր այգեգործական ընկերութեանը սկզբում 18  
անդամ ունեն, վերջում ավելանալուց և դառնալից հետո մնացին  
94-ը, և վորովհետև այժմ 120 հոգի յեն, իսկ քանի վոր 101-ից  
տրվում է յերկու հոգի՝ 120 հոգին ավելի քան իրավունք ունին յեկ-  
կու ներկայացուցիչ տալու:

ՆԱԽԱԳԱՀ.—Առաջարկվում է հաստատել այս առաջարկը (հաստատվում է) :

ՁԱՅՆ.—Այստեղ կան յերեք հոգի, վորոնք վկայականներ ունեն, բայց մանդատ չեն ստացել: Նրանք յերեքն էլ թուրք են:

ՆԱԽԱԳԱՀ.—Մանդատ բոլորն են ստացել.—

ՄԵԼՔՈՆՅԱՆ.—Ընկերներ, մանդատային հանձնաժողովի կողմից ինչ վոր հնարավոր է յեղել արել ենք, յերեկ նախագահն էլ այստեղից հայտարարեց, վոր մանդատ շտապողները շտապեն ստանալու: Գուցե այս փոքրիկ թյուրիմացությունը ծագել է թուրք բնկերների հայերեն կամ ուսուցիչն չիմանալուց:

ՆԱԽԱԳԱՀ.—Այժմ թոյլ տվեք հաստատել 6 թուրք բնկերների մանդատները (հաստատվում է): Հաստատենք նաև մանդատային հանձնաժողովի ամբողջ գեկուցումը (հաստատվում է):

Խոսքը պատկանում է ը. Մանուկին կարգալու մշակված բանաձևերը Գյուղատնտեսական շինարարական խնդիրների մասին:

ՄԱՆՈՒԿ.—Կարգում է բանաձևերը: (Տես գրքի հավելվածում):

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկեր Մանուկի կարգացած բանաձևը իմ կարծիքով կարելի չէ ընդունել իբրև հիմք և հանձնել իմ բազրական հանձնաժողովին մշակելու: Միայն առաջարկում եմ վորպեսզի սպառողական կոոպերացիային վերաբերվող կետը հանել:

ՄԵԼՔ.—Իմ կարծիքով ընկեր Մանուկի կարգացած բանաձևն ամբողջութամբ պետք է ընդունել առանց կրճատումների:

ՆԱԽԱԳԱՀ.—Յես պնդում եմ իմ առաջարկի վրա, վորովհետև տե կարծում եմ, վոր Կոմունիստական կուսակցության 13-րդ համագումարի բանաձևը կոոպերացիայի մասին Հայաստանի Գյուղատնտեսական Կոոպերացիայի կողմից հաստատման կարիք չի գրում: Յես քվեարկում եմ, նրանք ովքեր կողմնակից են ընկ. Մանուկի բանաձևին այդ կետի թողնելուն, խնդրեմ թող ձեռք բարձրացնեն: (Վոչ վոք ձեռք չի բարձրացնում): Նրանք ովքեր համաձայն են իմ առաջարկած կրճատմամբ բանաձև ընդունելուն թող ձեռք բարձրացնեն—(այս վերջին առաջարկն անցնում է միաձայն): Խոսքը պատկանում է ընկ. Սաֆրազբեկյանին՝ Հայաստանի Գյուղատնտեսական Բանկի գործունեյության առիթով մշակված բանաձևը կարգալու համար:

ՍԱՅՐԱԶԲԵԿՅԱՆ.—Կարգում է բանաձևը:

ՆԱԽԱԳԱՀ.—Առաջարկում եմ այնտեղ, վորտեղ ասվում է չքափոր գյուղացիություն, ավելացնել նաև միջակ գյուղացիություն խոսքերը:

ՍԱՅՐԱԶԲԵԿՅԱՆ.—Ընկեր նախագահի առաջարկին համաձայն եմ:

ՆԱԽԱԳԱՀ.—Հողօգտվումի գործունեյության մասին բանաձևը կարգալու ընկ. Մանուկը:

ՄԱՆՈՒԿ.—Հողօգտվումաի գործունեյության մասին առաջարկում եմ հետևյալ բանաձևը.—

«Համագումարը Հողօգտվումի վարած քաղաքականությանը հավանություն է տալիս և ճիշտ է համարում:

ՄԵԼՔՈՆՅԱՆ.—Կարծում եմ «հավանություն տալը» անհարմար է, լավ է ասել «վողջունել»:

ՆԱԽԱԳԱՀ.—Թե մեկը և թե մյուսը անհարմար է.

ՄԵԿԸ ՏԵՂԻՅ.—Հավանություն տալը փոխել ճիշտ «խոսքերով» (ձայները անդրից. ընդունելի չէ):

ՆԱԽԱԳԱՀ.—Ուրեմն ընկերներ, Հողօգտվումի գործունեյության մասին ընկ. Մանուկի առաջարկած բանաձևը վերջին վոփոխությամբ ընդունվում է Ձեք կողմից. (ծափեր):

Այժմ ընկերներ, մենք պետք է մեր վերաբերմունքը ցույց տանք Հայգյուղատնտեսության վերաբերմամբ: «Յես առաջարկում եմ նրա աշխատանքները համարել բավարար և ընդունել վորոչում նրա լիկվիդացիայի յենթարկելու մասին (ծափեր): Այս առաջարկին ով է հակասակ—վոչ վոք:

Այժմ ընկերներ, օրակարգից մնում է միայն մի հարց. պետք է անցնենք ընտրություններին: Ընկերներ, պետք է ընտրել խորհուրդ. Վարչություն և Վերստուգիչ հանձնաժողով: Ինչ առաջարկներ կան օրանցից յուրաքանչյուրի թվական կազմի մասին: Այս մասին ով է ուզում խոսք:

ԽՈՒԴՈՅԱՆ.—Յես առաջարկում եմ ընտրվելիք մարմինների մեջ պարիտետային սկզբունքով մտցնել Գյուղատնտեսական Կոոպերացիայի բոլոր ճյուղերի ներկայացուցիչներին: Յես կարծում եմ, վոր այսպիսի սկզբունքով կազմված խորհուրդը և վարչությունը հաջող գործունեյություն կունենան:

ՆԱԽԱԳԱՀ.—Դուք թեկնածուների թիվը տվեք: Ո՞վ ուրիշ առաջարկ ունի:

Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ.—Յես առաջարկում եմ խորհուրդի կազմը սահմանել հինգ հոգի. (ձայներ անդրից. դա քիչ է):

ՄԱՍՏԻՅԵՎ.—Յես առաջարկում եմ, վոր խորհուրդի կազմը լինի իննը հոգուց, իմ կարծիքով ավելին անգործնական կը լինի:

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկերներ, կան հետևյալ առաջարկները խոր-

հուրդի կազմի վերաբերյալ հինգ (ընկ. Մելքոնյանն իր առաջարկը արդեն հանում է), իննը, 11, 17, 19 և 25: Ծարուհանկել չարժե յեղած առաջարկները քվեարկենք:

ՄԱՆՈՒԿ.—Ընկերներ, յես ուզում եմ պաշտպանել այն առաջարկը, վորով խորհուրդի կազմը լինելու յե 17 հոգի: Ընկերներ այդ թիվը մեծ չի, վորովհետև խորհուրդը մշտական սրգան չի սարին հազիվ յերկու յերեք անգամ նիստ ունենա:

ՆԱԽԱԳԱՀ.—Իմ կարծիքով ել 17 յավ է, վորովհետև խորհուրդն ինչպես առաց ընկ. Մանուկը, մշտական սրգան չէ. նա տարին յերեք չորս անգամ հավաքվելով գծելու յե Գյուղատնտեսական կոոպերացիայի ընդհանուր ուղիները:

Այժմ յես անցնում եմ քվեարկության. (քվեարկությամբ վորոշվում է խորհուրդի կազմն ունենալ 17 հոգուց. դեմ է միայն մեկը):

Հետևյալ ընտրությունը վարչությանն է. կա առաջարկ հիմնդ հոգուց և յերեք քեկնաձու. ով է դեմ այս առաջարկին:—վոչ վոք:

Վերստուգիչ հանձնաժողովի մասին կա հետևյալ առաջարկը յերեք անգամ և յերկու քեկնաձու: Ով է դեմ այս առաջարկին:—վոչ վոք:

Այժմ հայտարարում եմ ընդմիջում, վորից հետո կանցնենք խորհուրդի վարչության և վերստուգիչ հանձնաժողովի ընտրություններին:

Տասը րոպե ընդմիջումից հետո նիստը վերաբացվում է:

ՆԱԽԱԳԱՀ.—Ինչ առաջարկներ կան խորհուրդի կազմի մասին:

ՍԱՐԳՍՅԱՆ.—Խորհուրդի կազմի համար առաջարկում եմ հետևյալ ցուցակը.—

- Ս. Շաղունց (մեր նախագահը և Հողժողովի տեղակալ), Ս. Մելքոնյան՝ (Լենինականի դավառից), Ս. Եվոյան՝ (Լոռու գավառից), Ամիր-Ողլի՝ (Լոռու չրջանից), Հայկ Դաստակյան՝ (Ղամարլու գավ. մասից), Յերոպկին՝ (Լոռուց), Բուչնե՝ (Լոռուց), Կուրսել՝ (Հայկոպի նախագահ), Ռ. Մաֆրազբեդյան՝ (Գյուղբանկի նախագահ), Ա. Մելքոնյան՝ (Եջմիածնի վարկային ընկերության նախագահ), Գ. Աղամալյան՝ (գյուղատնտես), Ա. Մելքոնյան՝ (գյուղատնտեսական արեստի նախագահ), Փաննափազ՝ (Ղուրղուղուլու վարկային ընկերության նախագահ), Տեր-Չաքարյան՝ (Մեղրի), Այզինյան՝ (Յերևանից), Կլորիկյան՝ (Ժխախտագործներից):

ՆԱԽԱԳԱՀ.—Կան արդյո՞ք ուրիշ առաջարկներ—վոչ:

ՄԵԿԸ ՏԵՂԻՑ.—Ընկեր Տեր-Չաքարյանի փոխարեն առաջարկում եմ ընկ. Կոստանյանին:

ՆԱԽԱԳԱՀ.—Իմ ունեցած տեղեկությունների համաձայն ընկեր Տեր-Չաքարյանը, վորի թեկնածությունն առաջարկված է այստեղ ցուցակով, Մեղրու մշտական աշխատավորներից է մինչդեռ Կոստանյանը վոչ. (փոփոխման առաջարկը չի անցնում):

ԲՈՒԶՆԵՎ.—Սզատ ժամանակ չունենալու պատճառով, չորի տի կարողանամ մասնակցել խորհուրդի աշխատանքներին, ուստի առաջարկում եմ հանել իմ թեկնածությունը. (Բուչնեի դիմումը մերժվում է):

ՆԱԽԱԳԱՀ.—Քվեարկում եմ ամբողջ ցուցակը. ովքեր դեմ են—վոչ վոք. ովքեր ձեռնպահ են—հինգ հոգի, ովքեր կողմնակից են—մնացյալ բոլորը: Այժմ մենք կանցնենք վարչության ընտրության. ով առաջարկ ունի:

ՍԱՐԳՍՅԱՆ.—Վարչության անդամների համար հետևյալ ցուցակն եմ առաջարկում՝ ընկ. ընկ. Մելքին, Փանյանին, Չաքարյանին, Մալաֆեևին և ընկ. Մանուկին. իբրև թեկնածու առաջարկում եմ հետևյալներին, Սարգսյանին, Հայկ Գրիգորյանին և Լ. Թովմասյանին:

ՄԱՆԱՅԵՅԵՎ.—Խնդրում եմ իմ անունը վարչության կազմից հանել և դնել մեկ ուրիշի թեկնածությունը, վորը հնարավորություն ունենա մշտապես այստեղ ապրել:

ՄԵԼԻՔ.—Ընկերներ, Մալաֆեևը Հայաստանի Գյուղատնտեսական կոոպերացիայի ակտիվ աշխատավորներից մեկն է, և նրա մասնակցությունը վարչության աշխատանքներին անհրաժեշտ եմ համարում. (ընկ. Մալաֆեևի դիմումը մերժվում է):

ՆԱԽԱԳԱՀ.—Այժմ անցնենք քվեարկության. ովքեր դեմ են—վոչ վոք. ովքեր ձեռնպահ են, Տ հոգի, ովքեր կողմնակից են, մեծամասնությունը: (Ծափեր):

Այժմ անցնենք վերստուգիչ հանձնաժողովի ընտրության. ինչ առաջարկներ կան:

ՍԱՐԳՍՅԱՆ.—Վերստուգիչ հանձնաժողովի համար առաջարկում եմ հետևյալ ընկերներին՝ Վաղարշակ Վարդանյան՝ (Յերևանի վարկային ընկերությանից), Ս. Պետրոսյան՝ (Ֆինսոցըրեանի վարկային ընկերությանից), Ս. Պետրոսյան՝ (Լոռուց): Իսկ իբրև թեկնածու կոմատից և Ս. Չոքարյանին՝ (Լոռուց): Իսկ իբրև թեկնածուներ՝ ընկերներ Կարապետյանին և Ստեփանյանին (Դիրիջանից): Քվեարկությամբ այս ցուցակն անցնում է:

ՄԱՆՈՒԿ.—Ընկերներ, Հայաստանի Գյուղկոոպերացիայի կազմակերպման առաջին փեց ամսվա աշխատանքները ընթացել են

րնկ. Մեկիքի անմիջական զեկավարութեամբ: Ընկեր Մեկիքը մասնազատութեամբ բժիշկ է, բայց զուրս յեկավ, վոր նա ավելի լավ կոտակերատոր է, քան բժիշկ: Յես առաջարկում եմ, վորպեսզի նա լինի լիազորների ժողովի կողմից ընտրված նախագահ մեր վարչութեան. (ընկ. Մանուկի առաջարկը միաձայնութեամբ ընդունվում է: Ծափեր):

ՄԵԼՔՈՆՅԱՆ.—Ընկերներ, առաջարկում եմ վորպեսզի մեր Համագումարի կողմից խորհուրդի նախագահ ընտրվի ընկ. Շաբուհյանը, վոր այժմ նախագահում է. (ծափեր):

(Քվեարկութեամբ ընտրվում է):

ԽՈՒԴՈՅԱՆ.—Ընկերներ, վերստուգիչ հանձնաժողովի նախագահ առաջարկում եմ ընտրել ընկ. Վաղարշակ Վարդանյանին. (առաջարկն ընդունվում է):

ՄԵԼՔ.—Մեր համագումարն իր աշխատանքները արդեն ավարտեց: Սկզբում, յերբ մենք ձեռնարկում էինք Գյուղատնտեսական կոոպերացիայի կազմակերպման աշխատանքներին՝ Հայաստանում այսօրվա գրութեանը չէինք պատկերացնում, սակայն վորին այժմ մենք ականատես ենք: Դա հեռանք է այն պատրաստի հողի, այն գիտակցութեանը, վոր կար և մնում է Հայաստանի աշխատավոր գյուղացիութեան մեջ: Պետք է ասել, վոր մինչև այժմ կատարվելիք աշխատանքի հազիվ քսան տոկոսն է արված: Մնում է սկսված աշխատանքներն ավելի խորը կերպով շարունակել: Համագումարի պատգամավորները ցրվելով տեղերից նրանց զեկուցումների մեջ թող ամենից առաջ շեշտեն այն, վոր Գյուղատնտեսական կոոպերացիան Հայաստանում գոյութուն չունեն, բայց այժմ նա կա և նա յեկել է կատարելու խոշոր աշխատանք յերկրի անտեսութեան և հասկապես գյուղատնտեսութեան վերականգնման գործում: Գյուղատնտեսական կոոպերացիայի բոլոր աշխատավորները պետք է գիտակցեն, վոր կոչված են կիրառելու խորհրդային իշխանութեան և Կոմունիստական կուսակցութեան հրահանգները կյանքում: Հայաստանի գյուղացիական մասսաները պետք է համոզված լինեն, վոր այս ասպարեկում զձված ուղին միակն է, վոր ընդունակ է բարձրացնելու անտեսութեանը և նրան փրկելու կործանումից: Ընկերներ, ձեզ հայանի յե, վոր ասանց գյուղի և քաղաքի աշխատավորութեան միասնական աշխատանքի այն հիմնական խնդիրները, վոր զրված են խորհրդային իշխանութեան առաջ անկարելի յե իրագործել: Պետք է ստեղծել համագործակցութեան: Գյուղատնտեսական կոոպերացիան ահա

այն հիմքն է կազմում, վոր զոգում է գյուղացուն և բանվորին: Միք մոտանա, վոր գյուղում մասնավոր առևտուրը, և սպեկուլացիան դեռ չեն ճնշված: Գյուղատնտեսական կոոպերացիայի շուրջը խմբված աշխատավոր գյուղացիութունը պետք է կովի և վերջնականապես հաղթի մասնավոր առևտրականին և վերացնի սպեկուլացիան:

Համագումարի կազմը ներշնչում է այն համոզումը, վոր սկսված աշխատանքները մեզ բոլորիս կը տանեն դեպի փայլուն ապագան (ծափեր):

ՆԱԽԱԳԱՀ.—Այժմ թույլ տվեք ինձ ևս մի քանի խոսք ասել: Ընկերներ, իմ զեկուցման մեջ յես արդեն ասեցի, վոր դուք կոչված եք պայքարելու սպեկուլացիայի և մասնավոր կապիտալի դեմ: Այս ասպարեկում հաջողութեան կարելի յե հասնել ինքնագործունեյութեան միջոցով: Դրա համար Ձեր հիմնական մեթոդը պետք է լինի ինքնագործունեյութեանը: Ընկերներ, մեր համագումարներն այն նպատակը չունին միայն, վոր դաք այստեղ և միայն գործերի գրութեան մասին ճիշտ տեղեկութուններ ստանաք: Մեր համագումարները միևնույն ժամանակ մի-մի գպրոց են. դպրոց, վորտեղ սովորում ենք և մենք՝ կենարոնի աշխատավորներս և Դուք, տեղերի աշխատավորներդ: Համագումարների ընթացքում թե Ձեզ և թե մեզ համար պարզվում են բազմաթիվ հարցեր և հանգամանքներ: Մենք սովորում ենք Ձեր ունեցած փորձառութեանից, և մենք և Դուք ներկա համագումարի դասերը պետք է տարածենք գյուղացիութեան մեջ:

Ընկերներ, մեր կոոպերատիվները կազմակերպվել են տարբերային կերպով, և դա ցույց է տալիս, վոր դեռևս շատ աշխատանք կա կատարելու:

Ընկերներ, մի քանի խոսք էլ Ձեր և մեր հոգային որդանների փոխհարաբերութեանների մասին: Տեղերի աշխատավորները չպետք է խուսափեն մեր գալստական հոգային որդաններից, այլ աշխատեն փոխադարձ սերտ կապ և հարաբերութեան հաստատել: Միմիանց նկատմամբ ունեցած անտարբեր վերաբերմունքը լավ արդյունքների չի կարող բերել թե մեզ և թե Ձեզ: Դիմեցեք մեր հոգորդաններին և ստացեք նրանցից Ձեզ անհրաժեշտ խորհուրդները, յես հավատացած եմ, վոր մեր հոգորդաններն այնքան են տանել ու բարձրացել, վոր Ձեր բոլոր հարցերին կը կարողանան պատասխանել և այդ բանում Ձեզ չեն մերժի:

Բարի ճանապարհ Ձեզ բոլորից, Ձեր աշխատանքներին ցանկանում ենք հաջողութեան: (Ծափեր):

Համագումարի աշխատանքները վերջացած եմ հայտարարում:  
Վ Ե Ր Ջ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻՍՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉՍԿԱՆ  
ՁԵՎԵՐԻ ՄԱՍԻՆ.—

1. Գյուղկոոպերացիան արդեն ձեվակերպել է իր սկզբնա-  
կան ցանցը Հայաստանում: Կոոպերացիայի այս առողջ աճումը  
հետևանք է մեր գյուղատնտեսական արտադրութեան ընդհա-  
նուր բարձրացման, դրամական ռեֆորմի կիրառման և աղքատ  
ու միջակ գյուղացու տնտեսական ակտիվութեան:

Հայգյուղկոոպի առաջ ծառայած հետագա խնդիրներին մեկն  
է ամբողջովին ընդգրկել և խորացնել կոոպերատիվ շարժումը  
գյուղում:

2. Գյուղատնտեսական արտադրութեան կոոպերացման  
կազմակերպչական ձևերը (հողագործական ու աշխատավորական  
արտելները, կաթնատնտեսական ու սղանրագործարան, գյու-  
ղատնտեսական խառն ընկերութեաններ, կոմունաներ ու կոլլեկ-  
տիվներ և այլն) հանգիստում են ժամանակակից գյուղի սոցիա-  
լական շերտավորման՝ ներկա սղանրաններում աղքատ ու միջակ  
գյուղացուն կուրակի շահագործումից սրտապանելու լավագույն  
միջոցը:

Գյուղկոոպերացիայի ցանցի հիմնական մասնիկն է վարկա-  
յին գյուղատնտեսական ընկերութեանը, վորը իր վարկային և  
արտադրական ֆունկցիաներով խոշոր չափով նպաստում է գյու-  
ղատնտեսութեան բարձրացման և նրա կոոպերացման: Գյուղում  
ներկայում խմորվող սոցիալական շերտավորումն ավելի կը ձևա-  
կերպվի և կազմակերպ բնույթ կստանա Գյուղվարկի լայն կոոպե-  
րատիվ կիրառմամբ: Այդ տեսակետից միանգամայն ուղիղ է  
Գյուղկոոպիկենարոնի գիծը միացնելու վարկային ընկերութեանը  
Գյուղկոոպերացիայի սիստեմին:

3. Գյուղկոոպերացիայի սկզբնական ցանցի զարգացման հե-  
տևանքով՝ անհրաժեշտ է ստեղծել կոոպիտիվորների կազմա-  
կերպչական ու տնտեսական ղեկավար որգանը Հայգյուղկոոպ,  
վորը ամբացնելու է Կոմբլիշների հիմքերը և միացնելու է նրանց  
միմիանց հետ ամուր սղակով:

Հայգյուղկոոպը իր գործունեութեան ընթացքում ստեղծե-  
լու է այնպիսի նախապայմաններ, վոր կոոպերատիվները չկոր-  
ցնեն իրենց ինքնուրույն և սպակենտրոնացած բնույթագծերը և  
միևնույն ժամանակ ակտիվ մասնակցութեան տնկնուն գյուղա-  
տնտեսութեան ընդհանուր կոոպերացմանը: Հայգյուղկոոպ, կապ-  
վում է անմիջապես սկզբնական կոոպիտիվորի հետ՝ յերկաստի-

հան առավել յեռաստիճան վերելքով: Բազմաստիճան սիստեմի  
կիրառումի կրկնապատկելով վերագիր ծախսերը՝ առաջ կը բերի  
կոոպերացիայի կյանքում աննորմալ յերևույթներ:

4. Գյուղատնտեսութեան ընդհանուր կոոպերացման հետ  
զուգընթաց ձեակերպվում է հասունանում է գյուղատնտեսական  
ճյուղերի շրջանացման մասնագիտացման հարցը:

Հայգյուղմիութեան առաջադրվող խնդիրներից ամենակա-  
րեվորը՝ ստեղծել մոտիկ ապագայում որչեկտիվ և ֆինանսական  
այնպիսի հնարավորութեաններ, վոր կազմակերպված Գյուղ-  
կոոպերացիային կից՝ կաթնատնտեսութեան, գինեգործութեան  
և գյուղատնտեսական այլ ճյուղերի մասնագիտական կենտրոն-  
ներ՝ վերցնելով իրենց վրա միանման ֆունկցիաներ ունեցող  
կոոպերատիվները անմիջական ղեկավարութեանը: Հայաստա-  
նում ներկայումս գործող շրջանային միութեաններին («Պանիր-  
Միութեան» և «Մեղվապահան-Միութեան») խրախուսել ու  
աջակցել՝ վերածելու նրանց ապագայում մասնագիտական կենտ-  
րոնների Հայաստանի մասշտաբով:

5. Հայգյուղմիութեանը իր կազմակերպչական հիմնական  
կետը պետք է դարձնի Գյուղկոոպերացիայի սոցիալական կազմը,  
կոոպիտիվորների տնտեսական պատվանդանը մեր գյուղի աղքատ  
ու միջակ խավերն են: Կոոպերացիան գյուղացիութեան դասա-  
կարգային կազմակերպութեան է: Գյուղի բարձր խավերի, վեր-  
ջին տարիներում ուռճացած ելեմենտները տեղ չունին կոոպերա-  
տիվներում:

Հայգյուղմիութեանը ստանձին ու շարքութեանը պիտի  
դարձնի կոոպերացած մասսաների քաղաքական հասունութեան  
վրա, կոոպերացիայից դուրս պիտի չպրավեն, խորհրդային  
իշխանութեան անհարապատ և խորթ տարրերը:

6. Հայաստանի Գյուղկոոպերացիայի ցանցը անցկացնել  
առաջին տարվա ընթացքում տնվագն 100 տակոսով, ստեղծել  
որչեկտիվ հնարավորութեաններ, վոր կոոպերացման հասանքը  
տարածվի ներքևից, կոոպերատիվի կազմակերպման նախաձեռ-  
նումը պատկանի ղեկավարության տեղական ուժերին և կոոպերա-  
ցիան սնվի ու զարգանա տեղական միջոցներով: Հայգյուղմիութե-  
անի կազմակերպչական աշխատանքների խոշոր ասկոսը պետք է  
տարվի այն պայմաններում, վորտեղ Գյուղկոոպերացիան զեռ  
ևս չունի իր սկզբնական բլիշները, բայց վորտեղ ստեղծվել են  
կոոպերացման համար նպաստավոր նախապայմաններ:

7. Գյուղկոտակերացիայի սկզբնական միավորների և ֆոխոպկոմների միջև ստեղծել անտեսական ու կազմակերպչական ամենա սերտ կապ: Այս հանգամանքը մի կողմից ֆոխոպկոմին կը զարձնի ավելի ակտիվ դուրս կը բերի նրան սերեսական դրու-թյունից, իսկ մյուս կողմից նրան արամազրված նյութական միջոցները կը գործադրվեն մեր աղքատ գյուղացիության անտես-սությունները կոտակերացման գործում:

8. Ուժեղացնել Գյուղկոտակերացիայի կազմակերպչական և հրահանգչական ղեկավարությունը՝ դասնթացքների միջոցով պատրաստելով կոտակերատոր աշխատավորներին մի կարգ: Առանձին ու շաղրություն դարձնել կոտակերացիայի հանրամատչելի գրական-նության հրատարակման և տարածման վրա:

9. Գյուղկոտակերացիայի միավորներն ամբողջնելու և կոտակե-րացիայի ցանցը խտացնելու համար՝ առանձին ու շաղրություն դարձնել կոտակերատիվների ճկուն և կայուն ապարատի վրա. պա-հանջվող բարձրության վրա գնել կոտակերատիվ հաշվապա-հությունը—գործավարությունը:

10. Գյուղկոտակերացիայի ծավալման ու խորացման ամենա-հիմնական պայմանները նրա անտեսական և ֆինանսական բույան է: Կոտպմիավորները կամ բազմակեն և հաջողություն կունենան միայն այն դեպքում, յերբ հանվին ղլխավորապես իրենց նյութա-կան կայունության վրա, յերբ սակզեն իրենց կոտակերատիվ դրամազուխը: Գյուղկոտակերացիայի հիմնական միջոցները, բաժ-նեվճարներն ու մուտքի վճարներն են, վորոնց հաջող գանձումից և կախված կոտակերատիվի նպատակահարմար գործունեյությունը: Առանձին ու շաղրություն դարձնել բաժնեվճարի քանակի և միտ-քինակության վրա: Անընդունելի համարել բաժնեվճարի այն նորման, վոր քյասիր գյուղացու ուժից վեր է: Կոտակերատիվի բաժնեվճարի քանակը պետք է բերի ավյալ շրջանի անտեսական հնարավորությունից: Մյուս կողմից բաժնեվճարի ամբողջովին գանձումը կապված է անգամի դեպի կոտակերատիվը ունեցած արն-տեսական շահագրգռումից:

2. Անասնապահության և կաթնատնտեսության ասպարիզում

1. Հողային հարցի մասին.— Ի նկատի առնելով այն հանգա-մանքը, վոր հողային հարցը, թե խոտհարքներն ու թե արոտա-տեղերը հանդիսանում են այն ղլխավոր գործոնը անասնապահա-կան ու կաթնատնտեսական խնդրում ու նպատատում են վերջիննե-րիս գարգացմանը՝ ցանկալի է վոր հողարածինները առաջին

հերթին բավարարեն կազմակերպված գյուղացիությանը, իսկ յեթե այդ բաշխումները արվում են այն արտեյների նկատմամբ, վո-րոնք մանում են «Պանիր-Միության» մեջ, բաշխում կատարել «Պանիր Միության» ներկայացուցչի մասնակցությամբ:

2. Վարկային խնդրի մասին.— Ժողովը ցանկություն և հայտնում, վոր վարկային բնկերությունը յերկարացնի արված վարկի ժամկետը, բացի նոր վարկ պանիրներին համար 1 տարի ժա-մանակամիջոցով ու բացառապես տոկոսով, բացել նաև լրացուցիչ վճարումներ պանիրներին համար, վորով մեղմացվի ներկայիս տիրող վտային ճգնաժամը:

3. Ազնվացեղ կենդանիների հարցը.— Ժողովը վորոշում է, բացի այն միջոցներից, վոր կը հայթայթվի կոտավարության կողմից, «Պանիր-Միությունը» ի բճերթին հնարավորության սահմաններում պիտի բանալ ցուլանոցներ և հիմնի կոնարոյ-ասիստենտների կազմը:

4. Կուրսերի հարցը.— Գտնել անհրաժեշտ, վոր կաթնատնտե-տական շրջաններում լինեն մասնապետներ բարձր ստաժով, վո-րոնք ուղեցույց լինեն այդ գործին, իսկ արտեյների վարպետներին համար բանալ կարճատև կուրսեր:

5. Ելեկտրաֆիկացիայի խնդիրը.— Գտնելով ցանկալի յերե-վութ էլեկտրաֆիկացիայի խնդիրը, վորոշվում է բնդառաջել այն բոլոր պահանջներին, վորոնք բարձրացնում են կաթնատնտե-տական գործը:

6. Հաշվապահության հարցը.— Վորոշվում է, վոր բոլոր արտեյները ունենան հաշվապահ ու հաշվապահությունը տանեն միտեսակ ձևով: «Պանիր-Միությունը» պիտի պահի մեկ մաս-նապետ հաշվապահ՝ վորպես հրահանգիչ:

7. Արտահանության խնդիրը.— Գտնում է ցանկալի, վոր արտահանությունը կատարվի համապատասխան պետական որ-դանների միջոցով, իսկ գները վորոշել հիմնվելով ինքնարժեքի վրա, վորի համար վորոշում է հատուկ-կոմիսիա:

8. Մասնավոր մարդկանց սեփականություն կազմող շենքերի ու գործարանների հարցը.— Ի նկատի առնելով այն հանգամանքը, վոր մասնավոր մարդիկ շատ մեծ տոկոս են վերցնում իրենց գոր-ծարանների համար, վորոշվում է խնդրել Գյուղբանկին, բաց թողնել յերկարատև ու մեծաքանակ վարկ նման արտեյներին, վոր նրանք կամ գնեն այդ շենքերը կամ կառուցեն նորը:

9. Արտելի անդամ լինելու հարցը.— Ժողովը գտնում է, վոր

արտելի անդամ կարող են լինել, բոլոր այն քաղաքացիները, վորոնք ունին խորհուրդներում ձայնի իրավունք և չեն ոգտվում վարձու բանվորական ուժից իրենց տնտեսության մեջ, ի նկատի չառնելով նրանց անասունների թիվը:

3. Այգեգործության ասպարիզում

1. Նոր բնկերությունների կազմակերպության խնդիրը.—Ամեն կերպ աշխատել բոլոր այգեգործական շրջաններում կազմակերպել այգեգործական կոոպերատիվ բնկերություններ միանգամայն անկախ:

2. Կուրակային տարրերի չեզոքացումը.—Չգուշանայ ամեն կերպ, վոր նոր կազմակերպվող բնկերությունների մեջ մտադր չգործեն գյուղական կուրակները և սահմանափակ խորհրդային սահմանադրությամբ նախատեսված վոչ ցանկալի տարրերը, իսկ գոյություն ունեցող բնկերությունների շարքերից գուրս վտարել յեթե կան այդպիսիները:

3. Ավեր ու վայրենացած այգիների մշակություն.—Ի նկատի ունենալով Հայաստանի տափարակ շրջաններում այգեգործության անտեսական խոչոր նշանակությունը, միջնորդել ուր հարկն և բաց թողնելու յերկարատե վարկ վերականգնելու վերջին տարիների իրազարծությունների պատճառով անուշագրության մասնված ու ավերված այգիները:

4. Այգեգործական բնկերությունների վարկավորումը.—Հող տանել այգիների մշակության համար բաց թողնելու ժամանակին վարկ յուրաքանչյուր դեպքատինի համար առնվազն հիսուն (50) ոուր, վորպիսի գումարի վերադարձման ժամկետը պետք է լինի վոչ չուտ նոյեմբերի 15-ից:

5. Ինվեստարի խնդիրը.—Հնարավորության սահմաններում ձեռք բերել նորագույն տեսակի ինվեստար և մատակարարել բնկերություններին:

6. Այգիների բժշկություն.—Հայթայթել ժամանակին բուժիչ նյութեր կիրառելու պարտադիր բժշկման դեկրետը:

7. Ցուցադրական նորաձև այգիների հարցը.—Միջնորդել ուր հարկն և այգեգործական կենտրոնական վայրերում ցուցադրական այգիներ և պաշտաու ծառերի տնկարաններ ունենալու համար արամագրել հողամասեր:

8. Մասնագետ հրահանգիչների հարցը.—Ընկերությունների գինեգործությունը բացիոնալ հիմունքների վրա գնելու համար հրավիրել հատուկ գինեգործ հրահանգիչներ:

9. Ընկերությունների անկախ գործունեություն.—Առաջիկա տարվանից վարկավորել գոյություն ունեցող բնկերություններին հնարավորություն տալով նրանց ինքնուրույն կերպով վերամշակելու անդամներից ստացված խաղսյն ու այլ պտույնները կոոպերատիվ հիմունքներով, վորով բնկերությունները ազատված կլինեն կոմիսիոն ձևի աշխատանքներից:

10. Անուղղակի հարկի վերացում.—Միջնորդել ուր հարկն և հետաձգելու գինու անուղղակի (ակցիզ) հարկը մի գինեգործական շրջանից մյուսը տեղափոխելու դեպքում:

4. Մեղվաբուծության ասպարիզում

1. Մեղվաբուծության կարիքները.—Վորոշվեց մասնանշել մեղվաբուծության հետեյալ կարիքները:

ա) Անհրաժեշտ են հրահանգիչների կազմակերպչական աշխատանքի, հիվանդությունների դեմ կռիվելու, մեղվաբուծական պրոպագանդի և հրահանգչական ոգնության համար:

բ) Անհրաժեշտ է կազմակերպել մատակարարում մեղվաբուծական նյութերի, գործիքների և պարագաների, վորի համար հիմնել արհեստանոց-պահեստներ:

գ) Անհրաժեշտ է կազմակերպված կռիվ փթախտի դեմ:

դ) Ուժեղացնել Մեղվաբուծական կոոպերատիվների ցանցը:

յե) Կազմակերպել փորձնական կայաններ գասրնթացքներով:

զ) Մեղվաբուծական ձեռնարկներ և բրոշյուրներ հրատարակել:

2. Վարկի խնդիր.—Մեղվաբուծական կոոպերատիվներին բաց թողնել յերկարատե վարկ (Նտարուց ավելի) մեղվաբուծական արդյունաբերական ձեռնարկություններ հիմնելու համար, կարճատե վարկ բնկերներին գրամով և նյութերով վարկավորելու համար, վճարման ժամկետը նշանակելով վոչ չուտ քան դեկտեմբեր ամիսը՝ մեղրի բեալիցացիայի մոմենտը:

3. Կազմակերպչական խնդիրներ.—Պատասուժ մեղվաբուծական գործի կազմակերպումը և վարումը ամբողջովին վերապահվում է կոոպերատիվների գալտասական միության: Կենտրոնում կազմակերպվում է հատուկ յերբյակ կոոպկենտրոնին կից, վորը գործում է կոնտակտ Հողօրկոպատի հետ:

Պետական հրահանգչական կազմը գործում է այդ կազմակերպությունների գեկավարության տակ:

5. Գյուղատնտեսական խառն արտելների մասին.—

1. Անհրաժեշտ է մեզանում ել կիրառել Գյուղատնտեսական կոոպերատիվի, վերաբերյալ հրատարակած միութենական դեկրետի այն կետը, վերջով վերջվում է Հողօգտագործության և Գյուղատնտեսական կոոպերատիվների փոխհարաբերությունը:

2. Նոր կազմվելիք Գյուղմիությանը պետք է հանձնարարել, վերաբերյալ նա առանձին ու հատուկ ուշադրություն դարձնի գյուղատնտեսական գանազան ճյուղերի կոոպերատիվների կազմակերպման, դեկալարման ու վերահսկողություն վրա:

3. Նկատի առնելով այն հանգամանքը, վոր ջրային խնդիրը մասնավորապես և միլիոնատիվ աշխատանքը բնահանրապես, շարունակում է մնալ անբավարար դրության մեջ. սուր ու հրատապ, հերթական ու անհետաձգելի համարել միլիոնատիվ բնակչությունների կազմակերպումը:

4. Վերոմիջոցով մի շարք Գյուղատնտեսական կոոպերատիվ բնակչություններ վարկը տեղին ու ժամանակին չը ստանալուց բավականաչափ միասնեք են կրել, ուստի հարկավոր է կանոնավոր հիմքերի վրա դնել վարկավորման հարցը և վարկը տալ այնպիսի ժամկետով, յերբ կոոպերատիվների անդամները հնարավորության կունենան բյուրեղացիայի յենթարկելու իրենց բերքը:

5. Նախապատրաստական աշխատանքներ պահանջող Գյուղատնտեսական ճյուղերի հերթական կարիքների ու անհրաժեշտ ինվենտար ձեռք բերելու համար պետք է տալ յերկարատե վարկ:

6. Նկատի առնելով ծխախոտագործության դարգացման ծայր անհրաժեշտությունը, ցանկայի և հատուկ ուշադրություն դարձնել «Պոնտոս» բնակչություն վրա ու ճշտորեն կիրառել ժողկոմխորհի ս. թ. փետրվար 22-ի դեկրետը:

6. Վարկային գյուղատնտեսական բնակչությունների գործունեյության ասպարիզում

1. Յերկարատե վարկի կիրառման նպատակով, վոր հանդիսանում է գյուղացիական տնտեսության բարձրացման հիմնական մեթոդներից մեկը՝ անհրաժեշտ համարել ուժեղացնել յերկարատե նպատակավոր վարկավորումը՝ կենդանի ու մեռյալ ինվենտարով:

2. Արագացնել թույլ բնակչություններին յերկարատե վարկավորումը՝ հիմնական գրամագլխի ուժեղացման և շրջանառության միջոցների ավելացման համար՝ ըստ վորում նախորդ համաձայնության զալ՝ վարկը բաց թողնելու առանձին յենթացիկ հաշիվներով:

3. Ընդունելով Գյուղվարկի հիմքը գյուղացիական ազատ միջոցների կենտրոնացումն՝ անհրաժեշտ համարել. 1. Մուծումներն ապահովելու նպատակով տանել լայն ազիտացիա. 2. Ստեղծել սերտ կապ Փոխօգտմանի հետ՝ կենտրոնացնելով նրանց ազատ գումարները՝ վարկային բնակչությունների ձեռքին:

4. Ընկերության գործունեյությունը ծավալելու նպատակով անհրաժեշտ համարել. ա) կիրառել գրավակամների գործառուծներ և գործադրել այդպիսին չքավոր գյուղացիության վերաբերմամբ. բ) Ստեղծել փոխադրման և ուրիշ գործառուծներ. գ) Պետապահովագրական գործառուծների հանձնումը բնակչություններին. դ) Աստիճանաբար կենտրոնացնել՝ բամբակի ցանքերի կազմակերպումն և վարկավորումն ուժեղ բնակչությունների ձեռքին և յե) Վոչ կոոպերացած ազգաբնակչության վարկավորումը կատարել բնակչությունների միջոցով:

5. Վարկային Գյուղատնտեսական բնակչությունների գործունեյությունը կանոնավորելու համար անհրաժեշտ է.

- 1. Հետազայում խուսափել սպասողական գործառուծներից:
- 2. Ուժեղացնել միջնորդական ուղեբացիաները՝ մաստակարարելով գյուղացիական տնտեսությունը բարձրացնելու համար՝ արտադրողական նյութեր:

3. Գիմել միջոցների գործադրելու մուրհակային սխեմա:


4. Վարկերի վերադարձնել կամ հանդցնելը հարմարեցնել տեղերի բերքի հավաքման սեզոններին:

5. Ձրավոր գյուղացիության համար ստեղծել պայմաններ՝ աստիճանաբար մուծելու բաժնեվճարները՝ վաճառացնելով կեղծ յեղանակով բաժնեվճարների մուծումը:

6. Վերադիր ծախսերի կրճատումը նպագապես չափով:

7. Բանալ հաշվապահական գարնիթացրներ՝ թողնելով նախաձեռնությունը Հայգյուղկոոպին և Գյուղբանկին:

6. Գյուղատնտեսական բնակչությունների, Հայգյուղկոոպի և Գյուղբանկի կապն ամրացնելու տեսակետից անհրաժեշտ համարել. 1) Ստեղծել կենդանի կապ Գյուղկոոպի, Հայգյուղկոոպի և Գյուղբանկի միջև. 2) Ուժեղացնել հրահանգչական աշխատանքները՝ կիրառելով նաև բնակչություն վերատուգումներ. 3) Հրավիրել 3 ամիսը մի անգամ՝ Վարկային բնակչությունների ներկայացուցիչներին խորհրդակցության. 4) Տեղերին մաստակարարել կոոպերացիայի և ազրիկուրատայի վերաբերյալ գրավանություն. 5) Ներկայացնել տեղերից կանոնավոր կապով տնտեսա-



կան բնույթ կրող ինֆորմացիա. 6) Կոմիտիոն վարձատրությունները չկալաների կազմումը՝ հանձնելով այդ աշխատանքը Գյուղբանկին:

7. Գյուղատնտեսական գործիքները տարածման գործի կենտրոնացման համար անհրաժեշտ համարել. 1) Բանալ վարկային բնկերություններին կից գյուղատնտեսական գործիքների, մեքենաների, մանր գյուղացիական ինվենտարի և սերմերի պահեստներ. 2) Հանձնել Հողօդկոմիին ներկայումս գործող վարձու կայանները և սերմազտիչ սուենկոտերը վարկային ընկերություններին՝ հետագայում կազմակերպելու և զարգացնելու այդ գործը. 3) Բանալ վարկ ընկերություններին կից գյուղգործիքների և մանր ինվենտարի վերանորոգման համար՝ արհեստանոցներ:

**ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ**

Եջ	Տող	Տպված է	Պեսե է լիցի
17	11-րդ վերև	«Ցարմոկաշվիլի»	Ցարմոկաշվիլի.
20	4-րդ »	քվերկության	քվյարկության
20	16-րդ »	Զբաղմունքի ժամերը	բեկամենաի շարունակությունը. այսինքն վերև 12-րդ տողից
20	13-14-15-16-րդ տողերը վերև	հասվածը սեկցիաներ	ավելորդ են սխալմամբ շարած
25	15—16 »	պայքարել	վերջակետ չկա, 16 ըդ տողը 15-րդ -ի ուղիղ շարունակությունն է
28	19-րդ վերև	ողնության	ողնության:
28	11-րդ ներքև	յեղել և	յեղել է և
32	17-րդ վերև	դարձել	դարձրել
32	15-րդ ներքև	ունենք	ունենանք
34	2-րդ վերև	ե մեր	ե ուղիղ մեր
34	4-րդ »	տրվեր	տրվել
35	13-րդ »	Դիլիանի	Դիլիջանի
			16-րդ տողը պետք է լինի 17-րդը իսկ 17-րդը 16-ի տեղը.
35	16-րդ ներքև	հախիվ	հաշիվ
36	20-րդ »	պարագաներում	պարագաներով
38	8-րդ վերև	կենտրոն	կենտրոններում
38	11 ըդ ներքև	«Շրջանացման մասին»	«Շրջանացման մասին»
39	12-րդ վերև	«Թե գյուղկոպկենտրոնը	«Թե գյուղկոպկենտրոնն
39	11-րդ ներքև	վոր ճյուղին	ինչպիսի փոխարարբերությունների
39	18-րդ »	ինչ միջոցներ	վոր ճյուղին
40	3-րդ վերև	ուրիշը	ուրիշ
55	12-րդ ներքև	պրոտակցիայի արտահանության	պրոդուկցիայի արտահանությունը
58	5-րդ վերև	կյանքն	կյանքով
58	2-րդ ներքև	նպատկան	նպատակն



ԳԻՆՆ Ե 1 ՌՈՒԲ.



ՏՐԵՍԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրասեղ. 215բ.

Պատվեր 501

Տիր. 750

«Ազգային գրադարան»



NL0197825

